

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻ

(1850-1422 թթ.)



ՅԱՂԱԳՍ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՌԱԻՏ ԼՈՒՇՄՈՒՆՔ



ԱՌԱՔԵԼ ՍԻԻՆԵՑԻ
(1850-1422 թթ.)

**ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՌԱԻՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ**

2239

Աշխատասիրությամբ՝
Բանասիրական Գիտությունների Դոկտոր,
Փրոֆէսոր Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆԻ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ
1982 թ.



Printed by ALCO PRINTING CO. (213) 240-1412
Glendale, California



ԿՆՈՋՄ՝
ՀՈԳՈՒ
ՇՌԱՅԼՈՒԹԵԱՄԲ
ԱԼԻՍԱՅԻՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ուրախութեամբ կ'ողջունենք Փրոֆ. Լ. Գ. Խաչերեանի աշխատասիրութեամբ իրականացած այս հատորը: Ուրախութեամբ՝ որովհետեւ ԺԳ. եւ ԺԵ. դարերուն ապրող եւ գործող անմահն Առաքել Սիւնեցիի կեանքն ու վաստակը իր պատգամներով եւ փայլատակող իմացութեամբ կը յանձնուի մեր սերունդին ընթերցանութեան: Եւ ուրախութեամբ՝ որովհետեւ հմուտ բանասէրի եւ վաերական հաշագէտի տարիներու տքնաջան աշխատանքի պտուղը կը պսակուի հրատարակչական բարիքով:

Առաքել Սիւնեցի՝ միջնադարեան անյուսադրիչ հաշկական պաշտաններու մէջ՝ եղած է մանկավարժական, քերականագիտական թէ բանաստեղծական կարկառումներով նոտրագործուած փայլուն դէմք մը, որ կը յայտնուի Տաթևի համալսարանի փառքի օրերուն եւ իր մոմը կը վառէ անոր առաել շողարձակումին: Աշակերտն ու քնորդին ըլլալով Գրիգոր Տաթևացիին, կը ժառանգէ կարծէք անոր տաղանդը եւ ստեղծագործելու արժանիքները: Առաքել Սիւնեցի տիրապետած է գրչութեան եւ անոր չարակից արուեստներու եւ իր ամբողջ կեանքին իմաստը դարձուցած է իմաստասիրական, մանկավարժական եւ քերականական մեկնաբանութիւններն ու տաղերը եւ վերջապէս Փրոֆ. Լ. Գ. Խաչերեանին կողմէ ուսումնասիրուած եւ ընդարձակ ներածակնով մը ներկայացուցած «Յաղագս քերականութեան համառոտ լուծումը» աշխատանքը:

Բանասիրական լուրջ պրպտումներով, բաղդատութիւններով եւ պատմագիտական տուեալներով մեկնաբանուած քերականութեան այս ձեռնարկը, հպարտ ժառանգութիւն մըն է եւ վկայութիւն մը մեր տխուր ու դժնդակ ընկերային եւ քաղաքական պարագաներու տակ իսկ հաշարժէքներու հարստացման, հաշերէնի քննարկման եւ անոր գիտական կառոյցներու բժախնդրութեամբ ներկայացման:

Եւ Սիւնեցիներ՝ կրկնակիօրէն երանելի կը դառնան երբ ի հե-

նույն հաշվառության և առհասարակ ընկերա-մարդկային գիտություններում հանդէպ աճող ընդհանուր անտարբերության և հասկացողության ոգիի պակասին, հայության անցեալի ժառանգության խոր գիտակցութեամբ և իմացութեամբ վճռում վաստակատրներ՝ տժգունութեան մէջ կորսուած մեր դիմագիծը կը վերագտնեն ու կը յանձնեն մեզի: Այդ վաստակատրներէն է հաւատարմ հայ գիտնական Փրոֆ. Լ. Գ. Խաչերեան որ իր կեանքին իմաստը կը փնտռէ հաշվառական և բանասիրական պրպտումներու մէջ, մէկ առ մէկ հրատարակութեան յանձնելով մատենագրական արժէքներու վրայ սեւեռուող իր ուսումնասիրութիւնները:

Իսկ ի՞նչ է վաստակը անոր:

Շուրջ 85 տարիներ աշխատած է մանկավարժական և բանասիրական մարզերուն մէջ, Գիտություններու Ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հիմնարկին, Մաշտոցի անուան մատենադարանին, Երեւանի Պետական Համալսարանին և Կիրովականի մանկավարժական հիմնարկին մէջ: Մասնակցած է միջազգային գիտության համաժողովներու, 1961-ին Մոսկուա գումարուած Արեւելագէտներու 25-րդ միջազգային համագումարին և 1975-ին, Երեւանի մէջ գումարուած սովետ-ֆրանսական պատմաբաններու համագումարին, որ ֆրանսերէնով զեկուցած է «Հայ-ֆրանսական մշակութային հնագոյն կապերի ցոլացումը հայ ձեռագրական աղբիւրներուն մէջ» նիւթին շուրջ: 1962-ին, հրատարակած է ծաւալուն աշխատութիւն մը «Գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում» վերնագրով, 1966-ին, «Եսայի Նչեցի, վերլուծութիւն քերականութեան»-ը, 1972-ին, «Վարդան Արեւելցի, մեկնութիւն քերականի», իսկ 1973-ին, «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ» աշխատասիրութիւնները: Տակաւին ունի բազմաթիւ յօդուածներ և հաշվառական բնոյթի մենագրութիւններ որոնք լոյս տեսած են Հայաստանի պարբերականներուն մէջ:

Ունի հաշվառական անտիպ աշխատութիւններ պատրաստ տպագրութեան, որոնցմէ կարելի է յիշել հետևեալները.-

- 1.- Յովհաննէս Երզնկացի, հաւաքումն մեկնութեան քերականի:
- 2.- Յովհաննէս Ծործորեցի, համառատ տեսութիւն քերականի:
- 3.- Միջնադարի հայ քերականագիտական մտքի պատմութիւնը Ե-ժԵ դարերում:
- 4.- Միջնադարի հայ ձեռագրագիտութեան պատմութիւն:
- 5.- Հայ հեթանոսական պանթէոնը:
- 6.- Ուսումնագիտական կենտրոնների պատմութիւնը միջնադարեան Հայաստանում:
- 7.- Հայ դպրութեան տեսութիւնը:
- 8.- Պատմութիւն Դաւիթ Բէկի և պատերազմացն Ղափանու:

Ահաւասիկ այն միտքը որ մեզի կը ներկայացնէ Առաքել Սիւնեցին, մասնատրաբար անոր քերականական աշխատանքը:

Հայ լեզուն, որ ԺԵ. դարուն կ'ենթարկուէր տժգունացման, իբրև հետեանք մեր քաղաքական և ազգային կեանքի անփառունակ կացութեան, կը դառնայ խորաքնին ուսումնասիրութեան նիւթ. անմահ մատենագիրը ոչ միայն կը վերլուծէ, այլ անոր համապատասխան մանկավարժական և ուսուցողական առաջադրութեամբ կը պատրաստէ քերականական դասագիրք մը, որպէսզի գալիք սերունդները գիտականօրէն ծանօթանան մեր լեզուի կառուցին, ոգիին, առանձնաչատկութիւններուն և հրամայականներուն:

Երկար առէն ուրիշի վերագրուելէ յետոյ, վերջապէս ճշմարտութիւնը երեւան կու գայ և Սիւնեցիի անուան կապուած կը մնան իր բոլոր գործերը, որոնցմէ «Յաղագս քերականութեան համառատ լուծմունք»-ը գրի առած է իրեն ժամանակակից և պաշտօնակից ուսուցչապետին և ուսումնականներու թախանձանքներուն ընդառաջելով:

Իր ծառայողականութեամբ նուիրագործուող իբրև հայ հոգեւորական, Առաքել Սիւնեցի իմաստասիրական խոհերով կը հարստացնէ մեր եկեղեցական գրականութիւնը: Ոչ միայն կը յօրինէ գողորիկ, վեհաշուք, պերճմաստ տաղեր, այլև զանոնք կ'օժտէ եղանակներով, հանդիսանալով ոչ միայն մեծագոյն բանաստեղծը Տաթևեան Դըպրոցին, այլև միակը ստորաբաժաւ «Աղամգիրք» խորագրով ծանօթ վիպագրութեան մը, անոր բառերու և երաժշտութեան հեղինակութեամբ:

Այս գործը կը հասնէր այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդը կ'ապրէր հոգեկան տուայտանքներու մէջ, կորսնցուցած պետականութիւն, օտարի լուծին տակ կըսած, վերականգնելու երազը սրտին: Առաքել Սիւնեցի այդ վերապրումի վիճակը ներդրեց իր ժամանակակիցներու երակներուն մէջ և զանոնք մղեց կառչելու կեանքին:

Դժբախտութիւններով, տխուր շուշերով, կոտորածի և նահատակութեան բազում օրինակներով լեցուն մեր պատմութիւնը ան կը վկայագրէ լուսափողփ և խորաթափանց դէմքերով որոնք իրենց էութիւնը մատենաներու վերածած և հոգիները մագաղաթի, արհամարհած են թալանի, կողոպուտի և սպաննութեան ամէնօրեայ սպառնալիքները, արհամարհած են բնութեան և ընկերային պայմաններու դաժանութիւնը և ստեղծագործած են հարստացնելով այն ժառանգութիւնը որ գիր ու դպրութիւն դարձաւ ոսկեղարէն սկսեալ և որ անխախտ շարունակուեցաւ հակառակ կործանիչ ուժերուն:

Առաքել Սիւնեցիներու ֆիզիքական կեանքը արդէն այսօր կը վաչելէ երկնային թագաւորութեան օրհնութիւնը, իսկ հայ ժողովուրդը

կը վայելէ անոր հոգեմտաորական վաստակին ճանճնշող բարիքը: Եւ ի՞նչ կայ աւելի հպարտացուցիչ՝ քան ունենալ գիտակցութիւնը նման փառաւոր ժառանգութեան մը, տէր կանգնիլ անկողողպտելի թողոններու, որոնք մեր մութ ու յուսալիկիչ օրերուն իսկ եղան մխիթարութեան օթեւաններ, եղան հոգեկան հաչրենիքներ, կրթական դարբնոցներ եւ ազգային ինքնագիտակցութեան փարոսներ, լուսաւորելով մեր դարաւոր երթի ուղիները:

Այս հաստատ համոզումով կ'ողջունենք այս հատորը, շնորհաւորելով անոր բազմաշխատ եւ հմուտ հեղինակը եւ անգամ մը եւս օրհնելով արդար յիշատակը մեր սրբազան մատենագորին:

ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱՊԱԳԵԱՆ



ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Առաքել Սիւնեցու քերականական սոյն Մեկնութիւնը եղել է Տաթևի ուսումնագիտական բարձրագոյն կաճատի լեզուի եւ քերականութեան համալսարանական դասագիրքը, որը հեղինակուել է, ամենայն հաւանականութեամբ, 14-րդ դարի վերջերին: Այն գիտական շրջանառութեան մէջ է դրուում առաջին անգամ իբրեւ բնական բնագիր՝ ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով հանդերձ: Քննական բնագրի վերականգնողական աշխատանքների հիմքում են դրուած ինը ձեռագիր ընդօրինակութիւններ՝ իրենց տարընթերցումների համադրմամբ:

Աշխատասիրութիւնը կատարուել է Երեւանում, Մեսրոպ Մաշտոցի անուան Գիտահետազոտական ինստիտուտ - Մատենադարանում: Ձեռագիր վիճակում ծանօթացել են ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Աղայանը եւ բանասիրական գիտութիւնների թեկնածու Ա. Մուրադեանը, որոնք իրենց զբաւոր կարծիքներում բարձր գնահատելով մեր աշխատասիրութիւնը հայագիտութեան համար ներկայացրած կարեւորութեան ու ներդրումի տեսակէտից, դեռեւս 1974 թուականին յանձնարարել էին այն հրատարակութեան: Տարիների մեր քրտնաջան այս վաստակը ընդունուեց եւ ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի Հրատարակչական Մրագրով նախատեսուեց զիտական շրջանառութեան մէջ դնել 1975 թուականին, որը, տարաբախտաբար, հանգամանքների բերումով, չիրագործուեց:

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Գերաշնորհ Տ. Եփրեմ Ս. Եպսկ. Թապաղեանին, Պրն. Հրանդ Սիմոնեանին, Հայ Կրթական Հիմնարկութեանը եւ բոլոր այն բարերարներին, որոնք նախանձախնդիր լինելով հայ մշակոյթի մնայուն արժէքների ուսումնասիրման եւ հրատարակման նկատմամբ՝ սրտացաւ ջերմութեամբ ստանձնեցին հողածութիւնը եւ հովանաւորութիւնը սոյն աշխատասիրութեան լոյս բնծայման:

Բնադրական այս Յուշարձանը կը հետաքրքրի ինչպէս քերականագէտներին, փիլիսոփաներին, լեզուի ու գրականութեան ուսուցիչներին եւ ասպիրանտներին, արուեստի տեսարաններին, այնպէս էլ հայագէտներին առհասարակ:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Առաքել Միւնեցիին հայ մշակոյթի միջնադարեան ժամանակաշրջանի կարկառուն դէմքերից է: Լինելով 14-15-րդ դարերի հասարակական ակա-նաւոր ներկայացուցիչներից մէկը, նա միաժամանակ ծաւալել է ինչպէս դիտա-մանկավարժական, այնպէս եւ մատենագրական բեղուն գործունէու-թիւն:

Պէտք է նշել, սակայն, որ չափազանց կցկտուր են Առաքել Միւնեցու կենսագրական տուեալները ձեռագրական աղբիւրներում: Հնարաւոր է են-թադրել, որ նա ծնուած լինի 1350-ական թուականներին¹: Հէնց Առաքել Միւնեցու հեղինակած նշանաւոր «Աղամգրքից» յայտնի է դառնում, որ նրա հայրը եղել է Դաւիթը, մայրը՝ Մելիքը, մեծ մայրը՝ Մարիամը, եղ-բայրը՝ Բարսեղը,

«...Ձձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք

Եւ ամնախանձ օրինակողք,

Ձեռք իմ Դաւիթ յիշէմ մըտօք,

.....

Այլեւ ըզմայրն իմ ըզՄելիք,

Եւ զՄարիամ համն իմ քարիք...»²:

Տաթևի համալսարանի «Ռեկտոր», Երախտաշատ գիտնական եւ իմաս-տասէր Գրիգոր Տաթևացու վկայութիւնից պարզուած է նմանապէս, որ Առաքել Միւնեցին նրա մերձաւոր ազգականներից է եղել, հէնց քեռորդին.

«Նախ քեռորդույն իմոյ ըստ մարմնի,

.....

Առաքելոյ առաքիմի...»³:

Առաքել Միւնեցու իսկ հաւաստումներից ակներեւ է դառնում նաեւ, որ նա իր փայլուն ուսումնասիրութիւնը անց է կացրել Տաթևի համալսարա-նում՝ ունկնդրելով «ղասասաց» եւ «մեծ վարդապետ» նոյնինքն Գրիգոր Տաթևացուն.

«Ձմեծ վարդապետն իմ դասասաց,

Գրիգոր անուն՝ պատմառ քարեաց.

Յիշէմ յաղօսս ձեր առ Աստուած...»⁴:

1 Զ. Մ. Պոտուրեանը այս առնչութեամբ գրում է. Առաքել Միւնեցու «ծնունդը 1350-էն առաջ չենք կարող համարել» (տես «Առաքել Միւնեցի եւ իր քերթուածները», Վենետիկ, 1914, Վենետիկ, էջ ԺԴ):

2 Առաքել Միւնեցիի, Աղամգրք, Հրատարակեց Զ. Մկրտիչ Պոտուրեանը, Վենետիկ, 1907, էջ 229:

3 Ժեզարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Սաչիկեան, Երեւան, մասն Ա, 1955, էջ 73:

4 Աղամգրք, էջ 329:

Միւնեցիւն այլուր վկայում է նաեւ․

«Ձիւմ մեծ րարունապետն յոյժ իմաստնաւեր,
ՁԳրիգոր մեծ նրգնագրեաց աղբրսէք առ Տէր»⁵։

Տաթևի Համալսարանում Առաքել Միւնեցիւն Հմտացել է նաև «գրչութեան արուեստի» մէջ. նրա վաստակի արդիւնքն են մեզ հասած մի շարք գրչագրեր՝ մանրանկարներով զարդարուած։

Այս Համալսարանում էլ նա ստանում է «վարդապետական աստիճան» եւ իր հերթին դառնում նրա տաղանդաւոր գիտնական-դասասացներից մէկը՝ Հասնելով մինչև իսկ «րարունապետի» (իմա՝ «ուսուցչապետի») գերագոյն ճանաչման։

Ձեռագրական աղբիւրների հաւաստմամբ՝ Առաքել Միւնեցիւն յիշատակուում է միջնադարի հայ դպրութեան ամենականաւոր ու երախտաշատ ուսուցչապետների շարքում․ «(Յիշեսջիթ) քնդ սոցին զվարժապետն մեր վասն Գոշայ, Վարդանայ, Ներսէսի, Սարգսի, Եսայեայ, Տիրատու, Առաքելոյն, Գրիգորի․․․»⁶։

Առաքել Միւնեցու գիտա-մանկավարժական գործունէութեան արգասիքն են հէնց փիլիսոփայութեան, քերականութեան եւ մանկավարժութեան վերաբերեալ նրա հեղինակած ձեռնարկ-դասագրքերը, մեկնութիւնները եւ ուսումնասիրութիւնները։ Նրա հմուտ գրչին են պատկանում «Համառոտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դաւթի Անյաղթի», «Տեսութիւն բանիցն Դաւթի Անյաղթի» եւ, վերջապէս, ընթերցող հասարակայնութեանը ներկայացրած մեր սոյն «Յաղագս քերականութեան. համառոտ լուծմունք» աշխատութիւնները։

Յարակից փաստերի քննութիւնից հետեւում է, որ Տաթևի Համալսարանի վերջին «ռեկտորը», Մաթէոս Զուղայեցուց յետոյ, հանդիսացել է Առաքել Միւնեցիւն։

Գրիգոր Տաթևացիւն իր հեղինակած մեծարժէք «Քարոզգրքի» յիշատակարանում Առաքել Միւնեցուն բնութագրում է որպէս «ծննդամիտ երգարանի»․

«Նախ քնորդոյն իմոյ ըստ մարմնի,
Մընդամիտ երգարանի,
Առաքելոյ առաքինի»⁷։

Նշանակում է՝ Առաքել Միւնեցիւն երգահան-երաժշտի ստեղծագործական վաստակով ճանաչում գտած հեղինակութիւն է եղել, միաժամանակ յայտնի դարձել իբրև բանաստեղծ-տաղասաց։ Ասուածի առհաւատչեան են նրանից իբրև գրական ժառանգութիւն մեզ հասած բազմաթիւ գորտրիկ տաղերն ու ներբողները եւ դրանց պակը Հանդիսացող «Աղամգրքը», որը 1740 տողից բաղկացած ստուարածաւալ մի պոէմ է։ Առաքել Միւնեցու բանաստեղծական տաղանդի եւ տաղաչափական հմտութեան մասին բազմավաստակ գրականագէտ Մանուկ Աբեղեանը գրում է․ «Տաթևեան դպրոցի առաջնակարգ եկեղեցական բանաստեղծն է Առաքել Միւնեցիւն»⁸։ Մասնաւորելով «Աղամգրքի»

5 Անդ, էջ 229։
6 Ժե դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 297։
7 Անդ, էջ 73։
8 Մ. Աբեղեան, Երկեր, Հ. Դ., Երևան, 1970, էջ 421։

մասին իր գնահատականը, հետագոտողը միաժամանակ նշում է․ «Իսկ Առաքելի գործը մի առարկայական բանաստեղծութիւն է։ Այդ էր ժամանակի պահանջը։ Կրօնական ոգին շէր մեռած, բայց սառած էր․ մարդկանց հարկաւոր էին կրօնական բանաստեղծական գրուածներ, ոչ թէ նրանց վրայ ազդեցիկ են իրենց մեղքերն ողբալու համար, այլ գուարձութեամբ կարգալու եւ սովորելու»⁹։ Ձեռագրական աղբիւրներում նրա մի շարք տաղերը շփոթուել եւ վերագրուել են նոյն ժամանակաշրջանի տաղասաց-բանաստեղծ Առաքել Բաղիշեցուն¹⁰։

Համաժամանակեայ այս երկու բանաստեղծ-տաղասացների գրական ժառանգութիւնը զիտական գնահատութեան ենթարկելիս, Ղ. Ալիշանը գրում է․ «Այս Առաքել երիցագոյն է եւ հռչակաւոր քան դԲաղիշեցին՝ թէ՛ իբրև աղնուական եւ թէ՛ աւելի կոկիկ գրող․․․»¹¹։

Իսկ Առաքել Միւնեցու տաղերի ու քերթուածների հրատարակիչ, բանասէր Հ. Մ. Պոտուրեանը, փորձելով բացատրել այն իրողութիւնը, թէ ինչու՞ն քննական գրականագիտութիւնը երկար ժամանակ առհասարակ յանդգնութիւն չի ցուցաբերել նրա գրական ժառանգութեամբ զբաղուելու, նշում է․ «Առաքել Միւնեցի, որքան որ նշանաւոր բարձրաստիճան եկեղեցական մեղած է եւ բեզուն մատենագիր մը եւ քերթող մը, իր արժանաց համեմատ որոշ դէմքով մը ներկայացած չէ ո՛չ մեր դարուն եւ ո՛չ նախորդանուն․ ըստ իս, այս գրկանքը, որ կրած է Առաքել Միւնեցիւն՝ իր պատնետն ունի, այն է՝ որ գրեթէ իրեն ժամանակակից ուրիշ համեմուն մտեմնագիր մը եւ ֆերրող մը՝ կու գայ իր նախորդին դէմքի լոյսէն բան մը պակսեցնելու»¹²։

Առաքել Միւնեցիւն, դեռևս Գրիգոր Տաթևացու դպրապետութեան ժամանակ, տարիներ շարունակ Հանգիսացել է Տաթևի հոգեւոր-ուսումնադիտական կենտրոնի առաջնորդը․ այդ մասին Թովմա Մեծոփեցիւն վկայելիս նշում է նաև նրա «մեծ իմաստասէր» լինելու հանդամանքը, խօսքի վարպետ հանդիսանալու՝ հետորութեան բանարուեստում «հրեղէն» մտքով ճարելու նրա բացառիկ ընդունակութիւնը․ «Եւ էր սուրբ ուխտին (իմա՝ Տաթևի - Լ.Ս.) առաջնորդ հեգաոնդին եւ ընտրեալ յորովայնէ սուրբ եպիսկոպոսն Տէր Առաքել եւ մեծ իմաստասէրն Բուրորդին մեծ վարժապետին, որ ունէր զմիտն իբրև հրեղինաց, եւ էր սիրող ամենայն առաքինուքեանց»¹³։ Դրա վկայութիւնն են անշուշտ վերը մեր յիշատակած փիլիսոփայական մեկնողական երկերը՝ Դաւթի Անյաղթի աշխատութիւնների տեսական վերլուծութեանը նուիրուած։ Այլուր՝ նա կոչուել է նաև «հետոր»։

Առաքել Միւնեցու մահուան ստոյգ թուականի մասին տեղեկութիւն-

9 Անդ։
10 «Կիրք աստուածարանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարագրեալ ի Ղազարու աստուածարան վարդապետէ ձահեցոյ», Կ. Պոլիս, էջ 643, Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, Հ. Գ, էջ 452, Գ. Զարրիսաբեկեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 249, Ղ. Ալիշան, Հայագրութեամբ, Ա. Բնիկ պատմիչը Հայոց, Վենետիկ, 1901, էջ 126, Ե. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 1062 եւ ուրիշներ։
11 Ղ. Ալիշան, Հայագրութեամբ, Ա. մասն, էջ 126։
12 «Առաքել Միւնեցի եւ իր քերթուածները», Վենետիկ, 1914, էջ Ե։
13 «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծորեցոյ», Փարիզ, 1860, էջ 51։

Ինչպէս բնագրի հեղինակային «Առաջարան-Յիշատակարանից» ակնյայտորէն պարզուում է, Տաթևի համալսարանական այս ձեռնարկի անհրաժեշտութիւնը եւ կարեւորութիւնը խորապէս զգացել են Հէնց նոյն կրթական բարձրագոյն հաստատութեան ուսուցչապետ Եղեկիէլ Կապանեցիի եւ Շմաւոն ուսումնականը, որոնք եւ թախանձազին խնդրել են Առաքել Միւնեցուն՝ իրագործելու այն:

Այս աշխատասիրութեանը ձեռնարկելիս, Առաքել Միւնեցու նպատակն է եղել՝ ամբողջական ու համակողմանի պատկերացում տալ քերականութեան, իրբու գիտակարգի, մասին՝ ուսումնականներին մատչելի դարձնելու համար նրա գիտական խորութիւնն ու լեզուական իրակութիւնների բարդութիւնը՝ առանձնաշատութիւնների բացայայտումով: «Եւ մեք ըստ ջերմեռանդ խնդրոց նոցին արարաք լուծումն Քերականութեանս, - գրում է հեղինակը, - ի յորդորումն ուսումնականաց բանաւոր արհեստից, մատուակել բանաւոր մտաց զանազան հանճարս՝ ի մեկնութիւն Քերականութեանս պէսպէս յատկութեամբ պարզեալ, վասն զիրարալուր հասկանալոյ զխորութիւն քանից Բերականիմ»¹⁵:

Հարկ է նշել, որ քննարկուող երկի քննադատային կառոյցի տեսակետից Առաքել Միւնեցին, իրեն նախորդած քերական մեկնիչների նոյնաբնոյթ ձեռնարկների համեմատութեամբ, որոշակի ինքնուրոյնութիւն է հանդէս բերել: Քերականական բարդ դասերից մատուցումը առաւել զուրբնկալ եւ հեշտամարս դարձնելու համար հեղինակը հարց ու պատասխանի ձևով է շարադրել ամբողջ նիւթը, ըստ որում թրակացու ասոյթները ներկայացնելով իրբու քերականական հարցադրումներ, իսկ սեփական մեկնաբանումները՝ իրբու պատասխաններ: Նման մտեցումը, բնականաբար, թելադրուած է հեղինակի բաղամասայ մանկավարժական փորձով¹⁶:

Պօսելով քերականութեան լուրթեան ու քննութի մասին, Միւնեցին իր մեկնաբանութիւններում զարգացնում է հայնացքներ, որոնք ընդլայնում եւ խորացնում են քերականութեան բովանդակութեան ըմբռնման ու դերի բացայայտումը: Նա, որպէսզի առարկայական ձևով ըմբռնել տայ ուսումնականներին քերականութեան նպատակադրումն ու նշանակութիւնը, համեմատական զուգահեռ է անցկացնում բժշկութեան բնոյթի ու բժշկի դերի հետ: Եթէ բժշկութիւնը, յանձին բժշկի, քննում է մարդկային մարմինը եւ

ամէն կերպ պահպանում է նրա ներկայ առողջութիւնը՝ բուժելիս վերադարձնելով հիւանդ մարդուն իր նախկին կայտառութիւնը, այդպէս եւ քերականութիւնը «հոգու հիւանդութիւն» հանդիսացող մեր ներկայ տգիտութիւնը ուղղախօսութեան եւ ուղղագրութեան քննազատում բուժում է՝ վերադարձնելով մեզ «անցեալի մեր նախնիքի իմաստութիւնը», որով նրանք օժտուած են եղել, քրիստոնէական ուսմունքի պնդմամբ՝ դեռեւս «զբախտում» գտնուած ժամանակ: Տուեալ ղէպրում, ճիշդ է, Միւնեցին չի ըմբռնել լեզուի զարգացման բնապատմականութիւնը, սակայն որ ընդդուում է քերականութեան գործաւորի՝ լեզուի նկատմամբ կարգաւորիչ եւ ուղղիչ հանդիսանալու համեմատմանը բժշկութեան հետ զուգահեռի իր անցկացումով, դրանով իսկ արժէքաւոր տեսակէտ է յայտնած լինում: Այդ իսկ պատճառով, անկախ դարաշրջանի տուրքը հանդիսացող բերիական խառնուրդից՝ հարկ է նշել, որ Միւնեցու ընդհանուր հարցադրումը, ըստ էութեան, ընդունելի է¹⁷:

Իսկ քերականութեան, իրբու ուսումնակարգի, անհրաժեշտութեան եւ օգտակարութեան մասին իր տեսակէտը զարգացնելիս Առաքել Միւնեցին կարեւոր մի ընդհանրացում է կատարում, որ նախորդների մօտ չենք գտնում. եթէ իրենից առաջ հանդէս եկած հեղինակները քերականութեան քննութեան առարկան համարում էին միայն գրաւոր խօսքը, ապա Միւնեցին նկատի ունի ե՛ւ գրաւոր խօսքը, ե՛ւ, որ կարեւորն է, բանաւոր խօսքը: «զի քերականութիւնս է, որ գրանց ԲՆԳԵ՛ եւ գմատունս քանիմ եւ գգիրս»¹⁸: Ըստ որում նշենք, որ Միւնեցու մօտ պատահական հարցադրում չէ սա, այլ՝ սկզբունքային նկատառում, այդ պատճառով էլ տարբեր առիթներով նա մի քանի անգամ կրկնում է նոյն միտքը՝ սանելով. «Եւ քերականութիւնը - Լ.Պ» է, որ գրանց ուսուցանէ եւ գգիրն...»¹⁹: «Եւ սա (իմա՝ քերականութիւնը - Լ.Պ) է, որ գրանց ուսուցանէ եւ գգիրն...»²⁰: Նման համապարփակ ըմբռնողութեամբ՝ քերականութեան, որպէս գիտակարգի, ուսումնասիրած ոլորտը դառնում է ամբողջական ու սպառիչ:

Այս ընդհանուր տեսական բնութագրումից բացի, Միւնեցին մատնանում է նաեւ քերականութեան մասնաւոր միտուածութիւնը: Միւնեցու նման Միւնեցին գտնում է, որ քերականութիւնը քննում է հնչարտաբերումը («ձայնը») եւ գրաւոր լեզուն իր խօսքամասային միաւորներով, իսկ նպատակադրումով քերականութիւնը հետամուտ է բանասիրական վերլուծութեամբ բացայայտելու բառաձևերի ճշգրտութիւնը: Այս խնդրում Եսայի Նչեցին եւ Առաքել Միւնեցին միասնական տեսակէտ են պաշտպանում եւ ո՛չ թէ, ինչպէս ենթադրում է Փրոֆ. Գ. Ջահուկեանը, «Առաքել Միւնեցին ծառանում է Նչեցու յայտնած այն կարծիքի ղէմ, թէ «քերականութիւն է արհեստ յարագս գրոյ եւ ձայնի եղեալ՝ ենթակա[յ] ունելով զմատուես բանի»²¹: Բայց ի տարբերութիւն Նչեցու, Միւնեցին յայտնում է այն կարեւոր միտքը, որ քերականութիւնը, վերջին հաշուով, ելակէտ ունի գրաւոր խօսքը. քերականութեան, իրբու գիտակարգի, այս միտուածութիւնը ակնբախ է Միւնեցու համար՝ հաշուի առնելով նրա գործնական նշանա-

14 Ամենայն հասանակութեամբ՝ Առաքել Միւնեցին վախճանուած պէտք է լինի 1420-22 թուականներին: Հ. Մ. Պոստոլեանին յայտնի տուեալի համաձայն՝ «Երուսաղէմու մէջ թիւ 1248 Ոսկեփորիկի մը յիշատակարանը կ'ըսէ թէ Միւնեաց եպիսկոպոսն սէր Ստեփանոս որդի Պր. Սմբատի 1422-ին կը վախճանի» (Տե՛ս «Առաքել Միւնեցի եւ իր բերթուածները», Վննակի, 1914, էջ 4-2, ծանոթ. 1):

15 Առաքել Միւնեցու «Համառատ լուծմունք քերականութեան» երկից արուած քաղաւածքների յիման համար մատնացող ենք անում ամենուրեք մեր սոյն աշխատասիրութեան մէջ ներկայացուած քննական բնագիրը: Տուեալ ղէպրում ես՝ տե՛ս էջ 67):

16 Բնագրային նոյնաբնոյթ կառուցուածքը բնաւ էլ նորոյթ չէր անշուշտ մեր մատենագրութեան մէջ, այն կիրառութիւն էր գտել մեր զարթութեան դեռեւս ամենամոլոջ շրջանում՝ ամենաբազմազան ժանրերում: Սակայն քերականական մեկնողական երկերում առջինը Առաքել Միւնեցին է կիրառել կատիփոգիային այդ եղանակը:

17 Տե՛ս սոյն աշխատ., էջ 70:
18 Անց, էջ 73-74:
19 Անց, էջ 74:
20 Անց:
21. Գ. Ջահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954, էջ 302: Ընդգծումը մերն է:

կուժիւնը առանձնապէս զրջութեան արուեստի զարգացման առումով՝ զուգադրենք այս երկու քերականների ստոյժները:

Առաքել Սիւնեցի

«Զի՞նչ է քերականութիւն կամ դիտումն մտրին, այսինքն՝ գրոյ եւ ձայնի: Զի քերականութիւնն սկզբն գգիրն ունի, եւ կատարումն՝ գուրդութիւնն (Սոյն աշխատ., էջ 70):

Նսայի Նչեցի

«...Զի՞նչ է քերականութիւն. քերականութիւն է արիստ յաղագս գրոյ եւ ձայնի եղեալ՝ եմբակայ ունելով գմտունն քանի իսկ կատարումն՝ գուրդութիւնն մոցին» (Նսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, 1966, էջ 55):

Վերը բերուած զուգադիր հատուածների քննական համեմատութիւնից չի ըլտում նաեւ այն գիտողութիւնը Փրոֆ. Գ. Ջահուկեանի, որ, իբր, «Առաքելը դէն է նետում Նչեցու սահմանման այն մասը, որտեղ քերականութեան բնութեանն ճիշտ էին համարում գիրը եւ ձայնը՝ քերականութեան բուն բնագաւառը համարելով խօսքի մասերը»²²: Ընդհակառակն, այս հարցում եւս Սիւնեցին միանշանակն համաձայն է Նչեցու յայտնած տեսակէտին, քանի որ ինքը եւս քերականութեան նպատակը («գիտումն նորին») համարում է գիրը եւ «ձայնը», միայն թէ առաւել ընդարձակելով քերականութեան ուսումնասիրած ոլորտը՝ ընդգրկում է նաեւ բանաւոր խօսքը, ինչպէս վերը ցոյց տուցինք:

Սիւնեցին պարզութիւն է մտցնում նաեւ Մովսէս Քերթոզի առջ քաշած այն դրոյթում, ըստ որի «քերդողութիւն է առասպելավարժութիւն»²³: Թէեւ իր սկզբնաղբերը չի յիշատակում Սիւնեցին, բայց պէտք է ենթադրել, որ ձեռքի տակ է ունեցել կամ Մովսէս Քերթոզի Մեկնութիւնը, կամ էլ միջնորդաւորուած ձեւով է օգտուել Մագիստրոսի կամ Յովհաննէս Երզնկացու (Պլուզի) աշխատութիւններից: Ասուածը ապացուցելու համար զուգադրենք համապատասխան հատուածները.

Առաքել Սիւնեցի

«...Պարտ է գիտել, թէ վասն է՞ր առասպելաբանութիւն կոչի սա... Զի որպէս հիւսնութիւնն բաժանի ըստ տեսակաց՝ է՛, որ արտ գործէ, եւ է՛, որ սամար շիճէ, եւ է՛ որ սայի կունդ, եւ է՛, որ ջրաղացի կունդ եւ այլն, այսպէս եւ սա ըստ մասին բաժանի ըստ գանգան իրաց ինչ եւ ձայնն ձայնն ընդունի անուանակոչութեան» (Սոյն աշխատ., էջ 74):

Մովսէս Քերթոզ

«Քերդողութիւն է առասպելավարժութիւն, զի որպէս հիւսնութիւն բաժանի ըստ տեսակաց, է՛, որ արտագործ է, է՛, որ սամար շիճէ, այսպէս եւ սա ըստ մասին բաժանի, ըստ գանգան իրաց ինչ, եւ ձայնն ձայնն ընդունի անուանակոչութեան» (Ն. Աղոնց, էջ 159):

Ինչպէս նկատելի է, սկզբնաղբեր ծառայած Մովսէս Քերթոզի ձեւակերպումից հետեւում է, որ քերականութիւնը նոյնն է, ինչ առասպելավարժութիւնը կամ առասպելաբանութիւնը, որպիսի ըմբռնումը, սակայն, տեղիք կը տար թիրաքմանների անշուշտ: Միայն Սիւնեցու հետագայ ճշգրտամար արդէն հասկանալի է դառնում, որ «քերդողութիւն է առասպելա-

22 Անդ, էջ 303: Ընդգծումը մերն է - Լ. Պ.:
23 Н.Джонц, Дионисия Фракийский и армянские толкователи, Петроград, 1915г., էջ 159:

վարժութիւն» ձեւակերպումը ոչ թէ սահմանման արժէք ունի, այլ՝ քերականութեան ուսումնասիրած առարկայի որոշման: Այդ պատճառով էլ Սիւնեցին զգուշացնում է՝ «ո՛չ թէ առասպելաբանութիւն է քերականութիւն...»²⁴ Չէ՞ որ ինչպէս ստուգապատում, այնպէս էլ առասպելապատում հաղորդումները, ասում է Սիւնեցին, կարող են իրացուել կամ բանաւոր, կամ գրաւոր եղանակներով, իսկ բանաւոր եւ գրաւոր խօսքը, իբրեւ հետազոտման առարկայ, ամբողջութեամբ քերականութիւնն է ընդգրկում, ուստի եւ միայն ա՛յն իմաստով քերականութիւնը «առասպելավարժութիւն» կամ «առասպելաբանութիւն» է: Այլ կերպ ասած՝ քերականութեան առարկայով էլ մարմնաւորում կամ կերպաւորում է առասպելը: Սիւնեցին այդպէս էլ գրում է. «...Ամենայն բան՝ եթէ՛ ճշմարիտ պատմութիւն է եւ եթէ՛ առասպելաց պատմութիւն՝ գրով եւ բանի լինի: Եւ քերականութիւնն է, որ գրանն եւ գգիրն բնէ, վասն որոյ եւ առասպելաբանութիւն սորին բանի լինի, եւ վասն ա՛յն սսեմ առասպելաբանութիւն»²⁵:

Բայց կայ եւ ընդհանուր հարցադրում՝ ինչպէս Մովսէս Քերթոզի, այնպէս եւ Առաքել Սիւնեցու մօտ, որ տրուած է «հիւսնութեան» հետ զուգահեռի անցկացմամբ. եթէ հիւսնութիւնը, նայած մշակած առարկայի, տեսակների է բաժանուած՝ ընդունելով առաւել նեղ մասնագիտութիւնների գանազան անուանումներ, ինչպէս՝ «աթոռագործ», «տաճարագործ» եւ այլն, ապա քերականութիւնը եւս «տարբեր տեսակների» է բաժանուած համաձայն հետազոտած առարկայի. եթէ առասպելաբանութիւնն է քննում՝ քերականութիւնը կը շուրջում է «առասպելաբանութիւն», եթէ գրականութիւնը կամ վիպասանութիւնն է ուսումնասիրում՝ «գրականութիւն» կամ «վիպասանութիւն» է համարուած եւ այլն: Հէնց այս նկատումով էլ գրում է Սիւնեցին. «...եւ ի գանգան տեսակաց սորա (ի՞մա՝ քերականութեան - Լ.Պ.) մին մասն է առասպելաբանութիւնն»²⁶, քանի որ այլ քերականներ եւս (ինչպէս՝ Գրիգոր Մագիստրոսը²⁷) ընդունում են, որ «միեւնոյն է գրականութիւն եւ քերականութիւն»²⁸:

Նկատենք, սակայն, քերականութեան եւ նրա հետազոտած առարկայի նոյնացումը տեսական լուրջ սխալ է, որ բացատրելի է անշուշտ պատմական տուեալ ժամանակաշրջանի գիտական ըմբռնողութեան մակարդակով: Բայց եւ այնպէս Սիւնեցին յաղթահարում է այս խոցելի հայեցակէտը եւս: Այդ առումով քննութազրական է նրա հետեւեալ արժէքաւոր միտքը: «...Ամենայն ինչ, որ բանի պատմի՛ թէ՛ ճշմարիտ խօսք, թէ՛ առասպելք, այն ամենայն քերականութեան կոչին, եւ ո՛չ թէ միայն առասպելաբանութիւն է սա»²⁹: Այն հանգամանքը որ «քերականութեան» բառածեր սեռական հոլովով է կիրառել այստեղ հեղինակը, բնաւ էլ պատահական չէ: Սիւնեցին դրանով ոչ թէ հաւասարութեան նշան է դնում քերականութեան եւ առասպելաբանութեան, քերականութեան եւ գրականութեան միջեւ՝ որպէս համարժէքների, այլ պարզապէս վերաբերութեան կամ պատկանելութեան գաղափարն է ընդգծում. այսինքն առասպելաբանութիւնը, գրականութիւնը,

2239

24 Սոյն աշխատ., էջ 77:
25 Անդ, էջ 74:
26 Անդ, էջ 77:
27 «Անուն իսկ քերականութիւն գրականութիւն ասի ըստ Հովներոսի», տե՛ս Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 293:
28 Սոյն աշխատ., էջ 75:
29 Անդ, էջ 77:

վիպասանութիւնը եւ այլն «քերականութեան արուեստին» վերաբերողներ են դիտուում: Սա սկզբունքային նոր մտեցում է անշուշտ, որ ճշգրտութիւն է մտցնում Հարցարժան մէջ:

Այս Հարցի շուրջ Միւնեցու Հայեացքների Համադրումից ու քննութիւնից պարզուում է նաեւ, որ հեղինակը քերականութեան հետազոտած աւարկայի մասին ունի երկակի ըմբռնում՝ լայն եւ նեղ առումներով. ըստ այդմ, լայն առումով՝ քերականութեան հետազոտած աւարկան է լծգում ամբողջութեամբ՝ իր դրսեւորման ինչպէս բանաւոր, այնպէս եւ գրաւոր իրացումով. նեղ առումով՝ խօսքի մասերի բնութիւնը՝ խօսքի շղթայում զրանց ստուգադոյն եւ անթերի կիրառման հմտութեամբ:

Այս բոլորից հետեւում է, որ վերը բերուած փաստարկներում Միւնեցին բացառապէս նկատի է ունեցել քերականութեան հետազոտութեան աւարկան իր ամենալայն ոլորտով, որ հանդիսանում էր ինչպէս գրականութիւնը, այնպէս էլ առասպելաբանութիւնը:

Իսկ նեղ առումի մասին Միւնեցին գրում է. «Դարձեալ՝ քերականութիւն է արհեստ՝ ենթակայ ունելով գմատուն քանիւ, որ ի կատարումն եւ յուղղութիւն ամէ զլծգու»³⁰: Նեղ առման ղէպքում, ինչպէս տեսնում ենք, քերականութիւնը սահմանուում է միաժամանակ իրրեւ զիտութիւն («արհեստ»):

Հէնց այս նեղ առման առնչութեամբ է, որ Միւնեցին յաղթահարում է քերականութեան եւ նրա աւարկային նոյնացման խոտելի տեսակէտը, միանգամայն ճիշտ կերպով պնդելով, որ քերականութիւնը հմտութիւն է՝ գիտական նախադրութեան վրայ խարսխուած: Այս առթիւ Միւնեցին, համաձայնելով Դաւթի հետ³¹, քննադատում է այն Հայեացքը, ըստ որի բանականութեան «նրիւն» ու երակէտը մարդկային յօգաբաշխ ձայնն է, քանի որ զրա միջոցով է իրացում խօսքը, հաղորդում գրոյցն ու պատմութիւնը. «Ոմանք ասացին, թէ նրիւն եւ սկիզբն բանականութեանս ձայնն է, – գրում է Միւնեցին, – զի նովաւ լինին վայելչութիւնք ամենայն աշխարհիս, այսինքն՝ խաւք եւ քան եւ զրոյց եւ պատմութիւն եւ այլն»³²: Այս տեսակէտի ջատագովները, ըստ հրեւոյթին, նոյնացրել են «բանականութեան» դրսեւորման լեզուական ձեւը՝ նրա բովանդակութեան հետ, որ տարբեր է անշուշտ մտածողութեան ձեւաւորման ու արտայայտման լեզուական թաղանթից-ձայնը, կամ աւելի ստոյգ՝ յօգաբաշխ հնչիւնն ու հնչիւնախումբը մտածութեան դրսեւորման նրիւնական տարրն է, որով հնարաւոր է դառնում մտքերի փոխանակութիւնը կամ հասարակական հաղորդակցումը: Միւնեցու լեզուաբանական միանգամայն ճիշտ ըմբռնողութեամբ՝ չի կարելի չգիտել ու նոյնացնել մտածողութեան ձեւաւորման ու դրսեւորման դեր կատարող լեզուաթաղանթը՝ «բանականութեան» հետ, որը պարփակուած է նրանում:

Միւս կողմից՝ Միւնեցին տարբերում է ընդհանրապէս ձայնը յօգաբաշխ հնչիւնից: Միւնեցու համոզմամբ՝ քերականութեան այն սեսաբաններն են ճիշդ, որոնք զտնում են, որ ամէն արտաբերուող ձայն զեռես բառակն արժէք ունենալ չի կարող, այլ միայն ու բացառապէս՝ յօգաբաշխ հնչիւնը կամ հնչիւնների համակցութիւնը, որը որեւէ իմաստ է արտայայտում: Միւնեցին բաժանում է նրանց այն տեսակէտը, որ եթէ քերականութեան

նրիւն եւ երակէտը գիրն է (նաեւ բանաւոր խօսքը), ապա բանականութեան նրիւն եւ երակէտը ոչ գիրն է, ոչ էլ ձայնը. «Իսկ այլք ասեն, թէ ի լոճեւ նոյն է գրականութիւն եւ քերականութիւն, բայց ոչ՝ ձայնն է նրիւն եւ գրականութիւն, եւ ոչ՝ գիրն»³³: Բնականաբար հարց է ծագում՝ ինչո՞ւ: Եւ Միւնեցին բաւարարում է պատասխանելով, թէ ձայնի տեսութիւնը բնափիլիսոփայի քննութեան ոլորտին է պատկանում, իսկ գիրը՝ ստանձին բնոյթ ունի, ուստի եւ երկուսն էլ բանականութեան «նրիւն» լինել չեն կարող. «Ջի ձայնն բնական իմաստասիրացն է քննելի, իսկ գիրն ստանձին քննութիւն ունի յիրում տեղոյն...»³⁴: Իսկ եթէ այդ այդպէս է, ապա ո՞րն է, ըստ Միւնեցու, բանականութեան «նրիւն»: Նա տուեալ ղէպքում, տարբարատարբար, շրջանցում է այս հարցը եւ զրա փոխարէն քննում է քերականութեան «նրիւն»՝ յայտնելով այն Հայեացքը, որ քերականութեան առաջացման հիմքը եւ նրա էութիւնը լեզուական իրակութիւնների «Հմտութիւնն» է. «Ապա ուրեմն ձայնն եւ գիրն ոչ է նրիւն քերականութեանս, այլ հմտութիւնն է նրիւն»³⁵: Սակայն այս «Հմտութիւնը» նման չէ միջնադարում տեսութեան բնագաւառում ընդունուած կամ ճանաչուած «Հմտութեան», այլ նոր բովանդակութեամբ վերաիմաստաւորման է ենթարկուել այն Միւնեցու, իսկ նրանից առաջ՝ այլ քերական մեկնիչների կողմից:

Բանն այն է, որ «Հմտութիւնը» ճանաչողութեան բոլոր տեսակների մէջ, որ ընդունուած էր միջնադարի հայ դպրութեան տեսութեան մէջ, ամենատարիներն ու նախնականն է համարուում: Ըստ այդմ ճանաչողութեան առաջին տեսակը հանդիսացող «Հմտութիւնը» մասնուկի հրեւոյթներին անպատճառական ապրիորի իմացութիւնն է: Այդպէս էլ գրում է Միւնեցին. «զի Հմտութիւնն ոչ է ընդհանուր գիտութիւն, այլ՝ մասնաւոր եւ առանց պատճառի»³⁶: Նման ճանաչողութիւնը չափազանց մակերեսային է՝ հիմնուած լինելով եզակի փաստի իմացութեան փորձի վրայ: Աւելին. նոյնիսկ առանձին տեսաբաններ «Հմտութիւնը» հասկացել են իրրեւ բնագոյնի զգայութեամբ ձեռք բերուած սովորութային ընկալում եւ վերարտագրում, հետեւաբար եւ «անբան»՝ ոչ իմացական, անգիտակցական բնոյթի. «Ջի անբան կենդանիքն Հմտու են բնութեամբ իրաց ինչ, զի որպէս ուղտն զգազն ուտ է եւ զմաղձն ձգէ, այսինքն՝ զհոսն, եւ կատուն՝ խոտ, եւ շունն՝ սէզ, եւ առիւծն՝ կապիկ, եւ կապիկն՝ զգորտն, եւ ոչխարն՝ գաւձն եւ այլն, ապա ուրեմն Հմտութիւնն զմեզ յանբանութիւն տանի, – ասեն ոմանք»³⁷, – գրում է Միւնեցին: Բայց մեր հեղինակը վճռականորէն մերժում է «Հմտութեան» նման ըմբռնումը քերականութեան նկատմամբ տարածելիս՝ արգարացիորէն պնդելով, որ քերականութեան համար թրակացու կիրառած «Հմտութիւն» (εμπειρία) եղբ-հասկացութիւնը «քանական»՝ իմացական-գիտակցական նշանակութիւն ունի. «Այլ աստ Հմտութիւնն զբանաւոր իմաստն ասէ»³⁸, – աներկմիտ որոշակիութեամբ յայտարարում է նա:

Երբ Միւնեցին անզրպառնում է թրակացու այն կանխադրոյթին, ըստ որի քերականութեան բաղկացուցիչ վեց բաժիններից մէկը «զատումն քեր-

30 Անդ, էջ 76:

31 Տե՛ս ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 82:

32 Սոյն աշխատ., էջ 75:

33 Անդ:

34 Անդ:

35 Անդ:

36 Անդ, էջ 76:

37 Անդ:

38 Անդ:

թածաց» է, չափազանց ուշադրաւ մտքեր է զարգացնում քերականութեան գիտական բնոյթը բացայայտելու առումով: Միւնեցին առաջին հերթին մեկնաբանում է «դատել» բառի քերականական ըմբռնումը՝ համարժէք համարելով այն «քննել» բայի իմաստային բովանդակութեանը, որից էլ հետեցրելով է՝ առհասարակ լեզուա-քերականական իրականութիւնների բնական վերլուծութեան օգտակարութիւնն ու անհրաժեշտութիւնը քերականութեան բաղկացուցիչ բոլոր վեց բաժինների համար էլ. «Նախ՝ զի դատելն «քննել» սակ, եւ քննութիւն պիտանացու է յամենայն մատունսն»³⁹: Աւելին. բնական մտեցումը բանական էակներին է յատուկ, բնորոշ, եւ ո՛չ՝ «անբան» արարածներին, այդ իսկ պատճառով ոչ միայն քերականութեան, այլեւ միջնադարում ընդունուած բոլոր չորս գիտակարգերի («ի չորս արհեստ») առաջացումը աներեւակայելի է, իրաւացիորէն պնդում է Միւնեցին, առանց հետազոտութիւնների քննական ըմբռնողութեան, հետեւաբար՝ գիտութիւնների բնական ըմբռնողութիւնը, ըստ այդմ, ընդհանրական եւ բացարձակ պահանջ է. «Երկրորդ՝ զի բնական բանականացս է, եւ ո՛չ՝ անբանից: Իսկ չորս բանական արհեստս ամենայն քննութեամբ կատարի, եւ ո՛չ՝ անբանաբար, վասն որոյ սակ «դատումն քերթածաց», այսինքն բնութիւն իմաստաւիրացն»⁴⁰: Միւնեցին այնքան բարձր է գնահատում երեւոյթների քննական ըմբռնողութիւնը, որ այն բնութագրում է մինչեւ անգամ իբրեւ «ստուտածային շնորհ», ուստի եւ քերականութեան ամենակարեւոր առանձնայատկութիւնը բաղկացուցիչ միւս բոլոր բաժիններից՝ նրա քննականութիւնն է համարում. «Ձի միայն զքննելն եզ առաջի մեզ Տէր, սակելով՝ «Քննեցէ՛ք զզիրս եւ տեսէ՛ք», վասն որոյ սա առուել է, Քամ զայլ հինգ մատունս»⁴¹:

Ներածութեան վերջին տեսական հարցադրումը այն է, թէ՛ ինչ փոխյարաբերութեան մէջ է քերականութիւնը, իր հետազոտած առարկայի ենթակայութեան կամ ստորադասման տեսակէտից, այլ գիտութիւնների նկատմամբ: Արդեօ՞ք միւս գիտութիւններն են ստորադասուում իրենց «նրեթով» քերականութեանը, թէ՞, ընդհակառակն, քերականութիւնը իր «նրեթով» ստորադասուում է միւս գիտութիւններին՝ դրանք պարուրելու, կերպաւորելու կամ առարկայացնելու համար: Տուեալ դէպքում «նրեթ» հասկացութիւնը ըմբռնում է ոչ թէ՛ առաջացման հիմքի կամ բաղկացութեան առումով, այլ հետազոտած առարկայի իմաստով: Ժամանակին տեսական կարեւորութիւն ունեցող այս խնդիրը Միւնեցին լուծում է յօգուտ այն բանի, որ քերականութիւնը իր հետազոտած առարկայով նիւթ է ծառայում միւս բոլոր գիտութիւնների համար. ըստ որում հարցի նման հանդուցալուծման համար Միւնեցին ելնում է այն բացայայտ իրողութիւնից, որ քերականութիւնը իր քննութեան տեսադաշտում ունի ինչպէս բանաւոր, այնպէս եւ գրաւոր բոլոր մտածութիւնները, այն է՝ լեզուն իր բոլոր զրսեւորումներով: Այս առնչութեամբ նա գրում է. «[Պարտ] է զիտել, թէ սա՞ (իմա՞ քերականութիւնը - Լ.Խ.) է նրեթ եւ ենթակայ այլ իմաստասիրութեանցն, թէ՞ նոքա են ենթակայ քերականութեանս, - ա՛յս է. զի սա՛ է նիւթ եւ ենթակայ ամենայն իմաստասիրութիւն բանիւ լինի եւ գրով. եւ սա՛ է, որ ունի գրանն եւ գգիքն, վասն որոյ սանն՝ քերականութիւն է նիւթ եւ ենթակայ ամենայն իմաստասիրութեան»⁴²:

Առաքել Միւնեցին խօսում է նաեւ իր օգտագործած սկզբնաղբիւրների մասին, բայց ոչ լրիւ: Նա գրում է. «Արդ, երկու մեկնիչ կայ ի գիրքս յայս. առաջինն Դաւթի մեկնածն է, եւ երկրորդն՝ Ստեփանոսին Միւնեաց, որ ի վայոյ ձորն նահատակեցաւ»⁴³: Սակայն բնագրագիտական մեր քննութիւնից ակնյայտորէն պարզում է, որ հեղինակը, բացի զբանից, աներկբայորէն օգտուել է Դաւթի Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկից, այլեւ Եսայի Նչեցու աշխատասիրութիւնից, ինչպէս վերը մի քանի առիթներով ցոյց տուցինք, եւ այլ աղբիւրներից:

Ինչ վերաբերում է քերականութեան հիմնաղբիւրների եւ նրանց ապրած ժամանակաշրջանի որոշմանը, ապա Միւնեցին լիովին համաձայն է Դաւթի Անյաղթի⁴⁴ եւ մասնաւորապէս Եսայի Նչեցու⁴⁵ հաղորդած տեղեկութիւններին՝ առանց նոր բան աւելացնելու իրենից առաջ արդէն ստուածին:

Իսկ քերականութեան առաջացման ու ձեւաւորման գործում այլ գիտութիւնների հետ ունեցած դերի ու նպաստի մասին իր շարադրանքում Միւնեցին յենուում է Դաւթի յիշեալ աշխատութեան վրայ՝ իբրեւ հիմնաղբոյթի: Ինքը եւս գտնում է, որ քերականութիւնը առաջացել է երաժշտութիւնից, քանի որ քերականութեան, ինչպէս եւ երաժշտութեան, նիւթը ձայնն է: Սակայն հարկ է նշել, որ «ձայն» սակով մի դէպքում Միւնեցին ըմբռնում է հնչոյթականագիտութիւններով արտայայտուող յօդաբաշխ բառը, միւս դէպքում առուել ընդհանուր՝ ձայնաեղիւժումների յարաձիգ հատուածների ալիքաւորումը մեղեդիական երանգաւորմամբ: Բայց եւ բնութագրականն այն է, որ եւ Դաւթին, եւ Միւնեցուն ոչ այնքան քերականութեան եւ երաժշտութեան միջեւ եղած տարբերութիւնն է յուզում, որքան՝ ընդհանրութիւնը, այլ կերպ սասած՝ այն, որ երկուսի էլ՝ քերականութեան եւ երաժշտութեան ուսումնասիրութեան նիւթը, վերջին հաշուով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ «ձայնը», այդ իսկ պատճառով ձայնը «սեռ»-ի յատկանիշով օժտուած կարգ (կատեգորիա) է դիտում: «Ձի միայն է ենթակայ եւ նիւթ բանի, - գրում է Առաքել Միւնեցին, - վասն որոյ որպէս ձայնն սեռ է... այսպէս եւ քերականն յալթ մատունս»⁴⁶:

Ի տարբերութիւն Դաւթի, սակայն, Միւնեցին մասնանշում է քերականութեան եւ երաժշտութեան միջեւ մի ընդհանրութիւն եւս. եթէ երաժշտութիւնը ութ տեսակ ձայնաիշխեր բաղկացումով է ընդունուում, ապա քերականութիւնը եւս ութ խօսքի մասերով: Այս համեմատութիւնը, ակնբերեալաբար, ոչ այնքան խորքային եւ էութեանական է, որքան մակերեսային ու, մանաւանդ, ձեւական մտեցման արդիւնք է: Նա գրում է այդ առիթիւ. «...Որպէս երաժիշտն ութ ձայնիւ վարի, այսպէս եւ քերականն յալթ մատունս բաժանեաց զբանն»⁴⁷:

Քերականութեան՝ այլ գիտութիւնների հետ ունեցած աղբիւրների հարցը քննելիս Միւնեցին մեկնակէտ է ընդունում Դաւթի հիմնաղբոյթը՝ միայն մանրամասնելով առուել փաստարկելով եւ երբեմն էլ զարգացնելով այն. «բանական» գիտութիւնների եւ «անբան» մասնաղբիւրների վերաբերեալ

43 Անդ, էջ 73:

44 Տե՛ս Գ. Ջառուկեան, «Դաւթի քերականական աշխատութեան նորայայտ ամբողջական ձեռագիր տեքստը», «Քանոն Մատենադարանի», Երևան, 1956, No. 3, էջ 246:

45 Տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Եսայի Նչեցի. վերլուծութիւն քերականութեան», Երևան, 1986, էջ 57:

46 Մոյն աշխատ., էջ 72:

47 Անդ:

39 Անդ, էջ 85:
40 Անդ:
41 Անդ:
42 Անդ, էջ 74:

չորսական արուեստների ըմբռնումը, որ ամբողջական մշակումով Դաւիթ Անյաղիբը ներկայացնում է ինչպէս իր «Մեկնութիւն քերականին», այնպէս եւ «Սահմանք իմաստասիրութեան» աշխատութիւններում⁴⁸, Միւնեցին նոյն-նութեամբ ընդունում է: Սակայն արուեստների բանական այդ «որոշա-կիութիւնը» նա մեխանիկաբար բխեցնում է միջնադարի փիլիսոփայական այն կանխադրողից, ըստ որի նրաական աշխարհի բաղկացութիւնն են կազմում հանրայայտ «չորս տարրերը», հետեւաբար եւ հասարակական՝ հոգեկան աշխարհի երեւոյթների բաղկացութիւնն էլ, պնդում է Միւնեցին, կազմում է նմանութեամբ «չորս տարրերի»: Բայց կարեւորն այն է տուեալ դէպ-քում, որ ի տարբերութիւն Դաւիթ Անյաղիբի, որն արուեստները բաժանում է «ըստ բանական եւ անբան արուեստների» հակադրութեան, Միւնեցին արուեստների բաժանումը կատարում է առաւել ճիշդ հիմունքով. արտա-դրութեան առնչուող մասնագիտութիւնները իբրեւ «նրաական» արհեստներ է բնորոշում, իսկ գիտութիւնները՝ «բանական»: Սա հարցի տեւական մշակման լուրջ առաջնութեան է, որ երեւոյթի նուրբ գիտարկման եւ ամէնքա-ւոր ընդհանրացման արդիւնք է անշուշտ: Իսկ թուերի խորհրդապաշտու-թիւնը, անսարակոյտ, առկայ է Առաքել Միւնեցու ձեւակերպումներում, որն ամբողջ միջնադարում բնութագրական է եղել համարեալ բոլոր ու-սումնականների աշխատութիւնների համար՝ «գիտականութեան» պատրանքի խարուսիկութեամբ. «Զի արհեստ չորս է ըստ չորից տարեց»՝ եթէ՛ նիւթական արհեստ եւ եթէ՛ քանակակ, - գրում է Միւնեցին, - զի որպէս նրաական արհեստ չորս է՝ դարբնութիւն, հիւսնութիւն, ոստայնանկութիւն եւ երկրագործութիւն, այսպէս եւ քանակակ արհեստն ի չորս բաժանի, ա-յնքն՝՝ յիմաստասիրութիւն, ի բժշկութիւն եւ ի քերականութիւն եւ ի ճարտասանութիւն»⁴⁹:

Բացի այդ, «անբան իրողութիւնների» ըմբռնումը ընդարձակում է Միւնեցին՝ նշելով, որ ոչ միայն «նրաական»՝ արտադրութեան առնչուող մասնագիտութիւններն են «անբան արուեստներ», այլեւ բնութեան իսկ տարբերային գործողութիւններն ու դրանցից առաջացած երեւոյթները ըստ էութեան «անբան» են, այսինքն տեղի են ունենում իբրեւ պրոցես: Սա չափազանց ուշադրաւ հարցադրում է, որովհետեւ բնութիւնը եւս գիտում է «արարչագործ», ինչպէս եւ մարդը: Ըստ որում սկզբունքային նշանակու-թիւն ունի այն, որ եւ բնութեան կողմից իրացուող տարբերային վերափո-խութիւնները, եւ մարդու կողմից ձեռք բերուած մասնագիտութիւնները ինքնընթացիկաբար եւ հայեցողաբար կատարուող ու ընկալուող ընթացակ-ցական (պրոցեսային) երեւոյթներ են, այդ պատճառով էլ կոչւում են «անբան», այսինքն սուկ գործնականապէս կատարուող իրողութիւններ: Դրանց երկուսի էլ՝ ինչպէս տարբերային, այնպէս եւ նրաական արտա-դրանքների վերակերտումները ոչ թէ բացատրական խօսքով են ուսուցւում ու փոխանցւում սերունդներին, այլ՝ համապատասխան գործողութիւնների կատարմամբ, փորձով ու հմտութեամբ. «...Անբան արհեստն ոչ է ասելով, այլ միայն առնելով ուսանիմ եւ առնելով ուսուցանիմ: Եւ երկու եւ ան-բան արհեստք, այսինքն մայն՝ բնութեան գործն, եւ երկրորդ՝ նիւթական արհեստք. եւ երկուքն անբան ասին, զի առանց խաւսելոյ լինիմ»⁵⁰:

Բայց «նրաական» համարուող մասնագիտութիւնները, ասում է Առա-քել Միւնեցին, ընդհանրութիւն ունենալով հանդերձ բնութեան արարչագոր-ծութեան հետ, վերջինիցս սահմանադատուած ու տարբերուած են մի էական յատկութեամբ. եթէ «բնութեան արհեստը» իրացւում է առանց նախատե-սումների ու երեւակայութեան, այլ կերպ ասած՝ ինքնբնութեան, «կուր-սութիւն», ապա «նրաական» կոչուող մասնագիտութիւնները՝ նախատեսումնե-րով ու երեւակայութեամբ: Սա միանգամայն ծանրակշիռ ու ճիշդ հարցա-դրում է, որ եւ մէջ ենք բերում ամբողջութեամբ. «Բայց այսու զանազանին, զի նիւթական արհեստն թէպէտ ըստ այսմ անբան է, զի ասելով ոչ առնեն, սակայն ըստ այսմ բանաւոր է, զի հանդերձ երեւակայութեամբ առնէ, որպէս յայտ է ի սահմանէ նորա, որ ասէ՝ «Արհեստ է ճանապարհորդել»՝ հանդերձ երեւակայութեամբ: Իսկ բնութեան արհեստն «անբան» ասի, զի գիտութեամբ ոչ գործէ, այլ բնութեամբ, որպէս յայտ է ի սահմանէ նորա, որ ասէ՝ բնութիւն է մեծապարիորդել առանց երեւակայութեան, վասն այնորիկ այս երկու արհեստս առանց ասելոյ լինիմ»⁵¹:

Մինչդեռ «բանական արհեստները» անխոր ուսուցում եւ զարգացում են տեսական մտածողութեամբ ու գիտական բացատրական խօսքով՝ հիմնու-ով ունենալով անշուշտ համապատասխան օրյեկտիվ ուսուցումներ: Հետեւա-բար՝ իւրաքանչիւր գիտակարգ մատուցւում է ուսումնական կենտրոններում սովորողներին դասընթացային շարադրանքով, որով հնարաւոր է դառնում դրանցից իւրաքանչիւրի ըստ ամենայնի իւրացումն ու հմտացումը: Այդպէս էլ գրում է Առաքել Միւնեցին. «Իսկ բանական արհեստք ամենայն՝ ուսա-նելով է, այսինքն՝ ասելով ուսանիմ»⁵²: Նոյն արժէքաւոր մտքի մի այլ ամ-բողջական ձեւակերպումը հեղինակի մօտ հետեւեալ կերպ է. «Ամենայն քանակակ արհեստ ասացութեամբ լինի, այսինքն՝ երկուսսան մասունք իմաստասիրութեան եւ այլ ամենայն պատմութիւն՝ ասելով ուսանիմ եւ ասելով ուսուցանիմ»⁵³:

Հարկ է արձանագրել, որ այս հարցադրման խորաքննի մշակումը տե-սական կարեւոր նշանակութիւն է ունեցել տուեալ ժամանակաշրջանի հա-մար՝ ընդհանրապէս գիտական մտածողութեան զարգացման առումով, որի անդրազարձ անհրաժեշտութիւնը նուազ էական չէր նաեւ քերականագիտու-թեան համար:

Լեզուաբանական ոչ պակաս հետաքրքրութիւն է ներկայացրել միջնա-դարի մեր քերական մեկնիչների համար եւ այն հարցադրումը, թէ լեզուն, իբրեւ «բանական արուեստ», նշուած չորս գիտութիւններից որի⁵⁴ է առաւել մերձ եւ հաղորդակից: Առաքել Միւնեցին, ընդունելով հանդերձ Դաւիթի այն հարցադրումը, որ քերականութիւնն իր անմիջական եւ ընդհանուր ազդեաներով առնչւում է յիշեալ «բանական արուեստներից» յատկապէս ճարտասանութեան հետ, բայց եւ միաժամանակ քերականին բնութագրում է իբրեւ խօսքի վարպետի ու լեզուի զազանարանները բացայայտողի, իսկ ճարտասանին՝ պերճախօսութեան տրիբունի. «Իսկ քերականութիւնն եւ ճար-տասանութիւնն այնպէս, - գրում է նա, - զի քերականութիւնն կարաւտանայ ճարտասանին պայծառ բանից, այսինքն՝ զի թէպէտ քանիք գիտութիւնն փրկական է, այլ պայծառութիւն եւ զարդարանք եւ պաճուճանք եւ պեր-ճացուցանել զբանն՝ մարտասանացն է»⁵⁵: Այստեղ հարեանցի նշենք, որ

48 Տե՛ս այս հարցի առաւել հանգամանայից լուսարանում մեր «Արուեստի ըմբռնումը վաղ միջնադարի Հայ տեսական մտածողութեամբ (5-7-րդ դդ.)» աշխատութիւնում, «Սովետական արուեստ» ամսագիր, 1971, No. 2:
49 Մոյն աշխատ., էջ 72:
50 Անդ, էջ 182:

51ա Անդ:
51բ Անդ, էջ 182-183:
52 Անդ, էջ 182:
53 Անդ, էջ 72:

հեղինակը անուժ է մի ուշադրաւ ընդհանրացում եւս, որ չունեն իր նախորդ քերական մեկնիչները. նա միանգամայն ճիշդ գիտարկմամբ գտնում է, որ իրականում իւրաքանչիւր երևույթ գեղեցիկ ձեւով դրսևորուելու ներքին մղում ունի, որպիսի իրողութիւնը վերաբերում է նաեւ քերականութեանը՝ իբրեւ գիտահամակարգի, Հետեւաբար քերականը իր գիտական խօսքը ներդրածու ու արտայայտիչ դարձնելու համար պէտք է դիմի ճարտասանութեանը՝ ձեւակերպումներու ու սամանումները ճշգրիտ ու անթերի դարձնելու պահանջի թելադրանքով. «Եւ որպէս ամենայն միւր կարաւոր զարդարման, այսպէս եւ բերականն՝ նարտասանին»⁵⁴:

Առաքել Միւնեցիին բանասիրական ճիշդ լուծում է առաջադրում նաեւ քերականագիտութեան սկզբնաւորման ու զարգացման մասին. անդրադառնալով Դիոնիսիոս Թրակացու աշխատութեան հայ թարգմանչի եւ առաջին քերական մեկնիչի անձնաւորութեան խնդրին, Միւնեցիին իրաւացիորէն գտնում է, որ Դաւիթ Ամյաղթն է ե՛ւ թարգմանիչը, ե՛ւ առաջին մեկնիչը: Նա այս կապակցութեամբ գրում է. «Ութերորդ՝ թէ յումէ՞ թարգմանեցաւ եւ ո՞վ էր, որ մեկնութիւն արար սորա, այսինքն՝ զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց եւ մեկնեաց գաս»⁵⁵: Սակայն, տարաբարտարաբ, Միւնեցիին ոչ մի տեղեկութիւն չի հաղորդում այն մասին, թէ Դաւիթը յետոյ մինչեւ Գրիգոր Մագիստրոսն ընկած ժամանակաշրջանը ո՞վքեր են հանդէս եկել մեր մատենագրութեան մէջ իբրեւ քերականներ՝ իրենց մեկնութիւններով: Զարմանալիորէն նա անգիտանում է ինչպէս Անանուն մեկնիչին, այնպէս եւ Մովսէս Քերթովին, իսկ Ստեփանոս Միւնեցու մասին խօսում է միայն իր աշխատութեան սկզբնադրելիքների մատնանշման կապակցութեամբ. բայց որ նա եւս քերականական Մեկնութիւն է գրել, որից օգտուել են Մագիստրոսը, Յովհաննէս Երզնկացիին, Եսայի Նչեցիին ու Մործորեցիին, ընդգրկելով այն իրենց աշխատութիւններում՝ լուծութեան է մատնել: Առաքել Միւնեցու մօտ կարդում ենք. «Իսկ յետ նորա (իմա՝ Դաւիթ - Լ. Խ.) Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւիթ մեկնեալն: Իսկ յետոյ Յովհաննէս վարդապետն մականուն Պրուզ համառատեաց զնոյն վասն դիւրալուր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գլածորոյ այլ համառատեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի, այսպէս եւ Մործորեցիին է համառատեալ»⁵⁶: Քերականական մեկնութիւնների թուարկումը թերի է նաեւ նրանով, որ աշքթիոյ են արուած նրանում վարդան Արեւելցու եւ Յովհան Քանեցու քերականական աշխատութիւնները, որոնցից առաջինը պէտք է յիշատակուէր Յովհաննէս Պրուզի մեկնութիւնից, երկրորդը՝ անմիջապէս Մործորեցուց յետոյ:

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ քերականութիւնը բոլոր միւս ուսումնականագրերից առաջ, թէ յետո՞յ պէտք է սովորել, ապա Մագիստրոսի, Նչեցու եւ միւս քերականների հետեւողութեամբ Միւնեցիին նոյնպէս պնդում է, որ ուսումնականները վարդապետարաններում առաջին հերթին պէտք է անցնեն քերականութիւն, յետոյ միւս գիտութիւնները, «զի որպէս դուռն

է սա եւ անբաժնութիւն այլոցն»⁵⁷:

Բայց այս հարցադրման առնչութեամբ առաւել ուշադրաւ եւ իւրովի մեկնարանութիւն է Միւնեցու այն ճիշդ հաւաստումը, որ եթէ քերականութիւնը քննում է, իբրեւ իր առարկան, ինչպէս բանաւոր, այնպէս եւ գրաւոր խօսքը, իսկ բոլոր գիտութիւններն ու պատմութիւնները դրսևորում են կա՛մ բանաւոր խօսքով, կա՛մ էլ գրութեամբ, ապա ինքնըստինքեան հետեւում է, որ դասընթացքների մէջ առաջնային ուսումնառութիւնը քերականութիւնը պէտք է լինի, իսկ նրա միջոցով էլ՝ միւս գիտութիւնների ուսուցումը. «Իսկ ամենայն իմաստասիրութիւն եւ պատմութիւն քանի եւ գրով լինի, - միանգամայն ճիշդ նկատում է Միւնեցիին, - վասն որոյ հարկ է մայ ժոյս ուսանիլ եւ ապա սովա՛ր՝ գայլսն...»⁵⁸:

Դժուար է առաւել սպառիչ ընութագրումով ներկայացնել քերականութեան նշանակութեան գիտակցումը, քան այն, ինչ գտնում ենք Միւնեցու մօտ. երևելով այն խոր ըմբռնումից, որ բոլոր գիտութիւններն ու պատմողական առարկաները, իբրեւ դրսևորման ձեւ, հնարաւոր է հաղորդել բանաւոր կամ գրաւոր եղանակներով, իսկ բանաւոր կամ գրաւոր խօսքի օրինաչափութիւններն ուսուցող միակ գիտութիւնը քերականութիւնն է, այստեղից էլ ինքնըստինքեան հետեւում է, որ առհասարակ մարդկային մտաւոր գործունէութիւնն ու գիտութիւնների զարգացումը անհնարին է ենթարդել՝ առանց քերականութեան իմացման. «Առ ի՞նչ աւգտակարութիւն է սա (իմա՝ քերականութիւնը - Լ. Խ.) պիտանացու» իր առաջադրած հարցումին Միւնեցիին ինքն էլ պատասխանում է. «...Զի ամենայն իմաստասիրութիւն եւ պատմութիւն քանի եւ գրով լինի, եւ սա՛ է, որ գրանն ուսուցանէ եւ զգիրն»⁵⁹:

Քերականութեան երրորդ բաղկացուցիչ մասի՝ լեզուներին եւ հնագոյն պատմաներին քերականի իրազեկ լինելու Թրակացու պահանջը Միւնեցիին մեկնարանում է հիմնականում Եսայի Նչեցու հետեւողութեամբ⁶⁰, բայց մանրամասնորէն է կապէս տարբերում է նրանից: Այս հարցադրումը, ասում է Միւնեցիին, ժամանակին տեղիք է տուել «բազում» տարակարծութիւններին⁶¹. Ըստ որում որոշ քերականներ ենթարդել են, թէ թրակացի իր այս պահանջը ձեւակերպելիս նկատի է ունեցել ընդհանրապէս օտար լեզուների եւ ժողովուրդների պատմութեան իմացումը. լեզուներ, որոնք միջնադարի մեր դարութեան պատկերացմամբ՝ իբր 72-ն են եղել ամբողջ աշխարհում. մի պնդում, որ շատ թերի եւ պայմանական է անշուշտ⁶²: Այս սեսակէտն ունեցող քերականների երակէտն այն է, ըստ երեւոյթին, որ բոլոր լեզուները ցեղակից են իրար, եւ եթէ ստուգաբանել հարկ լինի

57 Անդ, էջ 74-75:

58 Անդ, էջ 74:

59 Անդ:

60 Հմմտ. մեր աշխատասիրութիւնը՝ «Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան», Երևան, 1966, էջ 65:

61 Տե՛ս այն աշխատութիւնը, էջ 81-83:

62 Այն բնում է բարեւոյնեան աշտարակաշինութեանը մասնակցած 72 նահապետների բանակային ենթազբաւ որոշակիութիւնից, որոնք, իբր, հետագայում առանձին ժողովուրդների լեզուատեղեկոյններն են հանդիսացել: Դեռեւ 8-րդ դարում Ստեփանոս Միւնեցիին այս ստեղծութեամբ գրել է: «Իւրաքանչիւր ոք ի նահապետացն ի բաժանման լեզուացն եղեն իբրեւ ստեղծիչ լեզուաց եւ եզաւ այն արկնք եւ սահմանք նոցա չիւրաքանչիւր զուստս: Իսկ յառաջնոցն ոչ ունելով գիր տակաւին եւ երկարակցութեամբ զմիմեան աւանդութեամբ ուսուցանելին ուղղաբաւել» (Ն. Արմնց, նշուած աշխատ., էջ 183):

54 Անդ:

55 Այս հարցի շուրջ հաշտագիտութեան մէջ արժարծուած տարակարծութիւնների, ինչպէս եւ մեր՝ տարիների ընթացքում կատարած քննարկատական եւ լեզուաբանական ուսումնասիրութիւններից բխեցած եզրակացութեան մասին հանգամանօրէն խօսել ենք մեր մի այլ աշխատութեան մէջ, ուստի եւ չենք անդրադառնում այստեղ դրան. տե՛ս «Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան», Երևան, 1966, էջ 12-13, ծան. 18:

56 Սոյն աշխատ., էջ 73:

և ի շարագրածաց իբրու բազում անգամ ասացելոց»⁷¹ա:

Բաժանման երկրորդ տեսակն այն է, որ ստացուում է երկատմամբ կատարուած ընդհանուր բաժանումից. այսինքն՝ երբ գրանցից իւրաքանչիւրը իր Հերթին Համապատասխանաբար մասերի է բաժանուում, որը կոչուում է «մակրաժանումն»։ «Իսկ մակրաժանումն՝ որ իւրաքանչիւր մասունս բաժանելն»⁷¹բ: Այս իմաստով «մակրաժանումը», քերականութեան դիոնիսիոսեան Համակարգի առնչութեամբ՝ ա՛յն է, երբ լեզուն ուսումնասիրող գիտութիւնը իր ընդհանուր բաղկացութեան ուղղութիւնների տեսակէտից բաժանուում է վեց մասերի, դրանք են՝ ա) հմուտ ընթերցանութիւն՝ առողանութեան կանոնների համաձայն, բ) բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործութիւնների վերարտադրում՝ պատմողական պերճ խօսքի կիրառմամբ, գ) լեզուների եւ վիպասանութեան իրազեկութիւն, դ) բառագիտութիւն՝ «ստուգաբանութեամբ» հանդերձ, ե) բառերի քերականական ձեւոյթների ու նրանց իմաստների հմտութիւն, եւ զ) գրական երկերի վերլուծութիւն՝ լրակազոյն երկերի արժանիքների բացայայտումով: Այս բոլորով է, ահա, համարուում քերականութիւնը իբրեւ գիտութիւն:

Իսկ բաժանման երրորդ տեսակը, որում տեսական բարդ առարկայի մնացած ստուար մասը ընդգրկուում եւ տեղաբաշխուում է, կոչուում է «ստորաբաժանումն»: Այս դէպքում բաղկացուցիչ մասերը, իրենց հերթին, ենթաբաժանուում են մինչեւ նուազագոյն առանձինների՝ անտրոհելի մասերի («անհատս»), որոնցում առարկայի ընդգրկուումն ու տեղաբաշխուումը դառնում են սպառիչ, հետեւաբար եւ դրա մատուցումն էլ՝ ամբողջական. «Իսկ ստորաբաժանումն՝ որ գմասունս յանհատս բաժանելն»⁷²: Մասնաւորելով խօսքը քերականութեան նկատմամբ, պէտք է սասել, որ նրա բաղկացուցիչ մասերից հինգերորդի՝ բառոյթի ստացած հնարաւոր ձեւոյթների «ստորաբաժանումը»՝ յանգում է խօսքի մասերի առանձնացմանն ու խմբաւորմանը, որոնց եւ վերաբերում է քերականութեան, իբրեւ գիտակարգի, հիմնական ու գերակշիռ բովանդակութիւնը:

Հարկ է նշել, որ գիտակարգի տեղաբաշխման եւ մատուցման տեսական հիմնաւորման ու փաստարկման անհրաժեշտութիւնը միջնադարի քերականական մեկնութիւններում առաջին անգամ լրացնում է Սիւնեցին: Նա, բւտ երեւոյթին, պատասխանում է Դաւիթ Անյաղթին, որը «զարմանք» է արտայայտում Թրակացու քերականութեան համակարգում կիրառուած նման մտացման առթիւ. «Բայց զարմանալ գոյ ընդ արուեստիս, - գրում է Դաւիթ Անյաղթը, - զի յոռով ասաց զսորին մասունս, իսկ այժմ ասելոց է գմասանց մասունս մինչեւ տարեալ հասուցէ յանհատն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարիցի աւուտս»⁷³: Իր միանգամայն ճիշդ բացատրութեամբ Սիւնեցին փաստօրէն բացայայտում է Թրակացու քերականութեան համակարգի նաեւ բնագրափառական ամենակարեւոր առանձնայատկութիւնը, որն իր արժէքն ու հետաքրքրականութիւնը, անտարակոյս, պահպանում է ընդհանրապէս գրքատեսակների բնագրական կառոյցների տեսութեան համար:

Բացի նշուածից, բնագրագիտական այդ սկզբունքի ըմբռնումը մեծապէս օգնել է Սիւնեցուն՝ Թրակացու քերականական համակարգը ինչպէս

ճիշդ եւ ամբողջական մեկնելու, այնպէս էլ նրանում արժարժուած հարցադրումների փոխադարձ աղերսն ու ներքին պայմանաւորուածութիւնը բացայայտելու առումով:

Այսպէս, ի տարբերութիւն նախորդ քերականների, Սիւնեցին առաջին հեղինակն է, որ ցոյց է տուել, թէ ինչպիսի յարաբերակցութիւններ են առկայ քերականութեան՝ դիոնիսիոսեան ըմբռնմամբ բաղկացուցիչ «վեց մասերի»՝ բարձրաձայն ընթերցանութեան («վերձանութեան») երեք բաժինների, «ենթադասութեան» (տեքստի իմաստի համաձայն ստուգանութեան երանգի ու շարուձեւերի համապատասխանութեան) եւ գրական սեպերի վեց տեսակների միջեւ: Ընդ որում սրանցից իւրաքանչիւրի մասին Սիւնեցին հազորում է առաւել հանգամանալից տեղեկութիւններ, քան իր նախորդները (տե՛ս սոյն աշխատութեան 86-92 էջերը):

Նշենք նաեւ, որ թուարանական իրողութիւնների համեմատաբար լայն չափով մեկնողական քերականութեան մէջ ներմուծողը զարձեւալ Առաքել Սիւնեցին է, իսկ զբնութեան արուեստի տեսական աշխատութիւններում՝ Գրիգոր Տաթեւացին⁷⁴: Յատկապէս լեզուա-քերականական իրակութիւնների թուային բաղկացութիւնների մասին ամէն անգամ խօսք լինելիս, Սիւնեցին ծաւալուն մեկնաբանմամբ անդրադառնում է նշուած այս կամ այն թուի առանձնայատկութիւններին ու դերին, որ ունի այն թուարանական գործողութիւններում: Աւելին. նա յաճախ իր ծայրայեղ դիտումով յանգում է թուերի խորհրդապաշտութեանը, որով եւ կորչում են բացատրութիւնների առարկայականութիւնն ու դրանց անմիջական պերսոնալիզմը:

Քերականութեան, իբրեւ դասընթացքի, առանձնայատկութիւնների ու աղերսակցութիւնների տեսական ընդհանուր բնութագրումից յետոյ, հեղինակը անցնում է դիոնիսիոսեան քերականութեան համակարգի յաջորդական պարբերութիւնների մեկնաբանմանը, որտեղ քիչ չեն նաեւ իրովի ընդհանրացումներն ու տեսական մշակումները լեզուի եւ քերականագիտութեան հարցադրումների առնչութեամբ:

Հայերէնի գրաբանակարգի մասին խօսելիս, Սիւնեցին համեմատական գուգահեռներ է անցկացնում, մի կողմից՝ Հայերէնի, միւս կողմից՝ այլալեզու գրահամակարգերի հետ, որով իր ճանաչողական բովանդակութեամբ ընդլայնում եւ հարստացում է տուեալ հարցադրումը քերականական մեկնութեան մէջ: Այսպէս, նա գրում է. «Հարցումն. Վասն է՞ր ԼԶ (36) է՞ գիրս Հայոց եւ քան զամենայն ազգաց յուրով. զի ո՛չ է, որպէս հնդկացն՝ Թ (Պ), կամ որպէս եբրայեցոցն՝ ԻԲ (22), կամ որպէս տաճկացն՝ ԻԸ (28), կամ որպէս յունացն, այսինքն հոռոմին՝ ԻՁ (26), կամ որպէս վրաց, աղուսիցն՝ ԻԼ (28), այլ քան զամենայն ազգաց յուրով է՞ մեր գիրս» :

Մատոցեան գրահամակարգի քանակային շատութիւնը հիմնաւորելու եւ փաստարկելու իր ջանքերում Սիւնեցին, սակայն, բացայայտում է միաժամանակ հայոց լեզուի ընդհանուր բնոյթը որոշող մի առանձնայատկութիւն եւս, որ ուշագրաւ է եւ ճշմարտապատում՝ իր հարցադրմամբ: Սիւնեցին իրաւացիօրէն նշում է, որ լեզուների մի մասի համար բնորոշ է բառարտասանումը «լեզուածայրով», միւսի համար՝ «լեզուամիջով» կամ լեզուակենտրոնով, մի շարք լեզուների համար էլ՝ «լեզուատակով», մինչդեռ Հայերէնի համար՝ այս բոլորի համադրմամբ՝ եւ լեզուածայրով, եւ լեզու-

71ա Անդ, էջ 75:

71բ Անդ, էջ 85:

72 Անդ:

73 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 87:

74 Տե՛ս մեր աշխատութիւնը՝ «Գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում», 1962, Երեւան, էջ 330-365:

ուամիջով, ե՛լ լեզուատակով: Այդպէս էլ նա գրում է: «...Ոմն՝ լեզուի ծայրին խաւսին, եւ ոմն՝ միջան, եւ ոմն՝ տակովն, իսկ մերս՝ տակովն եւ միջամն եւ ծայրիւն»⁷⁵: Սրանից լուեկայն հետեւում է, որ հեղինակը գրահամակարգերի տառային միաւորների յարաբերական քանակը իրաւացիօրէն պայմանաւորուած է համարում բառա-արտաբերութեանը լեզուի տարրեր մասերի ունեցած մասնակցութեամբ: Մի հանգամանք, որ զիտական հնչիւնաբանութեան տեսակէտից միանգամայն ճիշդ դիտում է, թէ եւ միակ պատճառը չէ: Այս առթիւ Միւնեցիւն կարեւոր հաստատում է կատարում, որն ունի պատմական արժէք եւ բնորոշում է հայոց լեզուի ընդհանուր նկարագիրը: Նրա պնդմամբ՝ այլալեզու մարդիկ չեն կարողանում հայերէնն այնպէս արտաբերել, ինչպէս այդ լեզուն կրող ժողովուրդը: Բայց հայերը կարողանում են բոլոր օտար լեզուներով ազատ ու անկաշկանդ խօսել՝ իրենց լեզուի հնչոյթային համակարգի հարատւութեան եւ դրանով պայմանաւորուած նրա ճկունութեան շնորհիւ: «Վասն որոյ, - գրում է նա, - այլալեզուներ յորժամ ուսանին գմբ լեզուս, ոչ կարնն ուղղակի խաւսի որպէս մեք: Իսկ մեք գամնեցում խաւսիմ որպէս նոքայն, զի կարող եմք խաւսել երբեմն թաւ, երբեմն սոսկ, երկայն եւ սուղ, վասն որոյ կայ ի գիրս մեր երկայն եւ սուղ, թաւ եւ սոսկ. եւ վասն այն է յոյով գիրս մեր»⁷⁶: Սակայն այս ճիշդ հարցադրումից Միւնեցիւն բխեցնում է մի հետեւութիւն եւս, որն ընդհանրապէս ճշմարտացի լինելով հանդերձ, վճռական իր պնդմամբ՝ թերի է: Հեղինակը գրում է: «...գի մեր լեզուս ընդարձակ է, Բան զայլ ամենայն ազգացն»⁷⁷: Այսպիսի հաստատման արդարացիութիւնը երաշխաւորուած կը լինէր այն դէպքում միայն, երբ գիտակցութիւնն ուսումնասիրուած լինէին այդ ժամանակաշրջանում գոյութիւն ունեցող բոլոր ժողովուրդների լեզուները եւ Միւնեցիւն իրագրել լինէր այդ հետազոտութիւններից բխեցուած հետեւութիւններին: Սակայն նման հնարաւորութիւնը պատմականօրէն դեռեւս չէր ստեղծուած Միւնեցու օրօք:

Ընդունելով Դաւթի այն ճիշդ սահմանազատումն ու բնորոշումը, որ տառը հնչոյթն է՝ իմաստային արժէքը («բանի նշանակ»), իսկ գիրը՝ հընչոյթային արժէքի իմանձրացական արտայայտութիւնը, Միւնեցիւն այս բնութեան երկփեղկուածութիւնը առաւել ամբողջական եւ սպառիչ է ձեւակերպում: Այսպէս, Դաւթը գրում է. «Տաղ անմարմին իբր թէ քանկ նշանակ, զի գիտելի կացուցանէ գրոյն գրանն, որպէս զայրիւն զայրն. իսկ նախադասեալ տառին աւրինակ իմն ըստ պատուոյ, իբր ոգին քան զմարմին լաւագոն»⁷⁸: Սակայն Միւնեցիւն այս հիմնադրոյթից ելնելով գիրը համարում է արդէն հնչոյթի շօշափելի «ձեւը», իսկ տառը՝ «ձեւի» մէջ պարփակուած բովանդակութեան բացատրութիւնը, որը «մեկնութիւն» տեղամասով է բնորոշում, այն է՝ հնչոյթային արժէքը: «...Գիր գճեւ գրոյն ասէ, որպէս այրն, իսկ տառ՝ զեղգեղ, այսինքն՝ զմեկնութիւնն, որպէս սակն ա. գի որպէս մարդս հոգի է եւ մարմին, այսպէս ձեւ գրոյն՝ մարմին, եւ մեկնութիւնն՝ հոգի նորա»⁷⁹:

Ի ղէպ, հարկ է նշել, որ Առաքել Միւնեցիւն հայ քերական մեկնիչների մէջ առաջինն է, որ հնչիւնների արտաբերմանը մասնակցող ֆիզիքական

օրգանների ամբողջական նկարագրութիւնն է տալիս: «տասն են գործարանք ձայնից, - գրում է նա, - այսինքն նախ՝ մկունքն, որ յողնաշարն, երկրորդ՝ մէջ կողիցն, երրորդ՝ կցուածք կողիցն, որ յողնաշարն է, չորրորդ՝ ախոնդանքն, այսինքն՝ վերին երես քաղթին, որ է մերձ կողիցն, հինգերորդ՝ թոքն, վեցերորդ՝ խոչափոզն, եւթներորդ՝ շնչերակքն, ութերորդ՝ գանկիկն, որ է կատիկն, իններորդ՝ առաստաղ բերանոյն, տասներորդ՝ քիմքն, որ է աւշական ձայնին»⁸⁰: Ի պատիւ հեղինակի պէտք է ասել, որ այս հարցադրմամբ առաւել համակողմանի եւ ամբողջական է դառնում միջնադարի հայերէն լեզուի ու քերականութեան դասընթացը:

Այս կապակցութեամբ Միւնեցիւն անդրադառնում է նաեւ տառի եւ գրի՝ իւրաքանչիւրն իր միաւորների հանդէս բերած հնարաւոր գուգորական ստանձնաշարտութիւններին՝ բացառապատկառ միաժամանակ մի շարք ուշագրաւ կողմեր, որոնք կարեւոր են ժամանակի հնչիւնաբանական պատկերացումներն ըմբռնելու ու քննադատելու տեսակէտից:

Բնութագրական է նշել, որ իր բոլոր համեմատութիւններում Միւնեցիւն հիմք է ընդունում բնութիւնը եւ նրա տարբերային երեւոյթները: Այսպէս, «տառ» տերմինը (իսմ՝ հնչոյթը) Միւնեցիւն բաղգատում է բնութեան «տարր» (element) եզրի հետ՝ ցոյց տալով դրանց ընդհանրութիւնները: Ինչպէս բնութեան «տարրերը» որոշակի եւ առանձին գոյածեւերի բարակարգով («դասութեամբ») իրենց ինքնութիւնն են դրսեւորում տարածութեան մէջ, ասում է նա, այնպէս էլ հնչոյթները, որոնք առանձինների որոշակի շարակարգ են կազմում իրենց բոլոր միաւորներով. «...որպէս տարրն դասութիւն ունի՝ այսինքն՝ երկիր, ջուր, աւղ, հուր, այսպէս եւ տառն դասութիւն ունի՝ յայրէն մինչեւ ցգէն»⁸¹: Ի ղէպ, նկատենք, այս ըմբռնումը թէ եւ զայլիս է դեռեւս Դիոնիսիոս Թրակացուց եւ մեր հեղինակին նախորդած հայ քերական մեկնիչներից, սակայն Միւնեցու մօտ այն առաւել կոնկրետացում է ստացել:

Այնուհետեւ. հնչոյթները բառակազմութիւններում միմեանց հետ յարակցման նոյն յատկութեամբ են օժտուած, դիտում է Միւնեցիւն, ինչ բնութեան տարբերը. «... Որպէս տարբերքն տարեալք են ի միմեանս, այսպէս եւ ձայնաւորքն՝ յանձայնսն»⁸²:

Ըստ միջնադարի աշխարհաճանաչողութեան, արգասաբերութիւնը առհասարակ հնարաւոր չէ այլ կերպ պատկերացնել, քան անխտիր բոլոր՝ ինչպէս շնչաւոր, այնպէս եւ անչունչ երեւոյթներում՝ «արուի» եւ «էգի» պարտադիր առկայութեամբ եւ նրանց փոխներգործմամբ. այստեղից եւ ընդհանրութեան մասնաշուրջ՝ բոլորովին անյարիր երեւոյթների ձեւակամ՝ արտաքին մեմենցման հիմքի վրայ. եթէ բնութեան տարրերից ջուրը, հողը բերքատուութեան բացարձակ պայմաններ լինելով դիտուում են «իգականներ», իսկ օդը եւ հուրը՝ «արականներ», այդպէս էլ, Միւնեցու պնդմամբ՝ հնչոյթները բաժանուած են «արականների» եւ «իգականների»: Որքան էլ արտառոց է թուում՝ «արական» են համարուած ձայնաւորները, իգականներ՝ բաղաձայնները, քանի որ, ըստ նրա տրամաբանութեան, բոլոր բառերն ու խօսքերը առաջանում են վերջիններիս միջոցով. «...ի տարբերցն ոմանք արականք են, որպէս աւղն եւ հուրն, - գրում է Միւնեցիւն, - եւ ոմանք իգականք՝ վասն ծննդական գոլոյն, որպէս ջուրն եւ հողն, այսպէս եւ տառն»:

75 Սոյն աշխատ., էջ 99:
76 Անդ:
77 Անդ:
78 «Բաների Մատենադարանի», No. 3, էջ 250:
79 Սոյն աշխատ., էջ 101:

80 Անդ, էջ 181:
81 Անդ, էջ 101:
82 Անդ:

ձայնաւորքն՝ արականք, եւ անձայնքն՝ իգականք, եւ ի սոցանէ ծնանին ամենայն խաւք եւ բանք»⁸³: Այս «ընդհանրութեան» հաւաստումը, սակայն, պարզապէս պատմական արժէք ունի՝ իբրեւ հնչիւնաբանական պատկերացումների անցած փուլ, ո՛չ աւելի:

Գրի իմացական-մշակութային դերի բացատիկ նշանակութիւնը քերականական մեկնութիւններում առաջին անգամ տուել է ոչ այլ ոք, քան Սիւնեցին: Նա նմանեցնում է, փոխարեքական իմաստով, գիրը՝ արեգակի՝ իբրեւ լոյսի աղբիւրի հետ: Ժիշդ այնպէս, ինչպէս հուրն իր ծագմամբ լուսաւորում է մթնոլորտը եւ օդի միջոցով՝ բոլոր նիւթական առարկաները, այդպէս էլ մարդկային յօդաբաշխ հնչոյթը նուիրական ու վեհ օրինապատգամներն արտաբերմամբ լուսաւորում է գրութիւնները, իսկ գրանց միջոցով՝ նաեւ ընթերցողներին: «Որպէս հուրն տարր զոլով լուսաւորէ զաւրն ծագմամբ եւ ի ձեռն աւդոյն զայս ամենայն, - հաւաստում է Սիւնեցին, - այսպէս եւ տառն լուսով աւրիւնացն լուսաւորէ զգրքայսն եւ նոճաւ զընթերցաւորսն...»⁸⁴: Բնաւ զարմանալի չէ, որ պատկերաւոր համեմատութիւնն ու ընդհանրացումը գրի մշակութային դերի՝ հեղինակը, վերջին հաշուով, ծառայեցնում է իր աշխարհայեացքային նկրտումներին՝ քրիստոնէական ուսմունքի համար նրա ունեցած կարեւոր նշանակութեան ընդգծումով: «բոս այսմ պատուիրանք Տեառն լոյս եւ եւ լոյս տան աչաց - շարունակում է նա: - Վասն որոյ ասէ Տէրն՝ «Ո՛չ գիտէք զգիրս եւ զգաւրութիւնն Աստուծոյ՝ որ ի նմա»⁸⁵:

Հնչոյթների՝ ձայնաւորների եւ բաղաձայնների բաժանումը հեղինակը զարձակ «հիմնաւորում» եւ «փաստարկում» է բնութեան տարրերի համանման երեւոյթների հետ գրեւեւորած հնարաւոր ընդհանրութեամբ: «...որպէս տարրն, այսինքն՝ ջուրն եւ աւրն հնչումն արձակեն, այսպէս եւ ձայնաւորքն՝ ի տառն: ... Որպէս տարրն, այսինքն՝ երկիր եւ վէճք անձայն գոլով, բայց ի հարկանելն հնչիւն արձակեն, այսպէս եւ անձայնքն բախմամբ ձայնաւորացն ձայնս արձակեն»⁸⁶: Նկատենք, որ այս կարգի ընդհանրութիւնների մասնանշումը չպէտք է պարզապէս հեղինակի բռնադրօսիկ համեմատութիւնների արդիւնք համարել, այլ՝ ժամանակի հնչիւնաբանական ըմբռնումների ու պատկերացումների հաւաստում միայն, որ պայմանաւորուած է զարաշրջանի ընդհանուր գիտական մակարդակով:

Ինչ վերաբերում է հայերէնի ձայնաւորների քանակի որոշմանը, սպա պէտք է ասել, որ այս հարցում թոյլ է տրուել փոքր-ինչ շեղում՝ նախորդ քերական մեկնիչների համեմատութեամբ: Թրակացու երկի հայ թարգմանիչը, ինչպէս յայտնի է, յունարէն օ-ի համապատասխան հայերէն հնչոյթը ներկայացրել է նոյնութեամբ, բանի որ հայերէնը չի ունեցել եւ չունի հնչոյթային երկու առանձին արժէքներով օ (ὀ μικρόν եւ ὦ μέγα) յաջորդ քերական մեկնիչները մերթ վարուել են նոյն ձեւով, մերթ էլ այդ հնչոյթի տառադարձուած արժէքով՝ իբրեւ ով: Մինչդեռ Սիւնեցին գրանց փոխարէն 12-րդ դարում փոխառուած օ տառով է ներկայացրել այդ ձայնաւորը, որով ստացուել են երկու դրային արտայայտութիւններ (ո եւ օ) միեւնոյն հնչոյթի համար, որոնք, սակայն, Սիւնեցու ըմբռնմամբ համար-

ւում են առանձին երկու տարրեր հնչոյթներ...: Սա անշուշտ Հայերէնի ձայնաւորների բնութագրման մէջ թոյլ տրուած վրիպումներին մի նոր սխալանք է աւելացնում: Վրիպումներ, որոնք յաղթահարուեցին հայ քերականագիտութեան զարգացման հետագայ փուլերում:

Բայց տեսական առումով կարեւոր հարց է լուծում Սիւնեցին՝ ձայնաւորների հոլթեան բացայայտման առնչութեամբ: արդեօք ձայնաւորները «ստացմամբ»՝ ձեռքբերովի եղանակով են ունենում ձայն, թէ՞ իրենց բնոյթով են հէնց այդպիսին: Հեղինակը հիմնաւոր փաստարկմամբ աներկբայորէն ապացուցում է, որ ձայնաւորների ձայն-արտաբերումը ոչ թէ ստացովի է, այլ՝ ներուցակութիւն, ուստի եւ նրանց ձայն արտաբերելու յատկանիշը «բոս բնոյթի» է: Բանն այն է, բացատրում է նա, ձայնաւորները իրականացնում են ձայնի արտաբերումը անընդհատութեամբ՝ շարունակաբար, ասանց նուագումի, այն է՝ ներուցակութեամբ, մինչդեռ ընդհանրապէս ձեռքբերովին կամ ստացականք, իբրեւ կանոն, չի կարող յարակալութեամբ օժտուած լինել, այլ ենթադրում է նուագում եւ ընդհատում: «Ոչ թէ ստացմամբ ունին զձայնն, այլ՝ բնութեամբ, զի ասէ, թէ ուր ձայնաւորքն զձայնն յինքեանց անպակաս ելուզանեն, այսինքն՝ անհատ յառաջ բերին յինքեանց բնութեամբ, եւ ոչ՝ ստացմամբ: զի թէ ստացմամբ էր՝ գոյր ինքն անուգելոյ, այլ բնութեամբ են ձայնաւորք»⁸⁷:

Ընդունելով քերականական մեկնութիւններում դասական Հայերէնի հնչոյթային համակարգի աւանդական դասակարգումը, Սիւնեցին զգալի տուրք է տուել աստուածաբանութեանը: փաստորէն հնչիւնաբանական իրողութիւններին մեկնաբանումը Սիւնեցին յաջգրել է աստուածաբանական բնագիտական դատողութիւններով ու բռնադրօսիկ համեմատութիւններով, որոնք զուրկ են գիտական օրելէ արժէքից»⁸⁸:

«Յաղագս հասարակ շաղաշարաց» պարբերոյթը, որը դիօնիստիսեան քերականական համակարգի Περί κοινῆς συλλαβῆς («Առհասարակ վանկերի մասին») հաստուածի թարգմանութիւնն է, Սիւնեցին իւրովի ըմբռնմամբ է մեկնաբանում: Եթէ իրեն նախորդած քերականները, հաւաստարիմ մտայով թարգմանուած բնագրին, «Յաղագս հասարակ շաղաշարաց» բառակապակցութիւնը մեկնում են, Հայերէնի վանկային իրողութիւններին հիման վրայ, բացառապէս իբրեւ այդպիսին, ապա Սիւնեցին այն ըմբռնում եւ քննում է որպէս առհասարակ լեզուամիւտարների կապակցելիութիւն՝ ո՛չ միայն վանկերի, այլ՛եւ բառերի եւ նախադասութիւնների: Այս առնչութեամբ շարադրանք կարեւոր տեսութիւն է զարգացնում Սիւնեցին՝ հէնց լեզուի իսկ ենթաստորադարձուող մակարդակների⁸⁹ բազալիչների բացալայտումով: Այսպէս, «Ձի՞նչ է շարագրութիւն» իր հարցադրմամբ Սիւնեցին պատասխանում է. «Նախ՝ որ բազում վանգ շաղաշարի եւ մի բառ կազմի, եւ բազում բառ շաղաշարի եւ մի բան կազմի, եւ բազում վանգ եւ բառ եւ բան շաղաշարին եւ խաւս եւ գրոյց առնեն»⁹⁰: Այս ձեւակերպ-

87 Անդ, էջ 103:

88 Տե՛ս անդ, էջ 103, 104, 105 եւ այլուր:

89 Մեր սույն աշխատանքում մէջ օգտագործում ենք Փրոֆ. Է. Բ. Աղայեանի «Ժամանակից Հայերէնի հոլովումն ու խոնարհումը» (Երեւան, 1967) արժէքաւոր աշխատութեան մէջ կատարուած քննարկ լեզուաբանական վերլուծութեան համար կիրառուած եզր-հասկացութիւնները, որոնք քերականագիտական առաւել ամբողջական եւ խոր հետազոտման հնարաւորութիւն են ընձեռնում՝ լեզուական իրականութիւնները պարզի կերպով իմաստաւորելու տեսակետից:

90 Սույն աշխատ., էջ 124:

83 Անդ:
84 Անդ:
85 Անդ:
86 Անդ, էջ 102:

մամբ ոչ միայն ընդարձակում է «չաղաչարութիւն» տերմինի քերականական իմաստը՝ համարժէք դառնալով լեզուական առհասարակ բոլոր միաւորների ենթաստորագասութեամբ փոխադարձաբար իրար յաջորդող մակարդակների բաղադրիչների կապակցելու քիմիան, այլև ընդունում է լեզուի իսկ առթիւնը: Ինչպէս վանկերը յարակցուելով ու բաղադրուելով բառ են կազմում, իր միտքը առաւել յստակութեամբ ընդգծում է Միւնեցին, այնպէս էլ բառերը որոշակի կանոններով յարակցուելով ու բաղադրուելով նախադասութիւն են կազմում:

Ի դէպ, պէտք է ասել, որ լեզուական միաւորների տարբեր մակարդակների առանձին համակարգայնութիւն հանդիսանալը դիպուկ բացատրում է Միւնեցին. բառը դերադաս մակարդակ է համարում վանկի նկատմամբ, այդ պատճառով էլ իր բնոյթով «սեռ» է եւ «տեսակ», նրա յօդաւորիչները անմիջապէս իրեն ստորադաս լեզուական մակարդակի միաւորներն են՝ վանկերը. «...Ձի բառն սեռ է եւ տեսակ՝ ունի զբազում վանգս, - գրում է Միւնեցին, - այսինքն՝ զի այն բառ է յորժամ սասն՝ արկայութիւն՝ եւ արկայութիւն ասելն չորս վանգ է. եւ յայս չորս վանգից մի բառ կատարեցաւ, վասն որոյ բառն սեռ է եւ տեսակ՝ ունի զբազում վանգս»⁹¹: Բայց նախադասութիւնն («բանն») էլ իր հերթին անմիջապէս զերադաս մակարդակ է բառի համար, ուստի եւ «սեռ» է եւ «տեսակ»՝ ընդգրկելով իր մէջ անմիջապէս իրեն ստորադասուող մակարդակի յօդաւորիչները՝ բառերը, որոնք այս դէպքում, «բան»-ի յարաբերութեամբ, առանձին միաւորներ են հանդիսանում. «...Ի բազում բառից կցկցելոյ մի բան կատարի, - միանգամայն ճիշդ կերպով հաստատում է նա, - զի բառն մասն է բանի...: Այսպէս եւ բանն սեռ է եւ տեսակ՝ ունի զբազում բառս, զի ի բազում բառից մի բան կատարի»⁹²: Իրրեւ ենթակայ հանդէս եկող գոյականի («անուան») եւ ստորոգեալ-բայի կապակցմամբ, ասում է Միւնեցին, կազմուում է խօսքը կամ «ըրոյցը». «Դարձեալ՝ անունն ընդ բայի շաղաչարի եւ բանն ցուցանէ, որպէս սակ|ն|՝ Պետրոս գրեաց»⁹³: Սա շատ որոշակի բնութում է պարզ համոզուող նախադասութեան: Այս առթիւ կարելու է նշել, որ Միւնեցին մտածութեան դրսեւորման եռակի ձևեր է ընդունում, որոնք միանգամայն համապատասխանում են իրականութեանը. համաձայն նրա ճիշդ դիտումի, «բան»-ը ունի ներքին մէկ դրսեւորման գոյաձեւ, իսկ արտաքին՝ երկու: Ըստ որում ներքին դրսեւորման գոյաձեւն այն է, երբ «բան»-ը, իրրեւ մտածութիւն, առկայ է միայն մտածողութեան մէջ, իսկ «բան»-ի արտաքին դրսեւորման գոյաձեւերից մէկն այն է, երբ նոյն մտածութիւնը արտաբերուում է կնիդանի խօսքի գործընթացում՝ արտասանական հոսքի հնչերանգային հատուկների ձեւով, միւսը՝ երբ գրաւոր հաղորդակցութեան մէջ հանգէս է գալիս բառերի յարաբերումով կազմուած նախադասութիւնը. «Ի յերիս բաժանի բանն, - գրում է Միւնեցին, - այսինքն նախ՝ ի ներարմարեալն (իմա՝ լուս խորհրդագծութիւնը - Լ. Ն.), երկրորդ՝ ի յաւաջմարեալն, որ է ներխուսեցեալն (բանաւոր արտաբերուող ամփոփ միտքը - Լ. Ն.), երրորդ՝ ներգրեցեալն (գրաւոր արտայայտուած նախադասութիւնը - Լ. Ն.)»⁹⁴:

Յատկանշական է եւ այն իրողութիւնը, որ Միւնեցին «բան»-ի տեսակ-

ները քննում է նաեւ հնչերանգութեան առումով, դադարի նշանների՝ կէտաղբութեան միջոցով որոշելով «անաւարտ», «կիսաւարտ» եւ «աւարտուն» նախադասութիւնները, թէ եւ, հարկ է նշել, հեղինակը չի կիրառել «հնչերանգութիւն» տերմինը, որ լեզուա-քերականագիտական աշխատութիւններում միայն վերջերս է մուտք գործել: Այս առնչութեամբ Միւնեցին գրում է. «Բանն յերիս բաժանի, այսինքն՝ յանկատարն, ի կիսակատարն եւ ի կատարեալն, այսինքն՝ ի ստորակէտն, ի միջակէտն եւ յաւարտակէտն, զի միցնի ի ստորակէտն անկատար է բանն, եւ միցնի ի միջակէտն՝ կիսակատար, եւ այպա միցնի յաւարտակէտն՝ կատարեալ»⁹⁵: Այս հարցադրումը իրօք ունի լեզուա-քերականական տեսական կարեւոր նշանակութիւն, որն իրրեւ նախադրոյթ պէտք է իր հետագայ զարգացումը գտնէր (եւ իրօք դասւ)՝ հայ քերականագիտութեան մէջ:

Բայց Միւնեցին «բան»-ի տեսակները քննում է նաեւ րովանդակութեան առումով, որը որքան տրամաբանական ուսմունքի, մասամբ եւ շարահիւսազրիտութեան համար ակնառու նշանակութիւն ունի: Ըստ այսմ՝ չորս բնոյթի իմաստային հանդիպակադրումներ («հակակայք») արտայայտող նախադասութիւններ են լինում. ա) վերաբերական («առինչական»), բ) ներհակական, գ) մի բանով օժտուած եւ կամ մի բանից զրկուած լինելու յարաբերութիւն ցոյց տուող («պակասական»), դ) հաստատական (ստորաստիւթիւն) եւ ժխտական («բացասութիւն») նախադասութիւնների հանդիպակադրումներ («հակասական»)՝ Այս հարցադրումը, անտարակոյս, կարեւոր նախադրոյթ հանդիսացաւ շարահիւսազրիտութեան մէջ բարդ նախադասութիւնների հանդիպակադրուած մասերի փոխադարձ յարաբերութիւններն ու դերը որոշելու առումով, թէ եւ Միւնեցու ներկայ ձեւակերպմամբ այն աւելի տրամաբանական ուսմունքի համար նշանակութիւն ունի, քան շարահիւսազրիտութեան:

Այս բոլորից Միւնեցին հետեւցնում է, որ «չաղաչարել» տերմինը երկակի իմաստ է արտայայտում. ա) նախադասութիւնների կապակցելուութիւն, ըստ որում լեզուական այնպիսի միաւորների, որոնցով «խօսքն» է բաղադրուում. բ) ենթաստորադաս միւս լեզուական մակարդակների բաղադրիչների կապակցելուութիւն. «Արդ՝ շաղաչարելն երկու բան ցուցանէ, - գրում է նա, - այսինքն՝ որպէս շաղաչարել զբազում բանս ընդ իր|ե|ար, զի բազում վանգ ի մի շաղաչարի եւ այսպէս մին բառ կազմի, որպէս սակ|ն|՝ խաղաղութիւն, - այս մին բառ է, որ ի չորս վանգից շաղաչարմանէ կազմեցաւ, այսպէս անուն եւ բայ շաղաչիւն եւ խաւս՝ եւ զրոյց կազմեց: Երկրորդ՝ «չաղաչարել», այսինքն՝ շաղաչել եւ շարել, այսինքն բազում վանգ շաղաչիւն եւ մի բառ կազմել եւ բազում բառ շարել եւ բան՝ խաւս կազմել. - գալս ցուցանէ շաղաչարելն»⁹⁷: Ինչպէս նկատելի է, Միւնեցու մօտ «խօսք»-ի բնութում լեզուական ամենագերադաս մակարդակն է, որին ստորադասուում է նախադասութիւնը («բան») իր բազմատեսակ միաւորների կապակցելուութեամբ, սրան էլ ստորադասուում է բառը իր տարաբնոյթ միաւորների կապակցելուութեամբ, որին, իր հերթին, ստորադասուում է վանկը իր բոլոր միաւորների կապակցելուութեամբ, վերջինիս էլ ստորադասուում է, ինչպէս այլուր նշել է հեղինակը, տառ-հնչոյթը իր միաւորների ամենաբազմազան դիրքային կապակցելուութեամբ: Ըստ որում հէնց

91 Անդ, էջ 127:

92 Անդ:

93 Անդ, էջ 124:

94 Անդ, էջ 127:

95 Անդ, էջ 127-128:

96 Անդ, էջ 128:

97 Անդ, էջ 124:

կապակցելու փուլում էլ այն ընդհանրությունն է լեզուական տարրեր մակարդակների բաղադրիչների միջև, որ բացայայտում է Միւնեցին:

Ի դեպ, մեր հեղինակը միանգամայն գիտական ճիշդ բացատրություն է տալիս Դիոնիսիոսի քերականական համակարգում «Յազազս հասարակ շաղաշարաց» պարբերոյթի նաեւ անհրաժեշտութեան մասին: Իսկապէս, ընթերցողին տարակուսանք կարող է յարուցել այն իրողութիւնը, որ Դիոնիսիոսը առանձնաբար վանկերի տեսակների մասին արդէն խօսել է առանձին պարբերոյթներով, հետեւաբար ի՞նչ արդարացում կարող էր ունենալ այն, որ «Յազազս հասարակ շաղաշարաց»-ում նորից անդադառնար վանկերի կապակցելութեան խնդրին: Հակասութիւնը, սակայն, միայն երեւութական է, ասում է Միւնեցին. վանկերի տեսակների մասին առանձին պարբերոյթներով Դիոնիսիոսի անդադառնալը թիւադրուած էր այն պահանջով, որ ցոյց տրուի, թէ ի՞նչ առանձնայատկութիւններով տարբերում են առանձին տեսակի վանկերը միւսներից՝ նրանց տարբերութիւնների բացայայտման նպատակով: Այդպէս էլ գրում է Միւնեցին. «Ձի անդ զնոցա զանազանութիւնն ասաց, թէ ի՞նչ զանազանիմ ի միմեանց»⁹⁸: Միւս կողմից՝ «Յազազս հասարակ շաղաշարաց» պարբերոյթի անհրաժեշտութիւնը դիոնիսիոսեան քերականական համակարգում արդարացում է նաեւ նրանով, համոզիչ կերպով փաստարկում է Միւնեցին, որ վանկատեսակների առանձնայատկութիւնների տարբերութիւնները բացայայտելուց յետոյ անխուսափելիորէն կարեւորութիւն է ստանում դրանց ընդհանրութիւնների որոշումը, որին եւ նուիրուած է խնդրոյ առարկայ պարբերոյթը. «Իսկ ասա զհասարակութիւնն ասէ, թէ որպէս հաղորդութիւն ունին առ միմեանս, վասն որոյ շաղաշարութիւնն ասէ»⁹⁹: Ասենք, սակայն, յայտին հիմնադրուած մեկնաբանութիւնը, որ Դիոնիսիոսի քերականական համակարգի խոր ըմբռնման արդիւնք է անշուշտ, գտնում ենք միայն Միւնեցու մօտ, հետեւաբար այն կարեւոր նշանակութիւն է ձեռք բերում, ի դեպ, նաեւ դիոնիսիոսեան քերականական համակարգի ճիշդ ըմբռնման ու բացայայտման իմաստով:

Այնուհետեւ. «Յաղազս քառի» պարբերոյթը մեկնաբանելիս, ի տարբերութիւն նախորդ քերականների, Միւնեցին դարձեալ իւրովի մօտեցում է ցուցաբերում, մօտեցում, որը լեզուի տեսութեան զարգացման առումով, անտարակոյս, ակնբախ նշանակութիւն ունի:

Սկզբիցեւեթ ասենք, որ Միւնեցին այս պարբերոյթում ոչ թէ բառի սահմանումը կամ առանձնայատկութիւնների բնոյթն է քննում, ինչպէս նախորդ քերական մեկնիչները, այլ լեզուական բոլոր մակարդակների յօդաւորիչ միաւորների զբաղումը՝ առանձին ի եւ ընդհանուրի փոխադարձ կապն ու պայմանաւորութեան ընդ որում ակնբախ հմտութեամբ:

Այսպէս, յայտնի է, որ միջնադարի քերականագիտական ըմբռնումներում տարբեր հասկացութիւններ են արտայայտում «վանդ» եւ «փաղապարակ» իրրեւ տարատեսակներ ընդհանրապէս արդի տերմինաբանութեամբ կիրառուող վանկ ընդհանուր հասկացութեան. ըստ որում միջնադարի մեկնողական երկերում «վանկ»-ը համարում է մեր գրչութեան արուեստում ընդունուած վանկաբաժանման այն սկզբունքը, ըստ որի հատուղ տառակապակցութեան սկզբը կամ վերջը ձայնաւոր է, իսկ ձայնաւորի

յաջորդը կամ նախորդը՝ բաղաձայն. «Վանդ է, որ ի մի կողմանէ ունի զձայնաւորն՝ յառաջոյ կամ յետոյ, որպէս ասելիք»՝ աւ-աց-ան կամ սա-տա-նայ»¹⁰⁰

Միւնեցու «փաղապարակ» է կոչուած հատուղ այն տառակապակցութիւնը, որի վանկաբար ձայնաւորը երկու կողմերից եզրափակուած է բաղաձայններով, ներկայ տերմինաբանութեամբ՝ փակ վանկը հէնց փաղապարակութիւնն է. «Իսկ փաղապարակութիւն» որ զձայնաւորն յերկու բաղաձայնիցն ի մէջն ունի, որպէս՝ Սաւ-սոն»¹⁰¹:

Բայց այս իրողութիւններից Միւնեցին միանգամայն իրաւացիորէն հետեցնում է, որ դրանք միեւնոյն ընդհանուր երեւոյթի («փաղապարակութեան») առանձին կամ մասնակի դրսեւորումներն են՝ ճիշդ այնպէս, ինչպէս բանական եւ անբան արարածները առանձին դրսեւորումներն են առաւել ընդհանուր՝ կենդանի հասկացութեան: Այդպէս էլ նա գրում է. «... որպէս կենդանի սեռն ընդհանուր է, եւ փաղապարակ՝ զբանականան եւ զանբանին, այսպէս եւ փաղապարակն հանրական է...»¹⁰²: Այստեղից Միւնեցին եզրակացնում է, որ «փաղապարակ»-ը առհասարակ վանկային ընդհանուր երեւոյթն է, որի մասնաւոր կամ առանձին դրսեւորումները «վանդ»-ն է եւ «փաղապարակ»-ը: Ըստ որում կարեւոր է նկատել, յուշում է Միւնեցին, որ եթէ «վանդ»-ը եւ «փաղապարակ»-ը իրրեւ ուրոյն իրակութիւններ հակադրուած են միմեանց իրենց տարբերակիչ առանձնայատկութիւններով, ապա եւ միաւորում են իրենց ընդհանրութեամբ, այն է՝ երկուսն էլ, վերջին հաշուով, վանկ են հանդիսանում: «Դարձեալ՝ զանապարակութիւնն (իմա՝ տարբերութիւն - Լ. Խ.) սոցա, զի վանդ է, որպէս ասելիք»՝ աւ-աֆի-նու, իսկ փաղապարակն, յորժամ ասես՝ քիւն...: Իսկ հասարակութիւնն (իմա՝ ընդհանրութիւնը - Լ. Խ.), զի յորժամ փաղապարակութիւնն իսկապէս վանդ է, - շարունակում է ամբողջանել իր միտքը Միւնեցին. - ապա ուրեմն միեւնոյն է վանկն եւ փաղապարակն»¹⁰³: Եթէ ժամանակակից գիտական տերմինաբանութեամբ արտայայտուենք, ապա պէտք է ասել, որ սա արդէն ընդհանուրի եւ մասնաւորի հակադրամիասնութեան¹⁰⁴ ըմբռնումն է, թէեւ սաղմնային պատկերացմամբ, որ հետեւողականորէն պաշտպանում է Միւնեցին ոչ միայն վանկի հարցում, այլեւ, որ կարեւորն է, լեզուական միւս մակարդակների յօդաւորիչ միաւորների էական առանձնայատկութիւնները բացայայտելիս:

Այսպէս, բառը ընդհանուր հասկացութիւն է, ասում է նա, որն իր մասնակի դրսեւորումներն ունի յանձինն «անուան», բայի եւ այլ խօսքի մասերի: Ակնարկելով այն մասին, որ մասնակիները անխուսափելիորէն յանգում են ընդհանրոյն, Միւնեցին գրում է. «Իսկ բառն եւ բայն միեւնոյն է, որպէս ասէ ի սահման բային, թէ բայ է բառ անհարկով, ապա ուրեմն բայն եւ բառն միեւնոյն են»¹⁰⁵: Նոյն իրողութիւնն հաւաստելով

98 Անդ,
99 Անդ, էջ 124-125:

100 Անդ, էջ 125:

101 Անդ:

102 Անդ:

103 Անդ, էջ 125-126:

104 Այս տերմինը կիրառուած ենք ոչ փիլիսոփայական առումով, այլ՝ բացառապէս լեզուական իրակութիւնների կապի ու փոխադարձ պայմանաւորութեան նշուած երեւոյթների բնութագրման իմաստով:

105 Անդ, էջ 126:

«անուան» նկատմամբ, հեղինակը գրում է. «Իսկ բառն եւ անունն միեւնոյն են»¹⁰⁶:

Առաւել մեծ ընդհանրացման յանգելով՝ Միւնեցիին իրաւացորէն նշում է, որ խօսքի մասերի փոխարարերութիւնը նոյնպէս հակադրամիասնութեան ընդոյթ ունի ընդհանուր՝ բառի (արդի տերմինով՝ բառոյթի) նկատմամբ. «...թէ ասէ ոք, թէ յորժամ բառն եւ բայն եւ անունն միեւնոյն են, ի՞նչ զանազանին անունն եւ բայն: Պատասխանի, գրում է Միւնեցիին. «գիտելի է, զի ունիմ զանազանութիւն եւ հասարակութիւն...»¹⁰⁷: Այսպէս, բացայայտելով «անունը» եւ բայի տարբերիչ առանձնայատկութիւնը, Միւնեցիին հաւաստում է, որ եթէ անունը առարկայի էութիւնն է ակնարկում, ապա բայը՝ առարկայի փոփոխային յատկանիշը («պատահումն»): «Իսկ որ անունն զէութիւնն ցուցանէ, եւ բայն զպատահումն՝ այսու զանազանին»¹⁰⁸: Բայց եւ միաժամանակ այս երկուսի ընդհանրութիւնն այն է, շարունակում է նա, որ յիշեալ խօսքի մասերը, վերջին հաշուով, հանդէս են գալիս առարկայի ամուսնողական կամ նշանողական դերով. առաջինի դէպքում՝ ակնարկում է առարկան իր էութեամբ, երկրորդի դէպքում՝ նրա գործողութեան ընդոյթը. «... զի որպէս անունն իրին է անուն, նոյնպէս եւ բայն, որ է գործել, գնալ, այսինքն՝ գործելոյն եւ գնալոյն է անուն, այս հասարակութիւն է»¹⁰⁹:

Սակայն նկատենք, որ նախադասութեան եւ նրա տեսակների փոխարարերութիւնը՝ մի կողմից, միւս կողմից՝ առաւել զերազաս մակարդակի՝ խօսքի եւ նախադասութեան փոխարարերութիւնը հեղինակը չի քննում մասնաւորի եւ ընդհանուրի հակադրամիասնութեան տեսակետից: Նա չի քննում նաեւ ամենատարադաս մակարդակի՝ հնչոյթների եւ հնչիւնների փոխարարերութիւնը յիշեալ առումով: Եւ դա ինքնըստինքեան հասկանալի է: Բանն այն է, որ միանգամայն պիտական ճիշդ այդ մտեցման տարածումը նաեւ լեզուական նշուած իրողութիւնների նկատմամբ պահանջում է առաւել մեծ եւ համապարփակ վերացարկման (արստրահման) ներուսկայութիւն, որին դեռեւս չէր յանգել (եւ չէ՛ր կարող յանգել այն ժամանակ) զիտական մտածողութիւնը:

Այնուամենայնիւ, հարկ է նշել, որ առանձինի եւ ընդհանուրի հակադրամիասնութեան ըմբռնումը քերականական մեկնողական գրականութեան մէջ, թէեւ ոչ ամբողջական, այնուամենայնիւ արժէքաւոր նուաճում էր Առաքել Միւնեցու կողմից: Բնականաբար՝ այդ ըմբռնման հետեւողական տարածումը լեզուական միաւորների բոլոր մակարդակների նկատմամբ՝ չափազանց բեղմնավոր արդիւնքներ կը տար լեզուի համակողմանի եւ խորաբնի ուսումնասիրման առումով՝ հնարաւոր դարձնելով բացայայտումը բուն իսկ լեզուի, իբրեւ մտածողութեան ձեւաւորման թաղանթի եւ հասարակական հաղորդակցման միջոցի, էութիւնը: Սակայն, ժամանակի գիտական մտածողութեան սահմանները չափազանց նեղ էին՝ յանգելու համար նման վերացարկման համապարփակութեանը, որ ընտրոջ դարձաւ միայն 20-րդ դարին:

Միջնագրի լեզուա-քերականական տեսութեան զարգացման իմաստով Միւնեցիին պաշտպանում է կարեւոր մի գրոյթ եւս՝ ամբողջական քննութեան

ենթարկելով առաջադրուած հայեացքի բոլոր ելակէտները: Դա խօսքի մասերի («մասունք բանի») քերականական կարգի տեսական հիմնաւորումն է, որ նախորդ քերականներից մասնակի քննութեամբ առաջ էր քաշել գեռեւս վարպետ Արեւելցիին¹¹⁰: Ըստ որում պէտք է նկատել, որ սոյն եզր-բառակապակցութեան քննութեամբ, տուեալ դէպքում, ոչ թէ սոսկ բառական ճշգրտման նշանակութիւն ունի, այլ, հիմնականում, լեզուա-քերականական տեսական փաստարկման արժէք եւ իմաստաւորում:

Այսպէս, այն հարցին, թէ ինչո՞ւ Դիոնիսիոսի հայ թարգմանիչը, հետեւելով ընազրին, «մասունք» տերմինն է գործածել, եւ ոչ՝ «տեսակ», Միւնեցիին պատասխանում է մի շարք լուրջ փաստարկների առաջբաշմարտաւիճ հերթին՝ «մաս»-ը, միջնագրի տեսական ըմբռնմամբ, առաւել մեծ, նոյնիսկ «զերազաս» ընդհանրութիւն ունի, քան «տեսակ»-ը: Բացի դրանից, «մաս»-ը հասկացութեան ծաւալային ընդգրկման բնոյթով եւ «սեռ» է, եւ «տեսակ», քանի որ այն օժտուած է յատկանիշներ («զհետեւեալան») ունենալու իրողութեամբ. նման հաւաստման համար հեղինակը ելնում է «խօսքի մասերի» եւ «քերականութեան մասերի» տարբերակում ըմբռնումից: Նա գրում է. «Նախ՝ զի մասն գերագոյն է բան գտեսակն: Զի մասն սեռն է եւ տեսակ, ունի գիտեսակն իր, վասն որոյ ի սկզբանն ասաց քերականիս, թէ վեց են մասունք քերականութեան»¹¹¹: Ըստ որում քերականութեան վեց մասերից իւրաքանչիւրը, միջնագրեան քերականագիտութեան ըմբռնմամբ, հաւասարարժէք նշանակութիւն ունի լեզուաբան-քերականագէտի ճանաչման համար, քանի որ անխուսափելի անհրաժեշտութեան է գիտում քերականութեան վեց մասերի կէ միաժամանակեայ եւ հաւասարաչափ իմացումը յիշեալ ուսումնական կողմից, այսպէս՝ թէկուզեւ դրանցից միայն մէկի նկատմամբ թոյլ տրուած թերացումը զրկում է նրան իբրեւ այգլպիսին ճանաչուելուց, ուստի եւ նա «կատարեալ քերթող» չի կարող համարուել. «...թէ ի վեց մասանցն միով պակաս գտանի քերթողն, գրում է Միւնեցիին, ոչ ասի քերթող կատարեալ»¹¹²: Այս կէտում քերականութիւնը, իր բոլոր բաղկացուցիչ մասերի պարտադիր իւրացման եւ հմտութեան պահանջով, հասկաց տարբերում է, ըստ մեր դպրութեան, ճարտասանութիւնից. վերջինիս ընագուստում բաւական է նրա բաղկացուցիչ երեք «տեսակներից» միայն մէկի լիովին տիրապետումը, որ ենթական ճանաչուի որպէս «կատարեալ ճարտասան»: Այդպէս էլ գրում է Միւնեցիին. «Իսկ ճարտասանն՝ ոչ այսպէս, զի յերից տեսակաց ճարտասանութեանն՝ ի յատնականէն եւ ի բաղոտականէն միայն զկացողականն (իմաս՝ տոնահանդէսային-հրապարակախօսային բնոյթի հետորութիւնը - Լ. Ս.) գիտէ՝ ճարտասան է»¹¹³:

Այնուհետեւ. «մաս»-ը, ի տարբերութիւն «տեսակ»-ի, տրոհում է իր յատկանիշների, որոնցից իւրաքանչիւրը միւսի նկատմամբ նախամեծարութեամբ չի հակադրուում միւսին, այսինքն՝ չունի ստորադասութեամբ պայմանաւորուած յաջորդականութիւն: Այս իմաստով նա նոյնական է «սեռ»-ին եւ ոչ թէ «տեսակ»-ին, որի բաղադրիչները ստորադասութեամբ պայմանաւորուած յաջորդականութիւն են ճանաչում. «Մասն գիտեսակն իր երեք

110 Տե՛ս մեր աշխատասիրութիւնը՝ «Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի», ՀՍՍՀ 9-Ա Հրատարակչութիւն, 1972 թ.:

111 Սոյն աշխատ., էջ 128:

112 Անդ.:

113 Անդ., էջ 128-129:

106 Անդ.:

107 Անդ.:

108 Անդ.:

109 Անդ.:

եւ կրսեր ոչ ունի... իսկ ճարտասանն երէց եւ կրսեր ունի, զի յա-
տենականն նախ ամբաստանեն է, եւ ապա՝ պատասխանեն»¹¹⁴: Այստեղից
ինքնին հետեւում է, որ սեռը տեսակների տրոհուելիս, տեսակները հա-
ւասար յարաբերութեամբ են աւելում սեռի նկատմամբ, բայց իրար նկատ-
մամբ՝ անհավասար: Այլ կերպ ասած՝ տեսակներից իրաքանակները սեռի
հանդէպ նոյն արժէքն ունի՝ առանց նախամեծարութեան որեւէ նշոյլի,
իսկ տեսակները իրար հանդէպ՝ օժտուած են նախամեծարութեան քնակամ
կամ քարոյշակամ հիմունքով:

Մասերի եւ տեսակների մի կարեւոր տարբերութիւնն էլ այն է, ասում
է Միւնեցին, որ մասերից մէկը կամ մի քանիսը եթէ հեռացուեն, ապա
տուեալ առարկան իրրեւ այդպիսին դեռեւս գոյութիւն կարող է ունենալ,
մինչդեռ եթէ տեսակի գոյահիմքերից մէկնումէկը՝ հեռացուի, տեսակն իրրեւ
այդպիսին այլեւս ի չիք կը դառնայ, կը դադարի գոյութիւն ունենալուց:
«զի գոտանակ յորժամ բաժանեմք՝ չքաւորի, որպէս մարդ՝ յորժամ բաժա-
նեմք ի հոգի ի մարմին եւ ի միտք, ոչինչ մնայ ի տեղն: Իսկ գմատուքն
թէպէտ բաժանեմք՝ բոլորն մնայ, որպէս գձառն բաժանեմք ի ճիւղ, ի տե-
րեւ, ի ծաղիկ եւ ի պտուղ՝ դեռեւս բոլորն մնայ, այսինքն՝ թէպէտ մի
ճիւղ ի ծառէն հատանի՝ եւ տերեւն, եւ պտուղն, դեռ ծառն ի տեղն է: Իսկ
մարդն՝ թէ մին մասն յերիցն, այսինքն՝ կամ հոգին, կամ մարմինն, (կամ
միտքն) պակասի, այլ ոչ մնայ մարդն բոլոր»¹¹⁵: Բնականաբար շատ արժէ-
քաւոր կը լինէր այս դրոյթի պաշտպանութիւնը իր համեմատութիւննե-
րով, եթէ այն կրնարեացուէր նաեւ լեզուի նկատմամբ, որով բացայայտ
կը լինէր հեղինակի շափազանց ուշադրաւ հայեացքը: Սակայն մեկնիչը
բաւարարում է սոսկ յայտարարելով, իրրեւ եզրակացութիւն, թէ «վասն
որոյ մասունք ասէ քանիք, եւ ոչ՝ տեսակ»¹¹⁶: Բայց ենթատեքստից ինքն-
բարեբան քննող հետեւութիւնն այն է, որ խօսքի մասերից մէկնումէկի
բացակայելու դէպքում էլ լեզուն չի չքանայ, գոյութիւն ունենալուց չի
դադարի: Իսկ դա նշանակում է, որ խօսքի մասերը ոչ թէ հոմոթեանական
անբաժանելիութիւն են, այլ՝ պայմանական բնոյթի, որոնցից մէկի կամ մի
քանիսի բացակայութիւնը ճակատագրական նշանակութիւն ունենալ չի կա-
րող այս կամ այն լեզուի գոյութեան եւ յարատեւման համար: Սա այն-
պիսի բեղմնաւոր մի հետեւութիւն է, որ արդի լեզուաբանական տեսութեան
համար ունի ելակէտային նշանակութիւն:

Հեղինակի միւս փաստարկը՝ խօսքի մասեր եւ ո՛չ թէ խօսքի տեսակներ
ընդունելու օգտին՝ այն է, որ ամբողջը («բոլոր»), ինչպէս եւ սեռը, մասե-
րից է բաղկացած լինում, եւ ո՛չ թէ տեսակներից, մինչդեռ տեսակները
անբաժանելի միաւորներից՝ «անհատներից», հետեւաբար՝ ամբողջի «պատ-
ճառը» կամ բաղադրիչը մասն է, որովհետեւ եթէ չլինի մասը, չի լինի
նաեւ ամբողջը: Այստեղից էլ եզրակացութիւնը միանշանակաբար ակնբայն է՝
պատճառը (որ մասն է) առանց նախամեծար է, քան պատճառի արդիւնքը
(որ ամբողջն է): Միւս կողմից՝ «անհատ»-ը այն «նուազագոյն» տեսակն է
(«տեսակագոյն») կամ առանձինը, որից կազմուած է տեսակը: «...Ձմասն
սեռն զնէ, զի բոլորն ի մասանցն բաղկանայ, եւ տեսակն՝ յանհատից,
մասն է պատճառ բոլորին, - գրում է նա: - Եւ մեծ է պատճառն, քան

114 Անդ, էջ 129:

115 Անդ:

116 Անդ:

զպատճառելին, վասն որոյ Արիստոտէլ զանհատն ասէ տեսակագոյն, եւ
զտեսակն՝ ի նմանէ»¹¹⁷:

Նշենք, սակայն, որ քննարկուող հարցադրումը հայ քերականական
մեկնողական գրականութեան մէջ առաջին անգամ, հիմնադրոյթային բնոյ-
թով, առաջ է քաշել դեռեւս Դաւիթ Անյաղթը, բայց Միւնեցին առաւել
հիմնաւորմամբ փաստարկելով զարգացնում ու ամբողջացնում է: Իհարկէ,
իր այս դատողութիւններում Միւնեցին մասամբ յենում է նաեւ Արիստո-
տէլի վրայ, որը եւ չի թաքցնում ինքը: Բայց Միւնեցու ծառայութիւնն
այն է, Վարդան Արեւելցու հետ միասին, որ տեսական այս կանխադրոյթ-
ները փորձ է անում տարածել լեզուի ուսումնասիրութեան քնազատը՝
քերականութեան գիտակարգի փիլիսոփայական ընդհանուր տեսական մա-
կարդակը առանց քարձր հիմքերի վրայ դնելու սեւեռում նպատակով¹¹⁸:

«Յաղագս քաղի», մասամբ էլ «Յաղագս քանի» պարբերոյթները մեկնաբա-
նելիս Առաքել Միւնեցին առանձին դէպքերում իրրեւ ելակէտ ընդունում է
Դաւիթի եւ Ստեփանոս Միւնեցու նկատառումները, սակայն խորացնելով եւ
ընդլայնելով դրանք՝ յանդում ուշադրաւ ընդհանրացումների:

«Հողովի» ըմբռնումը Առաքել Միւնեցու մօտ, պէտք է ասել, դեռեւս
առաձգական է եւ միայն հակասութիւններն ու տարտամութիւնների յաղթա-
հարման ճանապարհով հասնում գիտական բիրեղացման. մի դէպքում՝
«հողով»-ի քերականական կարգը գիտում է լայն առումով՝ իրրեւ առհասարակ
քաղի բեմում՝ ինչպէս գոյականի, այնպէս եւ քաղի, միւս դէպքում՝
նեղ առումով՝ իրրեւ գոյականի (նաեւ ածականի, թուականի, զերանուան)
բեմում: Այս երկուութիւնը, սակայն, դեռեւս պայիս է թրակացուց եւ
Առաքել Միւնեցուն նախորդող հայ քերական մեկնիչներից: Ըստ որում
յատկանշական է, որ թէ՛ քաղի եւ թէ՛ գոյականի միավանկ բառաձևերը
մեր հեղինակի կողմից համարում են «անհողով» դրսեւորումներ: «Որ-
պէ՞ս է քաղն անհողով քառ» իր հարցադրմանը Առաքել Միւնեցին պատաս-
խանում է՝ որոշելով իր ըմբռնումը «անհողով» քերականական հակացու-
թեան մասին. «...միավանկի բառն է անհողով, որպէս ասել ին»՝ ե՛լ, ե՛րբ,
նի՛ստ, գո՛րծ, քե՛ր, տա՛ր...»¹¹⁹: Սա դասական հայերէնի համար քերական-
նագիտական արժէք չնեղակայցնող պնդում է, որովհետեւ, ինչպէս յայտնի
է, «անհողով» հակացութիւնը ամենեւին պայմանադրուած չէ քաղի «միա-
վանկութեան» հանգամանքով, ոչ էլ քաղի հրամայական բնոյթով: Միւս
կողմից՝ «հողովի»-ի ըմբռնումը նոյնպէս չի արգարացում այն փաս-
տարկմամբ, որ երկավանկ «զնա՛», «զորձեա՛» հրամայական բառաձևերը
միասամանակ նկարկում են «զնացողին» ու «զորձողին», այդ պատճառով

117 Անդ:

118 Նկատենք, որ Միւնեցու աշխատութիւնը քննելիս Փրոֆ. Գ. Ջահուկեանը շեշտը դե-
բաղանջապէս դրել է ոչ թէ այն քանի վրայ, թէ իր նախորդների նկատմամբ ինչ նոր հայեացք-
ներ է զարգացրել լեզուի ու քերականութեան տեսութեան հարցերում, այլ՝ թէ ինչ չի կարո-
ղացել լուծել արդի լեզուաբանական եւ քերականագիտական ըմբռնումների յարաբերութեամբ:
Այդ պատճառով էլ ստուշայպէս քայտական բնութագրումների է արժանացել Միւնեցին, քան
դրական զնահատականի ընդհանրապէս: Հէնց այդ տրամադրութեամբ էլ Փրոֆ. Ջահուկեանը
զարձեղ փոստական տեսակելիւնով է ներկայացրել նախազատութեան եւ խօսքի մասերի տեսա-
կան հիմնարկման բոլոր այն արժէքաւոր գիտողութիւններն ու հետեւութիւնները, որ Միւ-
նեցու անտարակուսելի ներդրումն են անշուշտ միջնադարի քերականագիտական մտքի զար-
գացման պատմութեան մէջ (տե՛ս նշուած աշխատութիւնը, էջ 298-321):

119 Սոյն աշխատ., էջ 130:

էլ զրանք, իբր, «բայանուն» պէտք է համարուեն. «Իսկ ասելն գնա՛, գործնա՛ եւ այլն՝ հոլով ցուցանեն,- գրուած է նա,- զի ցուցանէ զպնացաւըն եւ որ գործեալն ի նմանէ հոլովեալ»¹²⁰:

Երբեմն էլ բայիմաստ Առաքել Միւնեցիին նոյնացնում է «բայանուն» հետ, որպիսի ըմբռնումը նոյնպէս ընդունելի չէ: Իհարկէ՝ Միւնեցու հարցադրումն այն մասին, որ «է՛լ ուրեք, զի բայն անուն ցուցանէ» միանգամայն ճիշդ է, եթէ այն վերաբերի միայն իսկական բայանուններին (ինչպէս՝ շարժումն, խոստումն, դեգերումն եւ այլն), սակայն բերած լեզուանմուշներէից եւ դրանցից բնեցրած հետեւութիւններից պարզուած է, որ հետզհետեւ շարաշար վրիպել է: Չկարողանալով տարբերակել բայանունն ու բայիմաստը՝ Միւնեցիին նոյնացնում է դրանք վերջինիս առումով. «...զի յորժամ ասեմք՝ գնաց կամ գրեաց կամ խաւսեցաւ կամ գործեաց,- զանունն զնախնայն եւ զգրելոյն եւ զխաւսելոյն եւ զգործոյն յայտնէ, ըստ այսմ բայն անունն է»¹²¹:

Սակայն այս սայթաբումների ու խորխափումների յաղթահարման ճանապարհով Առաքել Միւնեցիին ի վերջոյ յանգում է ճիշդ հետեւութիւնների՝ սուհասարակ «հոլովի» ըմբռնման հարցում. «հոլովի» հակացութիւնը, իբրեւ քերականական կարգ, վերջնականապէս վերադրուած է անուանը, եւ կարականապէս մերժուած բայական համակարգի համար էլ նրա բնորոշ լինելը՝ գրելով. «Դարձեալ ընդհանուր անուն ուղղական, որպէս ասելն՝ անուանիսկ հոլով, որպէս ասելն՝ անուանց կամ անուանի կամ անուանելոյ: Իսկ բայն ոչ հոլովի, զի թէ ասես՝ գրեմի, նստեմի կամ նստեմոյ, կամ գրեմոյ,- այս ոչինչ նշանակէ»¹²² Յստակ այս դիրքորոշումը անտարակուսելի է դառնում նաեւ նրա այն ճիշդ պնդումով, որ «հոլովական» միակ դէպքը եթէ վերաբերում է «բային», ապա դա միայն իբրեւ գոյական բառ հանդէս եկող «բայ» բառոյթն է. այս դէպքում, սակայն, իբրեւ «անուան» համակարգին պատկանող բառ, ասում է Միւնեցիին, բնականաբար «հոլովում» է. «Դարձեալ՝ կերպիւ ինչ ասի ուղղական եւ հոլով բայի ուղղական, որպէս ասելն քայլ, իսկ հոլովական, որպէս ասելն՝ քայլոյ կամ քայլի»¹²³:

Տեսական առումով շատ կարեւոր հարցադրում է խօսքի մասերի եւ նախադասութեան անդամների գատորշման խնդիրը, որ Առաքել Միւնեցիին արժարծում է «Յազգաւ բառի» պարբերոյթում:

Ի դէպ, նախորդ քերական մեկնիչներից միայն Ստեփանոս Միւնեցիին է, որ առաջադրել է խօսքի մասերի եւ նախադասութեան անդամների տարբերակումը ըմբռնումը, որը եւ անվերապահօրէն ընդունել է մեր հեղինակը: Ստեփանոսի մօտ կարգում ենք. «...զի որոշողութեամբ... յուրամասանց քանի մի առ կատարելն մակացութիւն եւ որ միացուցանեն յաւղիք անդամ լինել քանի...»¹²⁴: Այս ձեւակերպումը զարգացուած է առաւել ճշգրտութեամբ ընդհանրացուած է Առաքել Միւնեցու երկում. խօսքի մասերից իւրաքանչիւրը բառ լինելով հանդերձ, ասում է նա, միաժամանակ հանդիսանում է նախադասութեան անդամ իր կապակցելիութեամբ միւս բա-

ռերի հետ, որով զրսեւորում է մտածութիւնը («զտրամախոհութիւնն») սպառիչ ամբողջութեամբ («ինքնակատար» կերպով). «...զի ուր մասանց քանի իւրաքանչիւրք բառ կոչին,- հաւաստում է նա,- զի բառ առ բառ շարագրին եւ միմեայ յաղիւք եւ անդամք կազմի քանին եւ յայտնէ զտրամախոհութիւնն իմնակատար»¹²⁵:

Բնականաբար՝ այս առնչութեամբ տեսական նախադրոյթային նշանակութիւն ունի թրակացու հարցադրումն այն մասին, որ «բան է հետեւակ բառի շարագրութիւն՝ զտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով»¹²⁶: Իսկապէս՝ առաջին հայեացքից ժամանակակից լեզուաբան-քերականագէտի համար տարօրինակ կը թուայ այն, թէ ինչո՞ւ բառը բնութագրուած է նախադասութեան մէջ իբրեւ «հետեւակ»՝ համեմատուելով բանակային զօրամիաւորումների այդ տեսակի հետ, որը ենթադրում է նաեւ «հեծեալների» համար «կառավարի» առկայութիւնը: Նախորդ քերականներից զարձակ Ստեփանոս Միւնեցիին է միայն, որ բառը մեկնում է պատկերաբար ձեւով՝ իբրեւ «խորհրդոց կառավար», որով եւ բացայայտում է լեզուի իսկ էութեան երկու գլխաւոր գործառոյթներից մէկը՝ առաջնայինն ու եկակէտայինը, այն է՝ լեզուի՝ մտածութեան զրսեւորման ձեւաւորումն հանդիսանալու իրողութիւնը: Դիոնիսիոսեան նշուած կանխադրոյթի այս կարեւոր ընդհանրացման յանգելը լեզուաբանութեան տեսութեան բնագաւառում՝ պատիւ է բերում միջնադարի մեր հայ քերականագիտութեանը:

Բառը նաեւ «հեծեալ է», շարունակում է պարզաբանել Ստեփանոս Միւնեցիին, «այլեւ սղալութեանց ինչ ուղղիչ եւ դատաւոր»¹²⁷ քերականութեան յայտնի վեց բաժինների նկատմամբ՝ գիտական ամենաճշգրիտ ձեւակերպումներ արձանագրելու իր դերի շնորհիւ («բոստ վեց մասանց լաւագունին յամենեցունց արուեստական ասիցն»¹²⁸): Ասուածից հնարաւոր է հետեւեցունել, որ բառը, եւ նրա միջոցով ընդհանրապէս լեզուն՝ հակադարձ մեր-գործմամբ նպաստում է ճիշդ գատորշութիւններ կազմելուն եւ մտածողութեան վրիպումները վերացնելուն: Եթէ այդ աշրպէս է, ապա տեսական կարեւոր ընդհանրացման արգասիք պէտք է համարել բառի այս կարգի բնութագրումն ու մեկնարանումները:

Պատահական չէ, որ մեր հեղինակը եւս հէնց Ստեփանոս Միւնեցու այս դրոյթները իր քննական տեսազաւտում ունենալով առաւել մանրամասնում ու հանգամանօրէն մեկնարանում է դրանք:

Գրաւոր խօսքում, ասում է նա, բառը «կառավար» է այն իմաստով, որ նախադասութեան ամբողջականութիւնն է ապահովում այլ բառերի հետ կապակցուելու իր ներքին մղումով, միաժամանակ «հեծեալ» է, որովհետեւ ստորոգեալ հանդիսացող բառի՝ քայլի միջոցով աւարտի է հասցում մախաղասութիւնը. «Եւ է՛ բառն կառավար եւ հեծեալ, այսինքն՝ զի շարագրեալ բառն կառավար է, եւ հեծեալ՝ քայլին, զի ժամանեաց առ քանն»¹²⁹, - հաստատում է Առաքել Միւնեցիին:

Ելնելով այն ըմբռնումից, որ բառոյթը ստորաբաժանում է խօսքի

120 Անդ: 121 Անդ, էջ 136: 122 Անդ: 123 Անդ: 124 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 201:

125 Սոյն աշխատութիւնը, էջ 130: 126 Տե՛ս, Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 12: 127 Ն. Աղոնցի հրատարակած քննարկում «անդատար» աղճատուած բառաձեւն է ոգտագործուած՝ «եւ գատաւոր» ընթերցման փոխարէն. ուղղում ենք ըստ Առաքել Միւնեցու սոյն աշխատութեան, էջ 130: 128 Ն. Աղոնց, էջ 12: 129 Սոյն աշխատ., էջ 130:

մասերի եւ միաժամանակ այն յանգեցում է «հետեւակին», Առաքել Սիւնեցին նոյն այդ հիմունքով «հետեւակը» համարում է «սեռ»։ «Հետեւակն սեռ դնէ, զի բաժանումն ունի»¹³⁰, - գրում է նա։ Իսկ «հետեւակ» է համարում բառոյթը այն պատճառով, որ ընթերցման ժամանակ շարակարգային յաջորդականութեամբ միմեանց հետեւող բառերն ենք ընկալում մենք եւ գրեցին էլ բազմաթիւ բառեր իրար ետեւից շարայարում ենք՝ նախադասութիւն կազմելու համար. «Նախ՝ հետեւակ գայն ասէ, - պարզաբանում է Առաքել Սիւնեցին, - յորժամ մեք հետեւիմք բառից եւ գրագում բառն շարադրեմք, յորմէ կատարի բանն»¹³¹։ Բացի այդ, բառի «հետեւակ» լինելու երկրորդ հիմքն այն է, որ «հեծեալի» առկայութիւնը ինքնըստինքեան է ենթադրուում։ Այսպէս, նախադասութիւնը քերականութեան եւ ընդհանրապէս գրականութեան մէջ հետեւակի նման խիստ յաջորդական շարքով ստղանցում է իր նախորդին, իսկ իր յաջորդն էլ՝ իրեն. այս դէպքում՝ քերականը կամ գրողն էլ «հեծեալ» է համարում, որովհետեւ նա իր տրամադրութեան տակ պոտենցեալ ձեւով ունենում է բազմաթիւ նախադասութիւններ. այլ կերպ ասած՝ բազմաթիւ վանկերից ու բառերից նախադասութեան անդամներ կազմելով նա իր մտածողութիւնը առաջ է շարժում՝ ինչպէս հեծեալը հետեւակայիններին։ Այդպէս էլ գրում է Առաքել Սիւնեցին. «Երկրորդ՝ զի հետեւակն զհեծեալն ցուցանէ, այսինքն՝ զի բանն ի քերականն հետեւակն է. իսկ քերականն՝ հեծեալ, որ գրագում բանն ունի, այսինքն՝ ի բազում վանկից եւ կաղ ի կաղ բառիցն ժողովէ եւ անդամք բանին կազմէ...»¹³²։ Խնդիրն այն է, որ իրարից անկախ՝ անկապակցուած սուանձին բառերը ոչ մի մտածութիւն արտայայտել չեն կարող, այլ միայն շարակարգային կապակցութեամբ հանդէս եկող բառերի յարադրումը ի վիճակի է «ձածկուած» մտածութիւնը ի յայտ բերել. «Զի առանձին-առանձին բառերն, առանց շարագրութեան, - իրաւացիորէն պնդում է Առաքել Սիւնեցին, - ոչինչ յայտնէ ի ներտրամադրեալ բանիցն, ... զի շարագրութիւն բառիցն գծածկեալ բանն, որ կայ ի միտքն մարդոյ՝ յայտնի ցուցանէ»¹³³։

Անդրադառնալով լեզուի եւ մտածողութեան պրոբլեմին, Սիւնեցին զարմանալի ճշմարտացիութեամբ պնդում է, որ «ձայնի» (որ նրա մօտ նոյնն է թէ՛ յօդարաչիս հնչիւնների) յարակցումը կամ պարուրումը մտածութեանը կամ իդէական բովանդակութեանը հնարաւորութիւն է ստեղծում «ներքին խօսքի» դրսեւորմանը՝ վեր ածելով այն ոչալութեան նաեւ ուրիշներ համար. «Լծորդեալ լինի ձայն ընդ բանին, որով ներարմադրեալ բանն արտաբերեալ լինի ի լուր բազմաց»¹³⁴։

Այլուր առաւել համակողմանիորէն քննելով ու զարգացնելով լեզուի եւ մտածողութեան փոխյարաբերութեան իր այս ճիշդ հարցարումը, հեղինակը գտնում է, որ յօդարաչիս հնչիւնները պարուրելով մտածութեանը՝ այն արտաբերում եւ «խօսք» են կազմում. «զի ձայն ընդ բանին ոլորեալ միաւորի եւ արտաբերեալ իսաւր կազմի»,¹³⁵ կարողւմ ենք նրա մօտ։ Յատկանշական է եւ այն, որ Առաքել Սիւնեցին լեզուի եւ մտածութեան փոխ-

130 Անդ, էջ 131:
131 Անդ:
132 Անդ:
133 Անդ:
134 Անդ, էջ 155:
135 Անդ, էջ 189:

յարաբերութիւնը դիտում է, որքան էլ անհաւանական թուայ այդ ժամանակի համար, տարբերակման ու միասնութեան մէջ. «ներքին խօսքը» որքան էլ արտաբերում է յօդարաչիս հնչիւնների միջոցով, այնուամենայնիւ մտածութիւնն ու լեզուն երբեք նոյնական չեն, ասում է Առաքել Սիւնեցին, քանի որ առանց յօդարաչիս հնչիւնների արտաբերման մտածութիւնը սակայ է իբրեւ «ներքին խորհրդածութիւն»։ Այս առթիւ նա քննում է մտածութեան գոյածեւերը. մտածութիւնը կամ իմաստային բովանդակութիւնը երկու կարգի ընդհանուր գոյածեւեր կարող է ունենալ, ասում է Առաքել Սիւնեցին. մէկը՝ իբրեւ ներքին խորհրդածութիւն, իսկ միւրը՝ լեզուականօրէն արտաբերուածը Հէնց խօսքի միջոցով. «... Բանն յերկուս բաժանի, այսինքն՝ ի ներտրամադրեալ բանն եւ յարտաբերեալին. իսկ յարտաբերեալ բանն ի ձեռն իսաւր յայտնի»¹³⁶։ Ընդ սին՝ եթէ առանց լեզուականօրէն արտաբերուածի այնուամենայնիւ մտածութիւնը կամ իդէական բովանդակութիւնը առկայ է իբրեւ «ներքին խորհրդածութիւն», ապա առանց մտածութեան էլ՝ բառիմաստից զուրկ ձայնը, իր հերթին, ասում է Սիւնեցին, նման է «անիմաստ շունչի», որ յատուկ է կենդանիների բացակայութեան հետեւին։ Այդպէս էլ գրում է նա. «Զի առանց ձայնի բան ի ներտրամադրեալն է, եւ առանց բանի ձայն անբան շնչոյն է, որպէս անբանիցն է»¹³⁷։ Հարցադրման այս տեսանկիւնից ինքնըստինքեան հետեւում է, որ ամէն անգամ լեզուական համակարգի վերարտադրումը պայմանաւորուած է իր քովանդակութեան առկայութեամբ՝ մտածութիւնների դրսեւորմամբ. ըստ որում բառական շեշտը (իր տերմինով՝ «շեշտուոր») այն միջոցն է, որով մտածութիւնը «ձայնի» հետ միահիւստելով կամ պարուրելով արտաբերում է. «Իսկ շեշտուոր է՝ որ բանն ձայնիւ միաւորեալ, հիւսեալ եւ ոլորեալ հնչի»¹³⁸։ Այստեղից ուղղակի բխում է լեզուաբանական տեսական այն կարեւոր հետեւութիւնը, որ բառական շեշտը մարդկային իւրաքանչիւր լեզուում ունի վնտական նշանակութիւն՝ իմաստ ու հնչիւնների միասնութիւնը ապահովելու եւ երաշխաւորելու խնդրում։ Սա այնպիսի արժեքաւոր ընդհանրացում է, որին նախորդ քերական մեկնիչներից եւ ոչ մէկի մօտ չենք հանդիպում։

Այնուհետեւ-հայ քերականագիտութեան մէջ առաջին անգամ Առաքել Սիւնեցին է, որ մտածութեան («անմարմին բան») դրսեւորման երեք գլխաւոր ձեւերի մասին է խօսում, այն է՝ մտացի տեսողութեամբ պատկերների, օդի արտաբերմամբ «նիւթական ձայների», եւ թանձրացական՝ «զգալի նիւթ» հանդիսացող զրի մասին, որոնցից իւրաքանչիւրով առարկայանում է մտածութիւնը. «... Լծորդի անմարմին բանն ընդ երիս ենթակայ, - գրում է Առաքել Սիւնեցին, - այսինքն՝ ընդ տեսութիւն մտաց մեքոց եւ ընդ նիւթական ձայնից, որ ընդ շնչոց, ընդ զգալի նիւթ գոյոյն, որով երեք անուանակալութիւն առնու բանն, այսինքն՝ ներտրամադրեալ, ներխուսեցեալ, ներգրեցեալ»¹³⁹։ Հարկ է նշել, որ նման ճշմարտութեան յանգումը լեզուի տեսութեան այնպիսի հետեւութիւն է, որ դժուար է մինչեւ անգամ գերագնահատել։ Արձանագրենք նաեւ, որ ժամանակակից գիտական լեզուաբանութեան տեսութիւնը մտածութեան կամ իդէական բովանդակութեան դրո-

136 Անդ, էջ 181:
137 Անդ, էջ 189:
138 Անդ:
139 Անդ, էջ 155:

ւորման հէնց նոյն երեք ձեւերն է ընդունում¹⁴⁰, որ մտանշնում է Առաքել Միւնեցիին: Ի դէպ, արդարացի է Փրոֆ. Գ. Զահուկեանը իր գնահատականում, երբ գրում է. «Ձկարգոյանալով հասնել մտքի եւ խօսքի, մտածողութեան եւ լեզուի գիտելիտիկական յարաբերութեան ըմբռնմանը՝ Առաքելը միտքը կտրում է խօսքից եւ նրան նախորդել տալիս, մտքի ձեւաւորումը արտայայտութեանը հաղորդում է կամային հիմք, կարծում, որ մարդիկ նախ մտքի մէջ պատրաստում են խօսքը, ապա արտայայտում»¹⁴¹: Միւնեցուն հասցէագրուած դիտողութիւնը, կարծում ենք, անտեղի է: Ինչպէս վերը ցոյց տուցինք, Միւնեցին միանգամայն իրաւացի է, երբ պարզապէս տարբերում է մտածութիւնը եւ նրա ձեւաւորումը կերպաւորող ու հաղորդումը հնարաւոր դարձնող լեզուական համակարգից, որն իր հերթին դրսեւորման տարբեր եղանակներ ունի: Հէնց այն հանգամանքը, որ Միւնեցին չի նոյնացնում մտածութիւնը նրա արտայայտչաձեւի՝ լեզուական թաղանթի հետ, հեղինակի տեսական խոր ըմբռնողութեան արգասիք պէտք է համարել: չէ՛ որ մտածութիւնը օբյեկտիվ իրականութեան եւ նրա յարաբերութիւնների արտացոլքը լինելով՝ լեզուականորէն արտայայտուած իւրաքանչիւր նախադասութեան բովանդակութիւնն է կազմում, իսկ այդ յստակ պատկերացնելը հեղինակի անտարակուսելի ներդրումն է անշուշտ: Բացի այդ, որ կարեւորն է՝ Միւնեցին միանգամայն գիտական ճիշդ հայեացք է զարգացնում այն մասին, որ մարդկային մտածողութիւնը իր կերպաւորմամբ աղբւրում է ոչ միայն լեզուին (ըստ որում՝ բանաւոր եւ գրաւոր), այլեւ մտապատկերներին:

Եւ, վերջապէս, Առաքել Միւնեցին արդարացիորէն եզրակացնում է, որ լեզուն, իրականում, միջոցն է մտածողութեան ձեւաւորման՝ մի կողմից, միւս կողմից՝ հէնց դրա շնորհիւ էլ օբյեկտիվ ռեալութիւնների հաղորդիչը: Նա գրում է. «Դարձեալ առաստիւթիւն, զի գոր ինչ առեալ է գործով եւ կատարեալ, գոյնը սանն՝ ըստ այսմ, թէ որ արասցէ եւ ուսուցցէ»¹⁴²: Բայց երեք էլ մտանում Առաքել Միւնեցին նշելու, որ, այնուամենայնիւ, առաջին հերթին օբյեկտիվ ռեալութիւնները ընկալուած են մտածողութեան միջոցով, յետոյ նոր հաղորդուած լեզուի օգնութեամբ՝ յար եւ նման աշակերտի թուարանական խնդիր լուծելու առթիւ պատասխան տալուն: «...Ձի գամնայն րան նախ ի միտ առնուն եւ ապա սանն, որպէս տղայն գեամար տայն»¹⁴³:

Առաքել Միւնեցին այս կապակցութեամբ ամբողջացնելով մտածութեան ու լեզուի փոխյարաբերութեան տեսական բարդ ու նրբահիւս խնդիրը, հաւաստում է, որ մտածութիւնների փոփոխութիւնը նախադասութեան կառուցումը իրացնում է բառերի փոփոխմամբ՝ ճիշդ այնպէս, ինչպէս աչքի բբի փոփոխութիւնը տեղի է ունենում առարկաների անդրադարձումով: Ուշագրաւ այս դիտումը նա ձեւակերպում է հէնց այսպէս. «...Ձի ըստ բառիցն գամնագմութեան փոփոխի միտքն ի ձեւ րանին, որպէս աչքն ի գամնագմ հայեցումուս փոփոխի»¹⁴⁴: Իսկ բառը նրա համար է, ճիշդ կերպով մեկնարանում է Առաքել Միւնեցին, որ մտածողութեան մէջ ամրապնդի իմաստային բովանդակութիւնը, որպէսզի մտածութիւնը ներթափանցի թա-

ղանթով պարուրելով պահպանի այն: Իսկ այդ նշանակում է՝ մտածութեան կեցութիւնը, գոյածելը ընդհանրապէս (բայց ոչ միակը), ոչ այլ ինչ է, եթէ ոչ լեզուն: Նա գրում է. «...հաստատարութիւն սախ՝ զի հաստատ պահէ գրանն ի միտքն, վասն որոյ աւէ ներարամարեալ, այսիցնք ի ներքս՝ ի միտքն հաստատեալ»¹⁴⁵:

Նկատենք, սակայն, որ լեզուի շարակարգայնութեան ըմբռնումը Առաքել Միւնեցին բխեցնում է «քանակի» տեսութիւնից, որի համակողմանի քննութիւնը տուել է դեռեւս Արիստոտէլը իր «Κατηγοριῶν» («Ստորոգութիւնք») մեծարժէք աշխատութեան մէջ¹⁴⁶: Բայց Միւնեցու ծառայութիւնը տուեալ դէպքում այն է, որ նա առաջին անգամ «քանակի տեսութիւնը» կիրառում է նաեւ լեզուի նկատմամբ՝ բացայայտելով վերջինիս հոսքային, ընդ որում նրա շարակարգային բնոյթը. առանցքային մի հարցադրում է սա լեզուի տեսութեան մէջ, որի ընդունումն ու յատուկ շեշտումը իրաւացի հիմքով լայն տարածում է գտնում միայն վերջերս՝ կառուցուածքային լեզուաբանութեան կողմից:

Այսպէս, ուրեմն, ըստ Առաքել Միւնեցու տեսական քննարկման, «լծորդութիւնը» վերաբերում է նաեւ քանակային յարաբերութիւններին: Եւ քանի որ քանակը իր դրսեւորմամբ իրաւամբ դիտուած է իբրեւ տրոհուող իրողութիւն, այդ պատճառով էլ նա «սեռ» է համարում, ըստ որում դրսեւորման երկակի բնոյթի տրոհում ունենալով, մէկը՝ իբրեւ «տարրոշ», այն է՝ սահմանազատ միաւորների դրսեւորում, միւսը՝ իբրեւ «շարունակական»՝ յարձիգ քանակ. «Դարձեալ լծորդութիւն սախ քանակի, - գրում է Առաքել Միւնեցին: - Եւ քանակ սեռ գոյով երկակի տեսակս գործէ, զի է՛, որ տարրոշ է, եւ է՛, որ շարունակ»¹⁴⁷: Այս հարցադրման համաձայն, «տարրոշ քանակ» են դիտուած թուական բոլոր միաւորները, որով դրանցից իւրաքանչիւրն արտայայտած քանակային իմաստը ոչ մի չփման յարաբերութեամբ չի ընդգնդուել կամ միախառնուած թուական միւս հասկացութիւնների հետ՝ դրսեւորելով բացարձակորէն միայն իբրեւ ինքնայատուկ թուական ըմբռնումը, այն էլ՝ խիստ տարրոշ ձեւով: Մինչդեռ «շարունակ քանակը» իրար հետ կէտային ամենաներտ չփման յարաբերութեամբ պայմանաւորուած յարձիգ գիծն է կամ մակերեսային կամ մարմինը: Այդպէս էլ գրում է Առաքել Միւնեցին. «Արդ՝ տարրոշ քանակ սախ թիւն, իսկ շարունակ՝ անյայտ նիշն, զիծն, մակերեսային, մարմինն»¹⁴⁸: Իւրայատուկութիւնների այս բնութագրումից Առաքել Միւնեցին յանգում է այն ճիշդ հետեւութեանը, որ լեզուի մէջ վանկերի յարահոս դրսեւորումը խօսքային կամ գրային հաղորդակցման ժամանակ տեղի է ունենում «զգային շարունակականութեամբ», իբրեւ յարկցողութիւն՝ առանց յետադարձ նշանակութեան. ըստ որում այդ «զգային շարունակականութիւնը» բնորոշ է նաեւ բառերին, որոնք միտուած են նախադասութիւն կազմելուն, ինչպէս եւ նախադասութիւններին է առանձնայատուկ, որոնք միտուած են խօսք կազմելուն. իսկ ամէն մի իմաստութիւն, վերջին հաշուով, դրսեւորում է նախադասութեան միջոցով. «Դարձեալ՝ շարունակ լծորդութիւն սախ

140 Տե՛ս Փրոֆ. Է. Բ. Աղայան, «Լեզուաբանութեան ներածութիւն», Երևան, 1963, էջ 54, 55 եւ այլուր:
 141 Փրոֆ. Գ. Զահուկեան, նշումը աշխատ., էջ 313: Ընդգծումը մերն է - Լ. Խ.:
 142 Սոյն աշխատութիւնը, էջ 182:
 143 Անդ:
 144 Անդ, էջ 131:

145 Անդ:
 146 «Անտուն մեկնութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի», համահասարակ բնագիրը Ս. Պ. Լապարսիանի եւ Վ. Կ. Չալոյանի, առաջարկը եւ խմբագրութիւնը Վ. Կ. Չալոյանի, Թարգմանութիւնը զարարելից ուսանող Ս. Ս. Արեւշատեանի, Երևան, 1961, էջ 72-116:
 147 Սոյն աշխատութիւնը, էջ 134:
 148 Անդ, էջ 134-135:

զանազան դժաց առ մի վանդ, - գրում է Առաքել Միւնեցին, - եւ զանազան վանդ՝ առ մի բառ, եւ զանազան բառ՝ առ մի բան, եւ բանիւ լինի ամենայն զիւտք իմաստութեան»¹⁴⁹: Հարկ է արձանագրել, որ տեսական կարեւոր այս հարցադրումը, որ մշակուել է Տաթևի համալսարանի «սեկտորի» կողմից, պատիւ է բերում միջնադարի հայ քերականագիտութեանը:

Այնուհետեւ լեզուի նշանակողական գործառոյթը, պէտք է խոստովանել, ճիշդ է ըմբռնել Առաքել Միւնեցին, որպիսի տեսական կարեւոր խընդիրը, սակայն, նախորդ քերական մեկնիչներէց եւ ոչ մէկի կողմից քննութեան առարկայ չի դարձել:

Անուանումը, իր բնոյթով, սահմանափակում չի ճանաչում՝ իրաւացիորէն նկատում է Առաքել Միւնեցին. այսինքն՝ այն կարող է վերագրուել բնութեան, հասարակութեան եւ հոգեւոր աշխարհի բոլոր երեւոյթներին, որ ըմբռնում եւ ճանաչում է մարդու կողմից. ըստ որում իր այդ բնոյթի պատճառով, շարունակում է զարգացնել իր միտքը Առաքել Միւնեցին, անուրբ քերականական կոնկրետացման չի ենթարկուում ո՛չ ժամանակի, ո՛չ տեղի եւ ո՛չ էլ դիմային առնչութիւնների կողմից. «... Գիտելի է, զի անունն անսահման իր է, - գրում է նա, - զի ժամանակ եւ տեղիք եւ դէմք զնա ոչ կարէ ըմբռնել...»¹⁵⁰: Չնայած «անսահմանութեան» այս իրողութեանը, ստում է Առաքել Միւնեցին, անուրբ իր գործառոյթով միաժամանակ իրերը բնութագրող, սահմանող արժէք ունի, ըստ որում՝ անկախ այդ իրերի տեսակից ու առանձնայատկութիւններից. այդ իսկ պատճառով իւրաքանչիւր անուն «համառօտ սահման» է, որն իր ընդգրկմամբ ընդհանրական է միատեսակ կամ նոյնարնոյթ առարկաների նկատմամբ: Ի դէպ, դա այնքան բացարձակ իրողութիւն է անուան հոլմեան համար, նշում է Առաքել Միւնեցին, որ ինքը անուրբ ընդգրկում է նոյնասեռ ու նոյնատեսակ «բերբեր» իր նշանակողական դերով, բայց եւ չի ընդգրկում ոչ մի բանի կողմից. ըստ որում նոյնիսկ ոչ մի անհատ իր կրած թէկուզեւ անձնանունը կրողներին: Այդպէս էլ նա գրում է. «... Բայց անունն սահման է իրի՝ զի՛նչ եւ իցէ, ըստ այսմ թէ՛ անուն է սահման կարճատատ, զի զբազումս ի ներքոյ իւր ըմբռնէ, բայց ինքն ոչ ըմբռնի յումեքէ, զի մին Պետրոս անունն զբազում անհատս ի ներքոյ իւր ենթադրէ, բայց անկար է միոյ անհատի գՊետրոս անունն ի ներքոյ իւր դնել, զի մի՛ այլ ումեմբ համդիպեցի»¹⁵¹:

Առաքել Միւնեցին «Յաղագս առասանութեան» վերնագրով առանձին պարբերոյթ է դարձրել հասարակ անուան մեկնաբանութիւնը, որ չունեն նախորդ քերական մեկնիչները: Սպասելի էր, որ հեղինակը այս պարբերոյթում քննէր վերնագրից բխող հարցերը: Բայց այդպէս չի վարուել: Մահմանափակուելով ընդհանուր հարցադրման քննութեամբ՝ ընդհանրապէս հասարակ անուան («առասանութեան») եւ նրա ենթատեսակը հանդիսացող յատուկ անուան աղբրակցութեան վերաբերեալ, հեղինակը այս պարբերոյթում, հիմնականում, արժարժում է ընդունուած խօսքի մասերի դասակարգման «հիմունքները» ըստ ժամանակի գիտական ըմբռնողութեան: Սակայն իբրեւ զրական ակնբոխ արժանիք պէտք է նշել, որ Առաքել Միւնեցին առաջին քերական մեկնիչն է, որ համեմատական մեքողով՝ ընդհանրու-

թիւնների եւ տարբերութիւնների բացայայտմամբ փաստարկում եւ «հիմնաւորում» է խօսքի մասերի այն յաջորդականութիւնը, որ առաջին անգամ մշակել է Թրակացի իր "Τέχνη γραμματικῆ" («Արուեստ քերականութեան») երկում, որին եւ հետեւել են հայ քերական մեկնիչները իրենց աշխատասիրութիւններում¹⁵²:

Ի տարբերութիւն նախորդ քերական մեկնիչների, Առաքել Միւնեցին առանձին ծաւարուն պարբերոյթ է յատկացրել անուան քերականական յատկանիչների քննութեանը՝ «Յաղագս հետեւումն անուան» վերնագրի առանձնացումով (տե՛ս էջ 143): Բայց հարկ է նշել այս կապակցութեամբ, որ քերականագիտական իր հայեացքներում Առաքել Միւնեցին մտում է, հիմնականում, արդէն իսկ յայտնի տեսակէտների շրջանակում՝ միայն թէ մեկնարանելով դրանք հարցադրումների առաւել փոխտոփայական ձեւակերպումներով եւ, մասնաւոր, թուրքի շեշտուած խորհրդապատկերութեամբ:

Սակայն «Յաղագս լծորդութեան» պարբերոյթում հեղինակը առաւել խորը ընդհանրացմամբ է քննում քերականական այդ եմբռնումը իրենից առաջ հանդէս եկած մեկնիչների համեմատութեամբ: Եթէ վերջիններիս երկերում «լծորդութիւնը» վերաբերում է բացառապէս լծորդ հնչոյթների քննութեանը, ապա Առաքել Միւնեցու սոյն երկում՝ ե՛ւ լծորդ հնչոյթներին, ե՛ւ վանկերին, ե՛ւ խօսքի մասերի ու նախադասութիւնների յարաբերութիւններին ընդհանրապէս: Պարզում է, որ «լծորդութիւն» քերականական տերմինը Առաքել Միւնեցին ըմբռնել է մի քանի առումներով: Նախ՝ ամէն մի անմիջական մեքծութիւն լեզուական միաւորների միջեւ դիտում է իբրեւ «լծորդութիւն»: «Լծորդն կրկին է իմանալ, - գրում է նա, - այսինքն՝ նախ վասն մերձաւորութեան ասին լծորդ»¹⁵³: Երկրորդ՝ «լծորդութիւն» ասելով Առաքել Միւնեցին հասկացել է առհասարակ լեզուական միաւորների յարաբերակցութիւն, առաւել ստոյգ՝ յարակցութիւն կամ կապակցելիութիւն՝ զիրքային առումով: «Այսպէս ըստ մերձաւորութեան դրութեանն լծորդք են տարեմբ միմեանց, - պնդում է նա, - վասն որոյ տարր ասին, այսինքն՝ լծորդութեամբ տարեմբ ի միմեանց»¹⁵⁴:

Նշուած առումով առաւել բնութագրական է նրա ստուգաբանութիւնը «լծորդութիւն» տերմինի՝ իբրեւ «կցորդութիւն» կամ «յարակցութիւն», ըստ որում յարակցութիւնն էլ կարող է լինել ինչպէս դիրքային անմիջական մերձութեամբ, այնպէս էլ յատկանիչի նմանութեամբ: Այսպէս, Առաքել Միւնեցին գրում է. «... Պարտ է գիտել, թէ զի՞նչ ստուգաբանի լծորդութիւնն. որպէս ասելն՝ ճանապարհորդ, կցորդ, այսպէս եւ լծորդութիւնն ընդ իւր յարակցին՝ թէ՛ մերձաւորին եւ թէ՛ նմանոյն»¹⁵⁵: Յատկանիչի նմանութեամբ «լծորդութիւն» է համարում «երկիր եւ ջուր» վասն բանձնարութեան. իսկ աղ եւ հուր՝ վասն պարզութեան... այլեւ բանական տեսակ ընդ բանականի, եւ անբան՝ ընդ անբանի»¹⁵⁶: «Լծորդութիւն» են դիտում նաեւ մարմնի զոյգ օրգանները՝ այս դէպքում գործառոյթների ընդհանրականութեան հիման վրայ, ինչպէս՝ «երկու աչքն, երկու սկանջն, երկու պինչն, երկու շրթունքն, երկու ձեռքն եւ երկու ոտքն»¹⁵⁷:

152 Անդ, էջ 142:

153 Անդ, էջ 152:

154 Անդ:

155 Անդ, էջ 155:

156 Անդ, էջ 152:

157 Անդ, էջ 153:

149 Անդ, էջ 135:

150 Անդ, էջ 132:

151 Անդ:

Սակայն լեզուական իրակութիւններում «չծորդութիւնը» ըստ մեր-
ձուլեան է, եւ ոչ՝ ըստ նմանութեան: Այդ պատճառով էլ Առաքել Սիւնե-
ցին այն ճիշդ հաւաստումն է անում, որ բազմաթիւ վանկերի յարակցու-
թեամբ է բառ կազմւում, իսկ բառերի յարակցութեամբ էլ «Ներքին խօսքը»
կամ մտածութիւնը («Ներտրամադրեալ բանն») «յայտնի» է դառնում: «Զի
ի բազում վանգից մի բառ կազմի, - գրուած է նա, - որպէս ասել [ն]՝ արբա-
յուրիւն, եւ ի բազում բառից լծորդութիւն»¹⁵⁸:

Բառակապակցութիւնների ձևով արտայայտուող խօսքային հատածներ
յարակցումները, որոնք գրութեան մէջ սահմանազատում են կետադրու-
թեան երեք տարբեր նշաններով՝ համապատասխան իրենց զբաղարած շա-
րահուական յարաբերութիւնների, նոյնպէս «լծորդութիւն» է համարուած
Առաքել Սիւնեցին¹⁵⁹:

Բայց նա մտանշուած է «լծորդութեան» մի այլ իմաստ եւս, որը թէեւ
ընդհանուր հարցադրման առումով ունեն նաեւ նախորդ քերական մեկ-
նիչները, սակայն մասնաւորութեամբ տարամիտում են:

Այսպէս, Թրակացու երկում՝ «ՏՄՆՄԻՆ»-ն («լծորդութիւնը») վերաբերում
է յունարէն բայերի խոնարհման վերջաւորութիւնից առաջ բաղաձայնայնոյ
հնչիւնների հերթագայութիւններին միայն, որոնք իրենց բնոյթով մեր-
ձակցութիւն ունեն ըստ արտաբերութեան տեղի, ինչպէս լէւթ-օ, րթօ-օ,
թթօ-օ, կօթօ-օ եւ այլն: Հայ քերական մեկնիչները այս իրողութիւնը, մի
ղէպքով՝ տարածելով նաեւ հայերէնի բայերի մասնաորակէս նոյնբնոյթ
երկուսիները միայ, փորձել են մեկնարանել այն իրրեւ բառերի ելուարու-
թիւն, որ արտայայտել են «ստուգաբանութիւն» տերմինով, միւս զէպքով՝
վերագրել են զբան յանգարանական հերթագայութիւնների արժէք տալա-
յափութեան մէջ՝ կշռոյթի պահպանման համար: Այս երկու պահանջ-
ները միասնաբար նշել է զեռես Անանուն մեկնիչը: «Լծորդութիւնը դատեալ
եղեւ ի տաղաբախական կշռոց ուսումնաւարժից ոմանց, որք ի մակացու-
թեան զեղբանս կացին հանապազ, զի գահամանաչափութիւն բանի լծորդոյն
շինէին տեղի: Այլ է՛ր իսկ ճշմարտապէս եւ ի տեսակի խաւիցն, որպէս
բազուկ, պագուկ, փագուկ»¹⁶⁰: Այս ասոյթները ընդգրկելով հանդերձ իր
երկում, Առաքել Սիւնեցին ընդհանրացնում է՝ «լծորդութեան» մի իմաստն
էլ ըմբռնելով որպէս առհասարակ բառերի ստոյգ գրութիւն: «...Այսպէս եւ
սարն, թէ՛ ուրիւ ասես՝ ստոն լինի, այսպէս եւ մարդն, թէ՛ մարտ ասես՝
զդուին ցուցանէ, այսպէս եւ ձորն թէ՛ ծայր ասես՝ ձոր լինի: Վասն այնո-
րիկ սահմանեցաւ լծորդութիւնս, - վերջում եզրակացնում է նա, - որ զսեմ-
նայն բառ ուղղէ»¹⁶¹:

Մի այլ զէպքում էլ Առաքել Սիւնեցին «լծորդութիւն» ասելով հասկա-
ցել է զբարբառի ամբողջ հնչոյթային համակարգի դասակարգումը ըստ միջ-
նադարում ընդունուած դասադասումների, ընդ որում իւրաքանչիւր դասում
խմբաւորուած գրահնչոյթները միմեանց նկատմամբ համարելով իրրեւ
լծորդ (տե՛ս սոյն աշխատասիրութիւնը, էջ 155-157):

«Յաղագս ընդունելութեան» պարբերութեամբ Առաքել Սիւնեցին առանձ-
նապէս նոր ըմբռնումներ չի առաջարկում իր նախորդների ասոյթներին ու

մեկնարանումներին:

Ընդհանրապէս պէտք է ասել, որ «ընդունելութեան» ընկալումը հայ
մեկնիչների կողմից՝ Բերականակա իմաստ արտայայտող հասկացութիւն
չէ եւ մեր քերականական մեկնութիւններում ստացել է գերազանցապէս
բառաբանական բնոյթ՝ վերաբերելով «ունենալու» կամ որեւէ բանով օժ-
տուած լինելու իմաստ արտայայտող բառերին, ինչպէս «ձիւտը», «աղեղ-
նաւոր», «կարմրաւոր» եւ այլն: Դիցուք՝ «ձիւտը» բառը «ընդունելութիւն»
է կոչուած տրամաբանական այն հիմունքով, որ նրանում առկայ է միայն
«ձի» ստարկան, բայց միաժամանակ «ծածկարար» ակնարկում է նաեւ այն
մարդը, որ տէրն է այդ ձիուն: Այդպէս էլ մեկնարանում է Առաքել Սիւնե-
ցին: «Դարձեալ ասել [ն] ձիւտը՝ ընդունելութիւն է, այսինքն ձիւն անուն,
աւորն՝ բայ: Իսկ այն, որ ծածկարար գմարդն յայտնէ, որ ունի զձին, այն
ընդունելութիւն է, քանզի զայն, որ զիրն ունի՝ գաղտնաբար ցուցանէ, եւ
զիրն յայտնապէս յանուանէ կոչէ, որ է առ ունողին, վասն այն կոչի ըն-
դունելութիւն»¹⁶²: Տուեալ զէպքում եւս երկէտն այն է, որ եթէ որեւէ բառ
իր բառմաստային աղբրակցութիւններով վերաբերութիւն ունի անուան
կամ բայի հետ, բայց ուղղակիորէն չի արտայայտուած նրա բաղադրիչնե-
րում, զիտուած է իրրեւ «ընդունելութիւն»: Հէնց այս նկատուածով էլ
Առաքել Սիւնեցին լրացնում է իր նախորդներին՝ Արիստոտէլի առաջա-
դրած եւ նրա կողմից «սեռականագոյն սեռ» զիտուած «Ունեն» տրամաբա-
նական կատեգորիայի քննութեամբ: «Բայց ասէ «ունեն», այլ ո՛չ յայտնէ
զունողն եւ ո՛չ զունլին, բայց ծածկարար ծանուցանէ զունողն եւ զունե-
լին, վասնզի ոմն է՛, որ ունի այդի, զբախտ, զեղ եւ քաղաք»¹⁶³: Փաստօ-
րէն սրանով իր տրամաբանական վերջնակէտին է հասցնում Առաքել Սիւնե-
ցին զիտուած սեռական քերականական համակարգի այս հարցադրման հայ
մեկնիչների ըմբռնումը՝ զբերով. եթէ որեւէ բառ «զարութեամբ եւ թաք-
նաբար ցուցանէ զանուն եւ զգիրն, այսպէս եւ զընդունելութիւնս իմա-
ցիր»¹⁶⁴: Դիցուք՝ «չինելութիւն» բառը, որ կազմուած է անորոշ զերբայից
իրրեւ մտովի վերառուած՝ առարկայացուած գոյական, թէեւ անձի, գոյա-
ցութեան եւ ժամանակի կոնկրետացում չունի իր բաղադրիչների հաւաստ-
մամբ, բայց զբանք բոլորն էլ ենթադրում են, իրր, «զօրութեամբ»... «Զի
չինելութիւնն ընդունելութիւն է, - գրում է Առաքել Սիւնեցին, - բայց ոչ
յայտնէ զիրն եւ գծամանկն եւ զգէմս շինողին: Բայց ընդունելութիւնն
զանունն զարութեամբ ունի, եւ զբայն ներգործութեամբ, այսինքն՝ զի
չինելն բայ է, բայց զարութեամբ «զչինողն» ցուցանէ, զի յունեբէ չինեալ
է: Զի այս փոքր բառս երեք իր ցուցանէ՝ զիրն, եւ զչինողն, եւ գծամա-
նական, բայց զգէմս ոչ յայտնէ զիրիցն»¹⁶⁵:

Գիտական առանձին արժէք չի ներկայացնում նաեւ «Յաղագս յաղի»
պարբերութիւնը, որում ճիշդ զիտումների հետ մէկտեղ կան նաեւ հարցա-
դրման ըմբռնման ճապարկութիւն եւ շփոթութիւն, որոնք բնորոշ են նաեւ
նախորդ քերական մեկնիչներին: Նման աղաղակող թերմացութիւն է հա-
յերէնի ով եւ ո կոչական բառերի ընդունումը իրրեւ «ստաղաղիբ յօղ»՝
մի կողմից, միւս կողմից զբանց «յետաղաս յօղ» համարումը՝ բառի հոլո-
փակագում կամ պարզապէս բառակազմում հանդիպելու պատճառով (օր.

158 Անոյ, էջ 158:
159 Անոյ, էջ 155:
160 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 149:
161 Սոյն աշխատութիւնը, էջ 154:

162 Անոյ, էջ 158:
163 Անոյ, էջ 159:
164 Անոյ:
165 Անոյ, էջ 158:

հոգևով, լուսով, համով, կամ՝ երկնաւոր, թագաւոր, դատաւոր): Որքան էլ տարօրինակ թուայ, մինչեւ անգամ բառակազմի իւ կամ եւ երկարբառները առանձին ուսումնականների կողմից դիտուել են իրրեւ «Նախագահ յօդեր», որոնք վկայակոչուում են նաեւ մեր հեղինակի քննախօսուող երկում. «Իսկ որ ասեն, թէ իւն է նախագահ, որպէս ասելն՝ թեւաւոր, թիւնաւոր»¹⁶⁶: Նմանապէս գիտական նշանակութիւն չունի Առաքել Միւնեցու պնդումն այն մասին, որ եթէ յունարէնում յօդը գրուում է բառի առաջամասում՝ անջատարար, ապա դա հետեւանք է այդ լեզուի այբուբենի բանաւկային նուազութեան, իսկ եթէ հայերէնում վերջագուս է՝ արդիւնք է մեր լեզուի այբուբենի բանաւկային շատութեան. «...Իսկ թէ վասն է՞ր ի լեզուս մեր ի վերջն գնեմք գյաւղն, իսկ յոյնք՝ յառաջն: զի նոցա լեզուն տառ է եւ նուրբ, զի նոցա գիրն ԻԶ (26) է, իսկ մեր լեզուս տառ է, զի մեր գիրն ԼԶ (36) է...»¹⁶⁷:

«Յաղագս դերանունութեան» պարբերոյթում Առաքել Միւնեցին թէեւ հետաքրքրական մտքեր զարգացնում է, բայց եւ միանգամայն թոյլ է տալիս լուրջ վրիպումներ:

Անշուշտ ուշագրաւ գիտումների արգասիք է դերանուն կիրառական յատկանիշների բացայայտումը յատուկ անունն հետ համեմատութիւններ ու գուլաճեաներ անցկացնելիս:

Դերանունը իր կիրառական գործառոյթով լինելով փոխարինող անուն (մեկնիչների տերմինով՝ «փոխանուն»), համարուում է միաժամանակ «խուկական» անուն («տիրանուն»), քանի որ նախքան որեւէ անուն վերագրելը որեւէ առարկայի՝ այն կարելի է կոչել (եւ կոչուում է) դերանունում. «Իսկ փոխանունն տիրանուն լսի, որ է իսկապէս անուն»¹⁶⁸: Այդ իսկ պատճառով Առաքել Միւնեցին դերանունը «բնական» է համարում, իսկ առարկային վերագրուած անունը՝ «պատահական»: Կենցաղի իրապաշտ գիտումով Միւնեցին այս առնչութեամբ գրում է. «Զի յորժամ ծնանի մանուկն, դերանունումը կոչեն զնա՝ սա, դա, նա: Իսկ յետ ամսոյ ապա կոչի Պետրոս: Ապա ուրեմն դերանունն նախագասեցաւ քան զանունն»¹⁶⁹: Սակայն հարկ է արձանագրել, որ անուն վերագրայից բնոյթի ընդունումը տեսական մեկնակէտային ճիշդ հայեցակէտ է ընդհանուր լեզուաբանութեան մէջ: Սրանից ինքնին բխում է այն հատկանիշը, որ ոչ թէ անուններն են առաջնային, այլ՝ առարկաները, որոնց եւ վերագրուում են դրանք, այդ պատճառով էլ իրերի անուանումները «պատահական» են կոչուում Առաքել Միւնեցու կողմից. ըստ որում նա առաջադրում է երակէտային զրոյթ այն մասին, որ «բնական իրն պատուական է, բան զպատահական»¹⁷⁰: Իսկ քանի որ ամէն մի նախնականը, առաջնայինը, Առաքել Միւնեցու խորին համոզմամբ, «բնական» է, այդ պատճառով էլ դերանունը «բնական» է համարում, մինչդեռ անունը՝ «պատահական»: Նա այդպէս էլ գրում է. «Իսկ դերանունն բնական է, որ նախ քան զանունն դնելն ասեմք՝ սա, նա: Իսկ անունն պատահական՝ յետոյ եղեալ»¹⁷¹: Այստեղ վրիպումը, սակայն, ոչ թէ հարցադրման փրկափառական, այլ՝ լեզուաբանական կողմին է վերաբերում:

166 Անդ, էջ 160-161:
167 Անդ, էջ 161:
168 Անդ, էջ 163:
169 Անդ:
170 Անդ:
171 Անդ:

Բանն այն է, որ դերանունը նոյնպէս, վերջին հաշուով, իբրեւ լեզուական միաւոր, վերագրային նշանակութիւն ունի, ինչպէս եւ անունը, հետեւաբար այն եւս նշանողական է, կամ, Միւնեցու արտայայտութեամբ՝ «յետոյ եղեալ»:

Անտարակոյս, նոյն այս սխալ պնդումից է բխում եւ այն պատկերացումը, որ դերանունը (յատկապէս՝ ցուցական), իբր, առանձին առարկայի էութիւնը եւ կամ առկայութիւնն է նշում, իսկ անունը (բացառապէս յատուկ անունը) դեռեւս չեղածի («անեղ»), մահկանացուի («ապականելոցն») եւ ծնունդ առնողի. «զի անունն ի վերայ անեղիցն է, այսինքն՝ ապականելոցն եւ կամ դեռեւս լինելոցն, զի յորժամ ասեմք՝ Մովսէս, Արարեալ, իր ոչ ցուցանէ, այլ սոսկ անուն միայն: Իսկ ասելն՝ սա, դա, նա, զէութիւն անհատին յայտնապէս ցուցանէ»¹⁷²: Նման պնդումը, անշուշտ, մոլորութիւն է. ինչպէ՞ս թէ յատուկ անունը «իր ոչ ցուցանէ», այլ «սոսկ անուն միայն»: յատուկ անունները հէնց նրա համար են կիրառուում, որ նշեն դրանք կրող համապատասխանաբար իւրաքանչիւր կոնկրետ առարկայ, աշխարհագրական վայր կամ անձնատրութիւն իրրեւ օրյեկտիվ ռեալութիւն: Տեսական այս վրիպանքի հիմքը, անտարակոյս, այն է, որ հեղինակը յիշեալ անունները ըմբռնել է ոչ թէ իրրեւ կենդանի կամ որոշակի անձնատրութիւնների յորջորջումներ, այլ՝ որպէս սոսկ վերացական անուններ՝ իրենց բառարանային արժէքով: Մինչդեռ դերանունները քննելիս նա բնութագրել է դրանք ոչ թէ բառարանային արժէքով՝ որպէս բովանդակազուրկ վերացարկումներով, այլ կիրառական իմաստով: Հետեւաբար ամբողջ այս թիրաբնումը արդիւնք է մտեցման ոչ միասնական սկզբունքի, որից խուսափել հնարաւոր էր անշուշտ:

Նոյն այս հարցադրումը, շատ մասնակի առումով սակայն, աւելի վաղ եղել է Ստեփանոս Միւնեցու երկում, բայց բոլորովին այլ մեկնաբանմամբ. վերջինս գրում է. «Իսկ Պաւղոս եւ Պետրոս եւ Մովսէս եւ Աբրահամ եւ ամենեքին սոքա ոչ կարեն յանձնել յայտնել իրանքն անձնական եւ անդէմ եւ անտեղի է անունն»¹⁷³:

Դերանուն միւս առաւելութիւնը անունն նկատմամբ այն է, միանգամայն իրաւացի հիմքով նշում է հեղինակը, որ նա կիրառական շատ աւելի լայն ոլորտ ունի, քան անունը. ընդ ամեն՝ եթէ յաճախ դժուարանում ենք անուանային վերագրում տալ առաջին անգամ հանդիպած առարկային, ապա հեշտութեամբ զլուխ ենք հանում անունն փոխարէն դերանուն գործածելով. «...դերանունութիւն է փոխանակ անունն առեալ, այսինքն՝ թէ զո՞ր անունն ոչ կարէ յայտնել՝ սա յայտնէ, եւ զպակասութիւն անունն լնու, ստելով՝ սա, դա եւ այլն»¹⁷⁴: Առաքել Միւնեցին պատկերաւոր կերպով համեմատում է դերանունը արտադրութիւնից վերցրած օրինակով՝ նշելով, որ եթէ հրաշէկ երկաթը փոխանակ ձեռքով բռնելու՝ աքցանով ենք վերցնում, այդպէս եւ դերանունը իր նշանակողական դերը իրացնում է բոլոր այն դեպքերում, երբ անուամբ այն հնարաւոր չէ զրոյսելու. «Զի որպէս աքցանն զհրացեալ երկաթն ըմբռնէ փոխանակ ձեռաց, զոր ձեռն ոչ կարէ բմբռնել, այսպէս եւ դերանունն առնէ, զոր անունն ոչ կարէ առնել»¹⁷⁵:

172 Անդ, էջ 164:
173 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 215:
174 Մոյն աշխատութիւնը, էջ 163-164:
175 Անդ, էջ 164:

Ի տարբերություն անուան նշանակողական գործառնություն, որը գուրկ է իր բառիմաստին գուրգահեռ միաժամանակ տարածական յարաբերություններ ակնարկելուց, դերանունը հենց օժտուած է նման առանձնայատկութեամբ՝ «գի դերանունն գհեռաւորն եւ գմերձաւորն ցուցանէ, զի ասեմք՝ սա, դա, նա, իսկ Պետրոսն եւ Պաղոսն ո՛չ գհեռաւորն ցուցանեն, եւ ո՛չ գմերձաւորն»¹⁷⁶:

Գերանունն եւ անուան սահմանագատիչ միւս իւրայատկութիւններէ մէկն էլ այն է, ասուծ է Առաքել Սիւնեցին, որ դերանունը բառական իր կազմով լինելով կայուն ու անփոփոխ՝ «պարզ» է եւ «անխախտ», մինչդեռ անունը անձնացուելու եւ բարդուելու, ինչպէս եւ հոմանիշներով փոխարինուելու պատճառով՝ «բաղադրեալ» է եւ «այլայլական»: Բայց Առաքել Սիւնեցին լեզուանմուշներ մատնանշելիս աւելի շատ նկատի է ունեցել յատուկ անուան փոխարինումը Հասարակ անունների՝ համապատասխան տուեալ անձնաւորութեան զրազեցրած Հասարակական դիրքի ու պաշտօնի: Այդպէս էլ նա գրում է. «Զի դերանունն ան[խ]ախտ է վասն պարզութեանն եւ անփոփոխութեանն, այսինքն՝ զի սայլն պարզ է եւ միակ է անփոփոխ եւ միշտ նոյն մնայ. իսկ անունն՝ փոփոխական եւ բաղադրեալ եւ այլայլական, այսինքն՝ զի Պետրոսն կարէ փոխիլ եւ ասիլ՝ առաքեալ, իշխան, քահանայ եւ այլն, եւ լինի բաղադրեալ եւ այլայլական, այսինքն՝ զի Պետրոսն կարէ փոխիլ եւ ասիլ անուն եւ բազմանուն եւ փոփոխական»¹⁷⁷: Բայց հարկ է արձանագրել, որ սրանից արուող հետեւութիւնը ոչ թէ լեզուաբանական բնոյթի է, այլ՝ աստուածաբանական, ուստի եւ զուրկ է գիտական՝ ճանաչողական ընդհանրացումից: Այս առիթի Առաքել Սիւնեցին գրում է. «Իսկ պարզն եւ միակն եւ անփոփոխն պատուական է, քան զբաղադրեալն, եւ զբազմաւորականն, եւ զփոփոխականն»¹⁷⁸:

Գերանունն (անձնական եւ ցուցական) մի այլ առանձնայատկութիւնը Առաքել Սիւնեցին համարում է այն, որ նա զիմային յարաբերութիւններ է նշում, մինչդեռ անունը (ըստ որում յատուկ անունը) գուրկ է զրանից: Այս հարցադրումը, սոսկ յայտարարութեան կարգով, առկայ է նաեւ Ստեփանոս Սիւնեցու երկում, մինչդեռ մեր հեղինակի աշխատասիրութեան մէջ այն մեկնաբանուած է իբրեւ դերանունն առանձնայատկութիւն. նրա պնդմամբ՝ այն, որ անունը, վերագրուելով անձնաւորութեանը՝ նշում է պարզապէս նրա անհատ լինելը՝ առանց յարաբերութեան ցոյց տալու, միանգամայն ճիշդ է. իսկ «ես» եւ «դու» դերանունները իրօք միայն զիմային յարաբերութիւն են նշում: Բայց Առաքել Սիւնեցին այդ բնոյթի դերանուններ է համարում նաեւ սա, դա, նա ցուցական դերանունները, որոնք, իրականում, միայն երկրորդաբար՝ այն էլ շատ ազոտ կերպով, կարող են ակնարկել զիմային յարաբերութիւններ: Ընդհանուր մօտեցման տեսակէտից, սակայն, իրաւացի է հեղինակը, երբ գրում է. «...անունն անհատին է յատկացուցիչ, եւ ո՛չ՝ զիմացն, զի ասեին Պաղոսն՝ զղէմն ո՛չ նշանակէ, իսկ դերանունն զղէմն նշանակէ, որպէս ասելն՝ սա, դա, նա, դու»¹⁷⁹: Իր տեսակէտի հիմնաւորման համար Առաքել Սիւնեցին առաջ է բերում նաեւ զիպուկ մի հանգամանք, որ շատ հագուազէպ, գուցէ եւ անիրական երեւակայութիւն. «զի յորժամ բազում Պետրոս անուն մարդ է մի տեղ

լինին ժողովեալ եւ յորժամ կոչես յանուանէ գումն Պետրոսն՝ ոչ որոշի յայլոցն, - գրում է նա: - Իսկ յորժամ դերանունամբ ասես սա, դա, նա, դու՝ յայնժամ որոշեցաւ յայլոցն, զոր ոք եւ կոչէ իրն»¹⁸⁰:

Ելնելով սա, դա ցուցական դերանունների երկրորդաբար տարածային յարաբերութիւն արտայայտելու իրողութիւնից, որ Առաքել Սիւնեցին վերագրում է նաեւ «ես», «դու» անձնական դերանուններին, հեղինակը բացայայտում է անուան եւ դերանունն սահմանագատիչ մի առանձնայատկութիւնը եւս. «զի անունն զտեղին ոչ յայտնէ... իսկ դերանունն ցուցանէ զտեղին, որպէս՝ ես, դու, սա, դա, զի յասելն սա, դա՝ զէմքն եւ զտեղին ցուցանէ»¹⁸¹: Սակայն առանց մեկնաբանման, իբրեւ ընդհանուր բնոյթի հաւաստում, այս նոյն միտքը առկայ է նաեւ Ստեփանոս Սիւնեցու մօտ՝ միայն անուան կապակցութեամբ. «...քանզի անձամանակ եւ անդէմ եւ անտեղի է անունն»¹⁸²:

Անշուշտ գիտական արժէք չի ներկայացնում «դերանուն» քերականական տերմինի կապակցութեամբ Առաքել Սիւնեցու տուած ժողովրդական ստուգաբանութիւնները՝ ելնելով դերանունն սոսկ կիրառական իմաստներէ: Այսպէս, մի դէպքում, «դերանուն» տերմինը մեկնաբանում է իբրեւ «դեռ այլ անուն» նշանակութեամբ, երբ այդ տերմինի առաջին բաղադրիչը («դեր») ոչ մի կապ չունի «դեռ» մակրայի հետ. «Իսկ աստ ասէ դերանուն, այսինքն՝ թէ դեռ այլ անուն գոյ՝ զատ յառաջնոյն, որ զանգանի յայտմանէ, զի նա մի անուն էր, իսկ սա յերիս բաժանի...»¹⁸³: Մի այլ դէպքում «դերանուն» տերմինը իբրեւ «գերանուն» է բացատրում այն պատճառաբանութեամբ, որ նախադրութեան համեմատ դերանունը զիտում է «իշխան», իսկ նախադրութիւնը՝ «աթոռ», որի վրայ «նստում է» դերանունը, հետեւաբար դերանունն աճելու հանգամանքի շնորհիւ «գերանուն» լինելն է պնդում. «Նախ՝ զի (նախադրութիւնն - Լ.Պ.) յետ դերանունն եղաւ, զի սա որպէս աթոռ է, որ զնի, եւ նա՝ որպէս իշխան. դերանունն, այսինքն՝ գերանունն, որ նստի ի վերայ»¹⁸⁴: Իհարկէ, հարցադրումն ինքնին արհեստական ու մտացածին է, որովհետեւ այն չի բխում հայերէնի դերանունների բառակազմական առանձնայատկութիւններից. ոչ մի դերանուն «նախադրութեամբ» բաղադրուած չի հանդիպում:

Դերանունն մասին մնացած բմբունմներուն Առաքել Սիւնեցին համաձայն լինելով նախորդ քերական մեկնիչների զրոյթների եւ ստոյթների հետ, ինքնուրոյնութիւն հանդէս չի բերում:

Յաջորդ՝ «Յաղագս նախադրութեամբ» պարբերութեամբ Առաքել Սիւնեցին տեսական ոչ մի նոր մեկնաբանութիւն չի առաջադրում, ուստի եւ կանգ չենք առնում զրա վրայ:

Բայց առանձնապէս խճճուած եւ հակասական բնոյթ ունի «Յաղագս մակրային» պարբերութիւնը: Սրա խօսքամասային էութիւնը համարեա թէ չի բմբունում հեղինակի կողմից: Սկզբից եւեթ ասելք, որ Առաքել Սիւնեցու տարտուած պատկերացումները մակրայի մասին մեծ մասամբ դալիս են դեռեւ թրակացուց եւ առհասարակ իրեն նախորդած հայ քերական մեկնիչներից:

176 Անդ. :
177 Անդ. :
178 Անդ. :
179 Անդ. :

180 Անդ, էջ 165:
181 Անդ. :
182 Ն. Աղոնց, նշում աշխատ. :
183 Սոյն աշխատ., էջ 161:
184 Անդ, էջ 167:

Կարեւոր է նշել, որ Հեղինակը այս պարբերության շարադրանքը սկսում է Անանուն մեկնիչի առաջադրած դրոյթով ու նրա մեկնաբանմամբ: Անանունի մաս կարողւմ ենք. «...նաեւ մակբայս թէպէտ եւ ըստ երկրորդիս ինչ ձեւանայ, այլ սակայն զանուան ունի զտեղի»¹⁸⁵: Բայց այս ոչ ճիշդ դրոյթը ընդհանրացնելով՝ Առաքել Միւնեցիին գրում է. «Այս երեքեանս զանուան տեղին ընուն, այսինքն՝ ընդունելութիւնն, զերանունն եւ մակբայն»¹⁸⁶: Իրականում՝ մակբայը երբեք էլ անուան փոխարէն Հանդէս եկող խօսքի մաս չէ, ինչպէս դերանունը: Բայց խնդիրն այն է, որ ո՛չ Անանուն մեկնիչը, ո՛չ էլ Առաքել Միւնեցիին ճիշդ պատկերացում չունեն մակբայի խօսքամասային արժէքի եւ էութեան մասին: Փորձելով «հիմնաւորել» Անանուն մեկնիչի առաջ քաշած դրոյթը մակբայի՝ անուանը փոխարինելու մասին, Առաքել Միւնեցիին մատնանշում է այդ «առանձնայատկութեան» դրսեւորման «չորս կերպերը», որոնցից ակնյայտօրէն երեւում է այն չփոխելը, որ տեղի է տուել անհիմն պնդումների: Ըստ այսմ՝ եթէ մակբայը «կրկնաբայ» է Համարում, իսկ քանի որ «կրկնաբայը» անուն է, ապա Հէնց այդ Հանգամանքի շնորհիւ մակբայը «փոխարինում է» յատուկ անուանը. «Նախ՝ դի մակբայն կրկին բայի ասի, եւ կրկին բայն անուն է, որպէս ասելն՝ Դաւիթ, Թումայ, Թամար»:¹⁸⁷ Սա պարզապէս ձեւական արամարանութեամբ արուած պնդում է՝ ելնելով բացառապէս «մակբայ» տերմինի ստուգաբանական իմաստից: Այդպիսիք են նաեւ Հեղինակի միւս պնդումները:

Այսպէս, բռնազբօրիկ է Միւնեցու եւ այն բացատրութիւնը, որ իբր բոլոր մակբայները բաղկացած են երկու վանկից, իսկ բոլոր յատուկ անունները իբրեւ թէ նոյնպէս երկվանկանի են, Հետեւաբար այս առումով վա մակբայը «փոխարինում է» անուանը. «Երկրորդ՝ զի մակբայն ի կրկին վանկից լինի, իսկ անունն երկու վանկ է, որպէս ասելն»՝ Պետրոս, Պաւղոս, «այստքիկ երկու փաղառութիւնք են»¹⁸⁸: Միւս թիրախացութիւնն էլ այն է, որ եթէ անունը օժտուած է «հոլովման» քերականական կարգով, ապա մակբայը եւս՝ եթէ «երկվանկանի» է, իսկ եթէ միավանկանի է՝ «անհոլով» է, ուստի եւ «փոխարինում է» անուանը: Որքան էլ տարօրինակ է՝ Միւնեցիին անցեալ դերբայը (օր. շինեալ) Համարում է մակբայ. «Երրորդ՝ զի որպէս անունն հոլով ունի, այսպէս եւ մակբայն հոլով է...: Եւ այս է, որ ասէ «բայ է անհոլով», որ միավանկի լինի: Իսկ երկու բայն՝ որ է մակբայն, հոլով առնու, զի շինեալն կրկին է, եւ ցուցանէ զշինողն եւ զշինեալն, եւ շինելն ի շինողէն հոլովեալ է»¹⁸⁹:

Իսկ վերջին պնդումը, որը դարձեալ անհամողիչ է, մակբայի նոյնացումն է անորոշ դերբայի հետ, վերջինս էլ՝ անուան հետ: Ստացում է անյարիր Հաւաստումների մի ամբողջ շարք, որոնց հետ զիտական մտածողութիւնը ոչ մի կերպ Հաշտուել չի կարող: Նա գրում է. «չբարբոզ» զի եւ մակբայն անուն է, այսինքն զի յորժամ ասես՝ գործել, շինել, գնալ, զգործելոյ անունն եցոյց, եւ զշինելոյն, եւ զգնալոյն»¹⁹⁰: Այստեղ, ինչպէս նկատելի է, բայիմաստի ըմբռնումը նոյնացուել է բայանուն հետ,

որով եւ առաջացել է շփոթ:

Բայց մակբայի Համեմատութիւններն ու զուգահեռները սրանցով չեն սպառում: Առաքել Միւնեցիին մակբայը ընդհանրութեան մէջ է գնում նաեւ բայի հետ՝ ճշմունքով «պպացուցել», որ ինչպէս բայը խոնարհման իր Համակարգում օժտուած է եղանակային «հինգ» առումներով, այնպէս եւ մակբայը. «Դարձեալ մակբայ ասի, զի որպէս ունի զանուան տեղի, այսպէս՝ զբային, զի զխոնարհմունք բային ի հինգ բաժանեցաւ՝ ի սահմանականն, ի հրամայականն, յանյատկանն, յըզականն եւ ի ստորադասականն: Ջայտսիկ եւ մակբայն ունի...»¹⁹¹: Սա միանգամայն սխալ պնդում է անշուշտ, որով իսպառ ջնջում են այս երկու տարբեր խօսքի մասերի ամենակական՝ տարբերակիչ առանձնայատկութիւնները:

Ի դէպ, անհրաժեշտ է ընդգծել նաեւ, որ Հեղինակը ճիշդ չի ըմբռնել թրակացու այն Հաւաստի նախադրոյթը, որ մակբայը, իբրեւ խօսքի մաս, «անխաղաց» է, այսինքն՝ չթեքուող: Մակբայի ձեւաբանական այս առանձնայատկութիւնը Առաքել Միւնեցիին մեկնում է այն թիւր ենթադրութեամբ, որ իբր թրակացու ասոյթը վերաբերում է մակբայի՝ անունն եւ բայի հետ անբաժան, անմիջապէս յարակից կիրառուելուն. «...վասն այս ասի «անխաղաց», զի ընդ անուանն եւ ընդ բային կապեալ է անշարժ եւ ոչ խաղայ եւ շարժի եւ գնայ ի նոցանէ, այսինքն՝ յանուանէն եւ ի բայէն, վասն որոյ մակբայ ասի, որ է անունն եւ բայ՝ զայս կրկին նշանակեն»¹⁹²:

Ինականաբար՝ «մակբայ» քերականական տերմինը իմաստային բովանդակութեամբ ոչ մի աղերսակցութիւն չի յուշում «կրկնաբայ» բառի նշանակութեան հետ՝ իբրեւ «երկու բայ»: «Նախ ըստ անուանն երկու բայ է, զորում է Միւնեցիին, որպէս ասելն»՝ Եկ, Աիստ կամ գնալ, գործեալ»¹⁹³: Իհարկէ՝ սա արհեստական բացատրութիւն է, որ ոչ մի կերպ չի բացատրում մակբայի խօսքամասային էութիւնը ան միաժամանակ աղակալող շփոթութիւն է բայի հրամայական եղանակի ներկայի հետ: Հարկ է նշել նաեւ, որ «մակբայ» տերմինը ոչ թէ «կրկնաբայ» է նշանակում, այլ՝ «բայի վրայ դրուող», ելնելով յատկանիչի յատկանիչ ցոյց տուող բառերի («այսինքն՝ մակբայների) շարադասական դիրքից բայի յարաբերութեամբ («բայից առաջ, բայի վրայ դրուող» իմաստով):

«Մակբայն» շարադասական դիրքի քննութիւնը նոյնպէս բռնազբօրիկ է Միւնեցու երկում, երբ «մակբայ» տերմին-Հասկացութիւնը նոյնացում է այս դէպքում իբրեւ ստորոգեալ Հանդէս եկող ներգործական սեռի բայի հետ՝ պայմանաւորուած ուղիղ խնդրի նկատմամբ նրա ունեցած առաջադարձում վերջադաս դիրքով: Սա նոյնպէս մի թիւր ըմբռնում է, որ պալին է դեռեւս Դաւիթ Անյաղթից¹⁹⁴, եւ չի յաղթահարում մինչեւ անգամ Առաքել Միւնեցու կողմից: Վերջինս այս առնչութեամբ գրում է. «Իսկ ըստ տեղւոյն մակբայ է, զի նախադաս լինի եւ վերջադաս, որպէս ասելն»՝ շինեմ գայս կամ գայս շինեմ, բերեմ գայս կամ գայս բերեմ»¹⁹⁵: Ի դէպ, նման խճճման արդիւնք է եւ այն, որ «բայ» տերմինը մակբայի քննութեան կապակցութեամբ առհասարակ իմաստադրուում է խօսքամասային իր բուն

185 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 152:

186 Սոյն աշխատութիւնը, էջ 169:

187 Անց, էջ 170:

188 Անց:

189 Անց:

190 Անց:

191 Անց, էջ 171:

192 Անց:

193 Անց:

194 Տե՛ս Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 119: Այս առնչութեամբ տե՛ս նաեւ մեր մի այլ աշխատութիւնը՝ «Վարդան Արեւիցի, Մեկնութիւն քերականի», Երեւան, 1972, էջ 41:

195 Սոյն աշխատութիւնը, էջ 171:

արժէքից եւ, ըստ այդմ, յատկանիշի յատկանիշ ցոյց տուող պարզ կամ արմատական կազմութեամբ բարձր դիտում իբրեւ «բայ», իսկ նրա կրկնաւոր կազմութիւնը՝ «մակբայ»։ «Դարձեալ՝ մակբայ, զի վաղն բայ է, իսկ վաղվաղն՝ մակբայ»¹⁹⁶։ Այս «փաստարկումը» յարմարեցուած է այն կանխակալ դրոյթի ապացուցման համար, որ «մակբայի» բառիմաստային նշանակութիւնը, իբր, «կրկնաբայ» լինելն է։ Այսպիսով, Առաքել Սիւնեցիին խորացնելով այս թիրաբրոնումները յանդում է, ի վերջոյ, անյարբր մի պնդման եւս, որ չունի քերականագիտական որեւէ արդարացում։ Նա դնում է, որքան էլ աւորօրինակ է, որ «մակբայը» նոյնպէս օժտուած է «ամանակային» յարաբերութիւններ արտայայտելու ներուճակութեամբ, ինչպէս եւ բայը։ Ամենակական քերականական իմաստների այս հաւասարեցումը, որոնք, իրականում, բայի եւ մակբայի տարբեր խօսքամասային պատկանելութեան հիմքն են կազմում, զրկում է մակբային իր խօսքամասային ինքնուրոյնութիւնից։ «Դարձեալ՝ մակբայն նշանակ է ամանակի, - գրում է Առաքել Սիւնեցիին, - այսինքն՝ զի որպէս բայ է անցեալն եւ ներկայն եւ ապագայն, այսպէս եւ մակբայն առաւել նշանակ է, զի ասելն՝ ներկայ, անցեալ, ապառնի, - այսոքիկ մակբայ են, զի իւրաքանչիւրքն կրկին բայ է, այսինքն որպէս ասելն՝ ներկայ, անցեալ, ապառնի։ Իսկ ամանակն այս երիս է»¹⁹⁷։ Հարց է ծագում՝ ինչպէ՞ս հասկանալ հեղինակի այս պնդումը, որ նշուած ժամանակներից իւրաքանչիւրը «կրկին բայ» է։ Ի՞նչ՞ որ «ներկան», «անցեալը», «ապառնին» գործողութեան իմաստ՝ ընթացականութիւն արտայայտել չեն կարող, ուստի եւ, իբրեւ քերականական կարգ, բայեր գրում է, որ այս դէպքում «բայ» հասկացութիւնը, Առաքել Սիւնեցու ըմբռնմամբ, բնաւ վերաբերութիւն չունի համանուն քերականական տերմինի հետ, այլ պարզապէս այն «իմաստային առման» նշանակութեամբ է կիրառուած։ Այդ իսկ պատճառով «ներկան» միայն «մէկ բայ» է դիտուում, այսինքն՝ իմաստային մէկ առում ունեցող, որովհետեւ նշում է միայն ընթացիկ մոմէնտը, «անցեալը»՝ «կրկնաբայ» կամ «մակբայ» է համարուում, որովհետեւ թէ՛ տեղի ունեցած փաստ է նշում եւ թէ՛ ներկայի՝ ընթացիկ մոմէնտի նկատմամբ «անցեալ իրողութիւն»։ «ապառնին» նոյնպէս ամանակային երկակի յարաբերութիւն է նշում ըստ մեր հեղինակի, ուստի եւ «կրկնաբայ» է, ակնարկում է թէ՛ ընթացիկը եւ թէ՛ յետագային տեղի ունենալիքը։ «Դարձեալ ասելն՝ ամանակ երկու բայ է, - գրում է Առաքել Սիւնեցիին։ - Դարձեալ ներկայն բայ է, զի մի ներկայ է, իսկ անցեալն՝ մակբայ, զի առեալ է ի ներկայէն եւ է՝ անցեալ։ այսպէս եւ ապառնին երկու է, զի ապառնի է, եւ ներկայ՝ լինելոց է»¹⁹⁸։ Նկատենք, սակայն, որ նման «մեկնաբանութիւնը» քերականագիտական արժէք ներկայացնել չի կարող։

Մակբայի մասին միւս հարցադրումներում Առաքել Սիւնեցիին, իր նախորդների համեմատութեամբ, նոր բան չի աւելացնում առանձնապէս։

Սակայն շողկապի էմբռնութեամբ վերաբերող պարբերային պարփակում է մի շարք ուշագրաւ դիտումներ, որոնք հարստացնում են միջնադարի հայ քերականագիտական միտքը իրենց ճիշդ հարցադրումներով։

Այսպէս, Առաքել Սիւնեցիին շողկապը պատկերաւոր համեմատութեամբ նմանեցնում է հիւսնութեան մէջ «սոսնձի» կամ մեխի («մամար»-ի) դերին հետ, որպիսի պատկերացումը շողկապի խօսքամասային եւ գործառնային միանգամայն ճիշդ ըմբռնում է, թէ՛ եւ չափազանց թանձրացական՝ առարկայական ձեւով։ «Ձոր արինակ ամենայն նիւթ յառաջ պատրաստի եւ սպա կապն, որպէս զլին յառաջ պատրաստեն քան զսոսնձն, եւ զփայտն յառաջ քան զդուսարին, այսինքն զմամարն»¹⁹⁹։ Նկատենք, սակայն, որ հեղինակի ելակէտային այն կանխադրոյթը, որ առաջին հերթին առարկայի («նիւթի») առկայութիւնն է անհրաժեշտ, յետոյ նրա միաւորների կապակցութեան միջոցը կամ առնչակցական յարաբերութիւնները՝ որդեգրուած է գեոետե Դաւիթ Անյաղթից։ Վերջինս գրում է. «Իսկ սա (իմա՝ շողկապը - Լ.Պ.) ոչ պատուոյ քան թէ պիտոյից, առակ իմն՝ յորժամ նիւթ ի միջի կայցէ, ապա պիտի կապն...»²⁰⁰։

Առաւել ընդլայնելով եւ ճշգրտելով Դաւիթի այս հարցադրումը, Առաքել Սիւնեցիին «շողկապի» առաջացումը եւ Թրակացու քերականական աշխատութեանում խօսքի միւս մասերից յետոյ նրա գեոետեումը պայմանաւորուած է համարում նրանով, որ ընդունուած «եթթ» խօսքի մասերը լեզուի բուն «նիւթն» են հանդիսանում եւ այդ պատճառով էլ քերականական համակարգում նախորդում են շողկապին՝ իբրեւ նրանց յարաբերակցումը (հեղինակի արտայայտութեամբ՝ «սոսնձուում») իրացնողին։ «...Այսպէս եւ յառաջագոյն նիւթ պատրաստեաց զեւթն մատուեն բանին, այսինքն՝ զանուն, զբայ եւ զայլն, զայստիկ նիւթ պատրաստեաց եւ զլին սոցա զաղկապն կապ սահմանեաց. զի սա կապեալ է զմիտք ընդ միտք, եւ զբան ընդ բան, զանուն ընդ անուն, եւ զանուն ընդ բայ, եւ զբայ ընդ բայ եւ այլն, վասն որոյ ի վերջոյ դասեցաւ քան զայլսն»²⁰¹։

Իսկ շողկապի քննութիւնը խօսքի մասերի համադրութեան մէջ ամենավերջում ներկայացնելը երբեք ապացոյց չէ այն բանի, ասում է Սիւնեցիին, որ շողկապը առաւել նուստ արժէք ունի քերականագիտութեան եւ առհասարակ լեզուի համար, քան խօսքի միւս մասերը։ Պէտք է նշել, սակայն, որ այս հարցադրումը առկայ է նաեւ նախորդ հայ քերական մեկնիչների երկերում, մինչեւ անգամ Դաւիթի մօտ²⁰²։ Բայց ուշագրաւն այն է այստեղ, որ Առաքել Սիւնեցիին բաժանելով հանգերձ իր նախորդների միանգամայն ճիշդ տեսակէտը, միաժամանակ պաշտպանել է մի շատ արժէքաւոր բնապատմական հայեացք. նա բաժանում է այն գիտականօրէն ճիշդ կուսնումը, ըստ որի մարդն առաջացել է կենդանական աշխարհից յետոյ միայն։ Իսկ այս իրողութիւնը հիմք չի կարող ծառայել այն բանի պնդմանը, որ մարդը «նուստ» համարուի կենդանու համեմատութեամբ՝ պարզապէս պատմականօրէն սրանից յետոյ հանդէս գալու փաստի նկատառումով։ Ընդհակառակն, պատմականութեան տեսակէտից վերջում կենսաբիոլոգիկ մարդը ոչ միայն «անարգ» չէ կենդանուց, այլեւ անհամեմատ մեծարգ է նրանից։ Այդպէս էլ գրում է Առաքել Սիւնեցիին. «...Բայց ոչ ամենայն առաջին պատուական է քան զվերջին...։ Եւ ոչ ամենայն վերջին անարգ, որպէս մարդ յետոյ ստեղծու՝ քան զանասուն, եւ արեգակն՝ քան զաստեղք»²⁰³։

199 Անդ, էջ 176:
 200 Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 120:
 201 Սոյն աշխատութիւնը, էջ 176:
 202 Տե՛ս Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 120:
 203 Սոյն աշխատութիւնը, էջ 176:

Այն ճիշդ պնդումը, որ շաղկապը «կապեալ է զմիտք ընդ միտք, եւ զբան ընդ բան, զանուն ընդ անուն, եւ զանուն ընդ բայ, եւ զբայ ընդ բայ եւ ալլն», Առաքել Միւնեցիին փոխ է առնում, Հիմնականում, Դաւթից՝²⁰⁴ միայն շաղկապի գործառոյթը առաւել ամբողջական ներկայացնելով՝ այստեղ: Եթէ Դաւթի մօտ ոչ մի խօսք չկայ շաղկապի կարեւոր դերի մասին՝ նախադասութիւնները միմեանց յարաբերակցելու առումով, ապա Առաքել Միւնեցիին շեշտում է զբա խիստ կարեւորութիւնը շաղկապի գործառոյթում: Սակայն Առաքել Միւնեցու ակնբախ ինքնուրոյնութիւնը զըր-սեւորում է շաղկապի տրամաբանական յարաբերութիւններ իրացնելու դերի քաջայայտման մէջ, որ շափագանց արժէքաւոր տեսական ընդհանրացման արդիւնք է անշուշտ: Թրակացու այն կանխադրոյթը, որ շաղկապը ծառայում է մտածութիւնները ոչ թէ խառնիխուռն՝ «անկարգ» ձեւով, այլ՝ որոշակի կարգաւորութեամբ («գտրամախոհութիւնն ոճով») զըրսեւորելուն, Առաքել Միւնեցիին մեկնաբանում է գիտական խորութեամբ: Շաղկապը, ասում է նա, նախադասութիւնները այնպիսի ներդաշնակութեամբ է կապակցում իրար հետ, որ անյարբերութիւն չստացուի, ինչպէս Նոզին՝ քարի հետ համեմատելիս, որոնք չունենալով ընդհանրութեան երբեր, անյարբեր ու «անոճ» են: «Իսկ որ ասէ՝ «գտրամախոհութիւնն ոճով», այսինքն՝ իւր կերպովն եւ իւր կարգովն շաղկապէ զբան ընդ բան, - գրում է Միւնեցիին, - որպէս սանյն՝ Նոզի եւ մարմին, եւ ո՛չ սանյ անոճ, թէ՛ Նոզի եւ քար եւ ալլն»²⁰⁵:

Բնութագրական է եւ այն, որ Առաքել Միւնեցիին որոշակի յատկութիւն մտցնելով շաղկապի գործառոյթի բմբռնման մէջ խօսողութեան գործընթացում, իրաւացիորէն նշում է, որ շաղկապը իմբնութեամբ մտածութիւն չի արտայայտում, այլ մախադասութեան անդամները եւ մախադասութիւնները իրար կապակցելով՝ մտածողութեամբ մէջ պարտւորում «անյայտը» յայտնի է դարձնում: Սա կարեւոր ընդհանրացում է, որ բխում է լեզուական իրակութիւնների խորաբնիկ դիտարկումից. «Իսկ որ ասէ, թէ՛ «զմեկնութեան փեռեկումն յայտնէ», - այսինքն՝ զի միտք ընդ միտք եւ քան ընդ քան խառնեալ է՝ գանյայտութիւնն ի յայտ ածէ, բայց գմիտս քանիւն ոչ յայտնէ, այլ գգուգաւորութիւնն խաւսիցն, - այս է սահման շաղկապին»²⁰⁶:

Սակայն հարկ է նշել, որ շաղկապների փաստական զըրսեւորումներն ու տեսակները քննելիս Առաքել Միւնեցիին թոյլ է տալիս վրիպումներ, որոնք յատուկ են նաեւ իրենից առաջ հասնող եկած հայ քերական մեկնիչներին:

Այսպէս, օրինակ, շաղկապի, իբրեւ քերականական կարգի, հետ ոչ մի աղբրասկզբութիւն չունեն վերացութիւն կամ հաւաքականութիւն նշող գոյականների -թիւն անանցի թեքման բոլոր փոփոխականները: Առաքել Միւնեցիին, միւս քերական մեկնիչների նման, հասաստարպէս շաղկապների է համարում ինչպէս բէ, եթէ, զի, բէպետ բուն շաղկապները, այնպէս եւ վերացութիւն նշող գոյականների (-թիւն անանցով կազմուած) թեքուող ձեւոյթները՝ անթեք կամ զրօ ձեւոյթի հետ միասին. օրինակ՝ -թիւն-ը, -թեքման-ը, -թեքմէ-ն եւ -թեքմար-ը: Այդպէս էլ գրում է նա. «Հարցումն. Որպէ՞ս զանազանին ի միմեանց բէ-ն, եթէ-ն, զի-ն, բէպետ-ն, թիւն-ն, թեքմար-ն,

թեքման-ն, թեքմէ-ն»²⁰⁷: Նման շփոթութեան Հիմքը, ըստ երեւոյթին, այն է, որ հայ քերական մեկնիչները տարբերակուած հասկացութիւն չեն ունեցել բուն շաղկապների դրսեւորած բացատապէս վերաբերական յարաբերութիւնների եւ նշուած անանցի թեքմամբ արտայայտուած հոլովական իմաստների նկատմամբ՝ հաւասարութեան նշան դնելով զբանց միջև: Բայց չէ՞ որ շաղկապը, իբրեւ ինքնուրոյն բառ եւ չթեքուող խօսքի մաս, բազմապիսի վերաբերական յարաբերութիւններ է արտայայտում, ըստ որում սարքեր բնոյթի յարաբերութիւններ, քան -թիւն անանցի կազմութեամբ գոյականների թեքումով պայմանաւորուած հոլովական յարաբերութիւնները. ընդ սմին՝ -թիւն անանցն ու նրա թեքուած ձեւերը ոչ թէ ինքնուրոյն բառեր են, ինչպէս շաղկապները, որպէսզի դիտուէին այս կամ այն խօսքի մասին պատկանող միւսերներ, այլ գոյական բառերի քաղաղարմասեր են, որոնցում ոչ թէ Հէնց այդ անանցն է ինքնին քերականական յարաբերութիւնների զըրսեւորում, այլ ներքին թեքման համապատասխան ձայնաւորները, որոնք արտաքին թեքման վերջաւորութիւնների արժէքն ունեն: Հետեւաբար՝ նշուած ձայնաւորի թեքմամբ պայմանաւորուած բոլոր փոփոխականները առանձին վերցրած ներկայացնելը իբրեւ «շաղկապներ» արհեստական է եւ բռնաձիգ: Բայց նման մտեցման ելակէտը, ամենայն հաւանականութեամբ, եղել է այն, որ թէ՛ շաղկապները եւ թէ՛ թեքուող ձեւոյթները ընդհանրապէս բառերի յարաբերութիւններ են արտայայտում, առանց, սակայն, յստակ ըմբռնում ունենալու այդ յարաբերութիւնների էական սարքեր բնոյթի մասին, որը նրանց սահմանազատման ու տարբերական հիմքն է կազմում: Այսպէս, եթէ շաղկապները նիւթական իմաստից զուրկ ստիկ սպասարկու բառեր են, որոնք, իբրեւ լեզուի քերականական միջոցներ, մի դէպքում համադասական յարաբերութիւններ են իրացնում համագոր անդամների եւ նախադասութիւնների միջև, միւս դէպքում՝ ստորադասական յարաբերութիւններ բարդ նախադասութեան բաղադրամասերի միջև, ապա գոյականի թեքուող ձեւոյթի փոփոխականները, անբաժան մասը լինելով նիւթական, ըստ որում առարկայական իմաստ ունեցող բառերի, վերջիններս բացատապէս հոլովական յարաբերութիւններն են իրացնում՝ տուեալ լեզուի կառուցուածքային տիպով պայմանաւորուած խնդրառական եւ համաձայնական պարտադիր եւ անխուսափելի պահանջների թելադրանքով: Ըստ որում, իբրեւ քերականական միջոցներ, ներքին թեքման ձեւոյթները, իրենց գործառոյթի տեսակէտից, նոյնն են, ինչ արտաքին թեքման ձեւոյթները, ուստի եւ հետեւողական լինելու դէպքում՝ վերջիններս են պէտք է դիտուէին «շաղկապներ», որով քերականական ըմբռնումների ճապարկութիւնը աննեղիթորէն կը խորացուէր: Բայց սակ, թէ Առաքելը չի ըմբռնել «թիւն» անանցով կազմուած գոյականների թեքման հոլովական իմաստները՝ ճիշդ չէր լինի: Նա շատ լաւ ըմբռնել է զբանք՝ գրելով. «Իսկ թիւնն զիրն նշանակէ, որպէս սանյն՝ սրբութիւն, արդարութիւն, մարդկութիւն, արքայութիւն: Իսկ թեքմանը՝ որ այլ ինչ ընդ նմա լինի, այսինքն՝ գալուստեամբ, ազնուութեամբ, որպէս թէ՛՛ զգաւորութիւնն ընդ իւր ունի: Իսկ թեքմանը՝ որ վասն նորա այլ ինչ լինի, որպէս սանյն՝ «վասն արդարութեան քո արար քեզ Աստուած գայս ինչ, որպէս դարձ արեգակունց վասն Եգիպտոս քաղաքի»: Իսկ թեքմէ հոլովական է, որպէս՝ ի սրբութիւն, ի քաղաքի»²⁰⁸: Սակայն նրա վրիպումը ոչ թէ այս է, այլ

204 Տե՛ս Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 120:

205 Սոյն աշխատութիւնը, էջ 177:

206 Անց:

207 Անց, էջ 178:

208 Անց, էջ 179:

այն, որ ե՛լ շաղկապների, ե՛լ «թիւն» անանցի թերուով, ե՛լ անթեք ձեւով դրեւորուած առհասարակ յարաբերութիւններն են Առաքել Սիւնեցու համար մեկնակէտ ծառայել՝ «շաղկապների» տեսակների նման խմբաւորման հիմքում:

Շաղկապները շփոթել է մեր հեղինակը նաեւ այլ խօսքի մասերին պատկանող բառերի հետ: Այսպէս՝

ա) դերանունների հետ, ըստ որում՝

հարցական դերանունների հետ, ինչպէս՝ «Քանի՞ ոչխար դոյ քեզ» (էջ 179): «Զի՞ցն է այդ ի ձեռին քում», «Է՞ր եղէ բանական», «Ո՞ւմ ժողովեմ զմթերս իմ» (էջ 180):

յարաբերական դերանունների հետ, ինչպէս՝ «Որք ննջեցին ի Քրիստոս, կորեան արդեաւք» (անդ):

ցուցական դերանունների հետ, ինչպէս՝ «յայս», «այս» (անդ):

բ) եղանակաւորող բառերի հետ, ինչպէս՝ «Արդեաւ եթէ առնէր որ զմեզս՝ սխալուք էր նմա», «Ապա ուրեմն այնպէս իցէ, ապաքէն մարմին եմ», «Ապաքէն պտուղ էր» (անդ):

գ) մինչեւ անգամ բառակազմական անանցների հետ, ինչպէս. «Իսկ թարմատարքն զփոքրկութիւնն ցուցանեն, զի որպէս նկար ի վերայ հանդերձի կամ որպէս ճամուկ ի մեկնոցի, այսպէս եւ սա միայն զարդ էրանին, եւ ո՛չ թէ գոյութեանն ինչ առաւելութիւն, զի այս է՝ իկ, մակ, իրր, փոքրիկ, եր, մակ սանչն» (էջ 180):

Մնացած պարբերութիւններում, ինչպիսիք են՝ «Յաղագս առոգանութեան», «Յաղագս ուրից», «Յաղագս խոնարհմանց թալից», թէեւ մասնակի ինքնատիպութիւն հանդէս բերում է Առաքել Սիւնեցին, սակայն արժարժուած հարցերի թէկուզեւ իւրովի մեկնաբանութիւնը տեսական ուշադրաւ արժէք չեներկայացնելու պատճառով այստեղ քննութեան չենք առնում դրանք:

Ինչպէս քերականական այս Յուշարձանի քննութիւնը ցոյց տուեց, Տաթևի համալսարանի «ռեկտոր» Առաքել Սիւնեցու «Համառատ լուծմունք քերականութեան» աշխատութիւնը արժէքաւոր ցերեղութեամբ ունի միջնադարի հայ քերականագիտական մտքի պատմութեան մէջ գերազանցապէս տեսական հարցադրումների խորութեամբ ու համակողմանիութեամբ, որոնք հարստացնում եւ ամրոջացնում են լեզուի ու քերականութեան փիլիսոփայական ընդհանրացումների տեսակարար կշիռը գիտութեան տուեալ բնագաւառում:

Քննական բնագրի կազմման հիմքում, համեմատական ուսումնասիրութեամբ, դրել ենք Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերը, որոնք միաժամանակ համապատասխանութիւններ են հանդիսանում տարրնթերցումներում մեր օգտագործած պայմանական լատիներէի տառերի: Դրանք են.

A - 55, թթ. 406ա-466ա, Քերականական, իմաստասիրական, մարդակազմական եւ աստուածաբանական երկերի ժողովածու, գրիչ՝ Գրիգոր Տարօնացի, ստացող՝ Յովաննէս Համալէնցի, վայր՝ Երզնկայ, ժամանակ՝ 1489 թ., թերթ՝ 495, բոլորգիր:

B - 530, թթ. 78ա-116բ, Քերականական, բառարանագրական եւ տոմարական երկերի ժողովածու, գրիչ-ստացող՝ Ստեփաննոս Վարապետի, վայր՝ Ջազալանք, ժամանակ՝ ԺՂ դ., թերթ՝ 140, բոլորգիր:

C - 2334, թթ.՝ 4ա-53բ, Քերականական եւ իմաստասիրական երկերի ժողովածու, գրիչ եւ վայր՝ անյայտ, ժամանակ՝ ԺԷ դ., թերթ՝ 369, նօտրգիր:

D - 3883, թթ.՝ 213բ-288ա, Քերականական եւ իմաստասիրական երկերի ժողովածու, գրիչ եւ վայր՝ անյայտ, ժամանակ՝ ԺԶ դ., թերթ՝ 383, բոլորգիր:

E - 1770, թթ.՝ 262ա-295ա, Պատմագրական, աշխարհագրական, տոմարական, քերականական եւ աստուածաբանական երկերի ժողովածու, գրիչ՝ Աստուածատուր զպիր, ստացող՝ Հայրապետ Զուղայեցի, ժամանակ՝ 1589 թ., թերթ՝ 399, նօտրգիր:

F - 2332, թթ.՝ 3ա-31ա, Քերականական, իմաստասիրական, բնագիտական եւ դեղաբուսական երկերի ժողովածու, գրիչ՝ անյայտ, ստացող՝ Եսայի Վանքեցի, վայր՝ անյայտ, ժամանակ՝ ԺԷ դ., թերթ՝ 278, նօտրգիր:

G - 2333, թթ.՝ 3ա-46ա, Քերականական եւ իմաստասիրական երկերի ժողովածու, գրիչ եւ վայր՝ անյայտ, ժամանակ՝ ԺԷ դ., թերթ՝ 417, նօտրգիր:

H - 2380, թթ.՝ 390ա-446բ, Քերականական երկերի ժողովածու, գրիչ՝ Եսայի վրդ. Վարդերես Լեհըցի, վայր՝ էջմիածին, ժամանակ՝ 1635, թերթ՝ 447, նօտրգիր:

I - 1689, թթ.՝ 521բ-602ա, Քերականական եւ իմաստասիրական երկերի ժողովածու, գրիչ՝ Վարդերես Լեհացի, վայր՝ Կամենից, ժամանակ՝ ԺԷ դ., թերթ՝ 628, նօտրգիր:

Երեւան, 30-րդ Դեկտեմբերի,
1972 թ.:

Լ.Գ. ԽԱԶԵՐԵԱՆ

**ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.
ՀԱՄԱՌԱԻՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ
(ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ)**

ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

ՀԱՄԱՌԱՒՏ ԼՈՒԾՄՈՒՆՔ

- Արարեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց եպիսկոպոսէ, աշակերտի
 եռամեծի Գրիգորի քաջ հոետորի, ի խնդրոյ երկուց ոմանց աղնուա-
 5 կանաց. նախ՝ գերիմաստ եւ քաջ վարդապետի Եգեկիէլի Կապանեցոյ,
 եւ երկրորդ՝ մեծահանճար գրոց աշակերտեալ անձին Շմաւոնի քահա-
 նայի, որք թախանձեցուցին զմեզ յայս գործ: Եւ մեք ըստ ջերմե-
 ուանդ խնդրոց նոցին արարաք լուծումն Քերականութեանս ի յորդո-
 10 լումն ուսումնականաց բանաւոր արհեստից, մատուակել բանաւոր
 մտաց զանազան հանճարս՝ ի մեկնութիւն Քերականութեանս պէսպէս
 յատկութեամբ պարզեալ, վասն զիւրալուր հասկանալոյ զխորութիւն
 բանից քերականին՝:

ՅԱՂԱԳՍ ՆԱԽԵՐԳԱՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ՝ ՈՐ ԱՍԷ՛ ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ՝:

- 15 Նախ պարտ է զիտել, զի ամենայն խորագիր ցուցանէ զասացող
 գրոցն, որպէս այն, որ ասի՝ «Ներածութիւն Պորփիրի»՝ եւ այլն:
 Իսկ աստ վասն է՞ որ ոչ յայտնէ, թէ յումէ՞ ասացաւ քերականս:– Եւ այս
 վասն տասն պատճառի. նախ՝ զի կամի զբան իմաստիցն յայտնել, եւ
 ո՛չ՝ զգրողն, այլ զիմաստքն նախադասէ զրոզին, զի նախ իմացաւ եւ

1 B չիբ՝ մինչեւ էջ 91–ի 9–րդ սողի «երա-
 միչտն» բառը ներառեալ: Պարզապէս
 թերթեր են ընկած:

2 CDGH չիբ՝ Արարեալ

3 CDEFGH Առաքելէ

4 CDEFGH չիբ՝ աշակերտի

4 E եռայմեծի

4 AE հեռոտորի

4 CDEFGH չիբ՝ «եռամեծի»... մինչեւ 10րդ
 սողի «հանճարս» բառը ներառեալ:

4–5 E չիբ՝ ազնուականաց, նախ՝ գերի-
 մաստ եւ

5 A Կապանեցոյ, E Կապանացոյ

6 ACDEFGH Շմաւոն

7–8 E չիբ՝ որք թախանձեցուցին զմեզ յայս
 գործ: Եւ մեք ըստ ջերմեանդ խնդրոյ
 նոցին

8–10 E չիբ՝ Քերականութեանս ի յորդո-

լումն ուսումնականաց բանաւոր արհես-
 տից, մատուակել բանաւոր մտաց զա-
 նազան հանճարս՝ ի մեկնութիւն Քերա-
 կանութեանս պէսպէս յատկութեամբ
 պարզեալ:

9 A մատուակել

10 DI հասկակալոյ

12 H բանին

13 CD I ԱՂԱԳՍ

13 E ՆԱԽԵՐ

13 HI ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ

15 G զաս փխ զասացող, I զասացողն

17 CDFHI յումէ՞, E յորմէ՞

18 E չիբ՝ կամի

18 E զբանն

19 CFGH [ոչ] զգրողն, I զրոզն

19 DI զրոզին

ապա գրեաց, վասն որոյ ասէ՝ «Յաղագս քերականութեան»: Երկրորդ՝
 զի քերականութիւնս է, որ այժմ ընդ մեզ խաւսի, եւ ո՛չ՝ գրողն, զոր
 չէ ի միջի: Իսկ բանքս այժմ է եւ աստ: Երրորդ՝ զի այլքն զգրողքն
 յայտնեցին եւ ոչ զբանն, թէ զի՞նչ կայ ի գիրքն, զի ասի «Ներածու-
 5 թիւն Պորփիրի», եւ ո՛չ ցուցանէ, թէ զի՞նչ է ներածեալն: Իսկ սա՝
 զոր ինչ կայ ի գիրքս՝ միով բանիւ յայտ առնէ, թէ յաղագս քերա-
 կանութեան է գիրքս: Չորրորդ՝ զի ուսուցանէ մեզ, թէ մի՛ քննել, թէ
 ո՞վ է ասացեալ զբանն, այլ տե՛ս, թէ զի՞նչ զարուսթիւն կայ ի բանն,
 որպէս եւ Եփրեմ՝ զարմացաւ ընդ բանս պոռնիկ կնոջն եւ գրեցաւ
 10 նոյն ի խրատ մեզ, որ ասաց, թէ կնոջն պարտ է հայել ի մարդն, զի
 յառնէ ստեղծաւ, իսկ մարդոյն ո՛չ է պարտ հայել ի կինն, այլ յերկիր՝
 ուստի առաւ: Հինգերորդ՝ զի այլ գրեանքն իւրաքանչիւրքն ի միջէ
 ուսմանէ ասացաւ, իսկ քերականս՝ ո՛չ այսպէս, այլ ի բազմաց ասացեալ,
 վասն այնորիկ ոչ յիշէ զմի ոմն: Վեցերորդ՝ զի քերականութիւնն
 15 «գրականութիւն» ասի, եւ ամենայն գրողք եւ ամենայն ընթերցողք եւ
 ամենայն ուսումնականք «գրականք» կոչին, եւ ոչ թէ միայն մի ոք,
 վասն որոյ զմի ոմն ոչ յիշէ: Եւթներորդ՝ զի ասէ յաղագս քերականու-
 թեան, որ զընդհանուրն ցուցանէ, վասն այնորիկ զմասնաւոր ոմն ոչ
 յիշէ: Ութերորդ՝ զի ցուցանէ, թէ նա, որ յանցեալն գրեաց քերա-
 20 կանն, ոչինչ առաւել [է] քան զայն, որ յապագայն ուսանին, զի հա-
 սարակ քերթողք կոչին: Իններորդ՝ զի քերականս հոմանունն է, այ-
 սինքն՝ զի քերական կոչի գիրքս եւ քերական կոչի մարդն, եւ քերա-
 կան կոչի գրողն եւ ընդհանուր արհեստն քերականութեան, վասն
 որոյ զմիինն միայն ոչ յիշէ, այլ ասէ՝ «Յաղագս քերականութեան»:
 25 Տասներորդ՝ զի որպէս քերական է առաջին սահմանողն, նոյնպէս եւ

- 2 G գրողն
- 3 ADFG չի՛ք՝ զի
- 3 D մէ փս է
- 3 E գրողք, G գրողքն
- 4 AE կա
- 4 AE գիրք
- 4 սաէ
- 5 CDFGHI ներածելն
- 6 AF որ փն որր
- 6 AFG զինչ
- 6 AE կա
- 6 E գիրկս
- 6-7 I քերականութիւն
- 7 E գիրկս
- 8 ACDHI կա
- 9 A չի՛ք՝ եւ [Եփրեմ]
- 9 A չի՛ք՝ Եփրեմ
- 9 H չի՛ք՝ եւ գրեցաւ
- 10 G չի՛ք՝ նոյն ի խրատ մեզ, որ ասաց,
 թէ կնոջն
- 10 AC չի՛ք՝ է
- 11 G հայել
- 11 E առնէ
- 11 E չէ փն ոչ է
- 11 հայել
- 11 ACH երկիր
- 12 AH եւ [այլ]

- 13 D բազումաց
- 14 EH վասն այն
- 14 A քերականութիւն
- 15 G գրողք
- 15 E ընթեմն ածողքն փն ընթերցողք,
 G ընթերցողք
- 16 E ուսումնականքն
- 16 A գրական
- 17 E չի՛ք՝ որոյ
